Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը (կոմպետենցիաների զարգացման շրջանակ)

Partnership for Good Governance

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը (կոմպետենցիաների զարգացման շրջանակ)

Հրատարակության համար նախատեսված տարբերակ

Փիթեր Բրետ, Պասկալ Մամփոինթ-Գելարդ և Մարիա Հելենա Սալեմա
Ներդրումներ Վիրջիլիո Մեիրա Սոարեսի, Վեդրանա Սպաջիկ-Վրկասի, Սուլև Վալդմաայի և Ուլրիք Վոլֆ-Ջոնթոֆսոնի կողմից

Խմբագիր՝ Սարահ Քիտինգ-Չեթվինդ

Եվրոպայի խորհրդի հրատարակություն

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականության տեսանկյունը եւ Եվրամիությունը:

Այս հրատարակության հայերեն թարգմանությունը եւ տպագրությունը ֆինանսավորվել է Եվրամիության հետ համատեղ «Արեւելյան գործընկերության երկրներում մարդու իրավունքների կրթության եւ ժողովրդավարական քաղաքացիության խթանում» ծրագրի միջոցով:

Բոլոր իրավունքները պահպանված են: Այս հրատարակության ոչ մի մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել, կամ տարածվել որևէ ձևով կամ էլեկտրոնային (լազերային կրիչներ, համացանց և այլն), կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով, առանց Եվրոպայի Խորհրդի Հաղորդակցման և Հետազոտությունների տնօրինության հանրային տեղեկատվության և հրատարակությունների բաժնի նախնական գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Շապիկի ձևավորումը՝ Փաստաթղթերի և հրատարակությունների պատրաստման վարչություն (ՓՀՊՎ), Եվրոպայի խորհուրդ
Մանրակերտ՝ Օղամ/Մուրոու

Եվրոպայի խորհրդի հրատարակություն
http://book.coe.int
F-67075 Strasbourg Cedex

© Եվրոպայի խորհուրդ, 2009 թ. Անգլերեն հրատարակություն: *How all teachers can support citizenship and human rights education: a framework for the development of competences*
© Եվրոպայի խորհուրդ, 2017 հայերեն թարգմանությունը

Բովանդակություն

Ամփոփ նկարագրություն 5

Երախտագիտություններ 7

1. Նախաբան 9

2. Ներածություն 13

3. Կոմպետենցիաների ընդհանուր նկարագիրը և փաստաթուղթը 17

4. Ա խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքներ և ըմբռնում 21

5. Բ խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ն զարգացնող մանկավարժական և կրթական գործունեություն դասարանում և դպրոցում 33

6 Խումբ Գ. մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը գործընկերության և համայնքային ներգրավվածության միջոցով 51

7. Դ խումբ. մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում 65

8. Այլ շահագրգիռ կողմերի համար ռեսուրսներ 75

9. Եզրակացություն 83

10 Հավելված 85

11. Հղումներ և ռեսուրնսեր 89

Ամփոփ նկարագրություն

«Ապրել և սովորել ժողովրդավարության պայմաններում» Եվրոպայի խորհրդի (ԺՔԿ/ՄԻԿ) ծրագրի (2006-09 թթ.) ընթացիկ փուլի համատեքստում սույն հրատարակությունը հանդիսանում է «կրթության ոլորտում և քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ համայնքների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցող ուսուցիչների վերապատրաստման կարողությունները հզորացնելու, անդամ պետություններում և դրանցից դուրս դրանք զարգացնելու» հիմնական նպատակի արձագանքը:

Ակտիվ մասնակցային դասավանդման միջոցով ժողովրդավարական արժեքները խթանելու հարցում ուսուցիչների դերը չափազանց կարևորվում է: Ժողովրդավարական քաղաքացիության կրթության (ԺՔԿ) և մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ) հաջողությունը էապես պայմանավորված է մանկավարժներով և ուսուցիչներով հատկապես ներկայումս, երբ առաջ են եկել սոցիալական նոր միտումներ, առավել խորը փոխադարձ կախվածություն և փոփոխություններ, ինչպես տեղական համայնքների, այնպես էլ գլոբալ մակարդակով:

Սույն հրատարակության մեջ ներկայացված են այն հիմնական կոմպետենցիաները, որոնք պայմանավորում են դասապրոցեսին, ինչպես նաև համայնքային ներգրավվման աշխատանքներում ԺՔԿ/ՄԻԿ-ն իրականացնելու ուսուցիչների հիմնական կարողությունները: Այն նախատեսված է հանրակրթական ուսումնական հաստատությունում դասավանդող բոլոր ուսուցիչների համար (ոչ միայն ԺՔԿ/ՄԻԿ մասնագետների, այլև բոլոր առարկաների գծով ուսուցիչների). այն նաև նախատեսված է բարձրագույն կրթության, ինչպես նաև այլ կրթական հաստատություններում դասավանդող մասնագետների համար:

Չորս աստիճանական խմբերում ներկայացված են մոտ 15 կոմպետենցիաներ, որոնք համապատասխանում են այն իրավիճակներին և խնդիրներին, որոնք ուսուցիչները և դասավանդողները կհանդիպեն ԺՔԿ/ՄԻԿ-ն իրականացնելիս.

- ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և ըմբռնումը,
- մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը դասարանում և դպրոցում. (պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում),
- մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը համագործակցության և համայնքային ներգրավվածության միջոցով (ԺՔԻ/ՄԻԿ-ը՝ գործողության մեջ),
- մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում:

Կոմպետենցիաների յուրաքանչյուր խումբ համապատասխանում է աշխատության մեկ բաժնի, որտեղ տվյալ կոմպետենցիաները մանրամասն նկարագրված են և բերված են օրինակներ: Ընթերցողը կարող է գտնել առաջընթացի աղյուսակներ յուրաքանչյուր կոմպետենցիայի համար. այս գծապատկերների նպատակն է օգնել ուսուցիչներին և դասավանդողներին որոշելու, թե որ մակարդակին է համապատասխանում իրենց մասնագիտական գործելակերպը և դրանով սահմանելու, թե առաջնահերթ որ կողմերին իրենք պետք է ուշադրություն դարձնեն: ԺՔԿ/ՄԻԿ գործելակերպի վերաբերյալ համապատասխան ռեսուրսներ կարող են գտնել նաև այլ շահագրգիռ կողմեր՝ քաղաքականություն մշակողներ, դպրոցի տնօրեններ և բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Այս ձեռնարկում հավաքված են Եվրոպայի խորհրդի ԺՔԿ/ՄԻԿ ծրագրով վերջին մի քանի տասնամյակի ընթացքում մշակված նյութերի լայն շրջանակ: Միևնույն ժամանակ ձեռնարկը հանդիսանում է ԺՔԿ/ՄԻԿ մասին Եվրոպայի խորհրդի երեք կարևոր այլ հրատարակությունների ուղեկից մասը:

- Ժողովրդավարական քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության թեմաներով նյութեր՝ ուսուցիչների վերապատրաստման համար (Հադլստոն, Թ. (խմբ.), 2005 թ.), որտեղ ներկայացված է կառավարության մարմիններին ու կրթական ոլորտի ներկայացուցիչներին ուղղված առաջարկություններ՝ ԺՔԿ/ՄԻԿ թեմաներով ուսուցիչների վերապատրաստման համակարգային և համակարգված մոտեցումների անհրաժեշտությունը ճանաչելու մասին,

- Դպրոցների ժողովրդավարական կառավարում (Բաքման, Ե. և Թրաֆորդ, Բ., 2007 թ.), որտեղ ուսումնասիրվում են ԺՔԿ/ՄԻԿ վերաբերող հանրակրթական համակարգի մոտեցումները և առաջնորդության խնդիրները դպրոցներում:
- Դպրոցներում ժողովրդավարական քաղաքացիական կրթության որակի ապահովման գործիք (Բիրզեա, Ս, և այլոք, 2005 թ.), որը հանդիսանում է ուղեցույց փաստաթուղթ/գործիք և ներառում է ԺՔԿ/ՄԻԿ-ի նկատմամբ որակի ապահովման սկզբունքներ ու գործընթացներ:

Ինչպես կարող են ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը

Մենք հույս ունենք, որ այս նյութերի պիլոտային կիրառման միջոցով կընդլայնվեն ուսուցիչների հմտություններն ու գիտելիքները՝ լուծելու ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող հաճախ դժվար և վիճահարույց խնդիրները և ստեղծելու կրթական մի միջավայր, որտեղ հնարավոր է լավագույնս կրթել երիտասարդներին՝ դառնալու վաղվա պատասխանատու, ակտիվ և ներգրավված քաղաքացիներ:

Երախտագիտություններ

Այս աշխատանքը մեկ տարվա մտքի գրոհի, խորհրդակցությունների և մշակման ջանքերի ընդհանուր արդյունքն է: Ուստի կարևոր է երախտիքի խոսք ասել այն անձանց, որոնք ներդրում են ունեցել այս ձեռնարկի ստեղծման գործում, ինչպես նաև ընդգծել նրանց կատարած կոնկրետ աշխատանքները:

Ձեռնարկի նախագծի վրա աշխատող սկզբնական խումբը առաջին անգամ հանդիպել է 2007 թվականին՝ Փիթեր Բրետի, Վիրջիլիո Մեիրա Սոարեսի, Մարիա Հելենա Սալեմայի, Վեդրանա Սպաջիկ-Վրկասի և Սուլև Վալդմաայի կազմով:

Չնայած սկզբում որոշված չէր, թե ով պետք է լինի հիմնական հեղինակը, այնուամենայնիվ, առաջին խորհրդակցությունից հետո խումբը նշանակեց Փիթեր Բրետին, որպես ձեռնարկի մշակման գործում առաջատար դեր ունեցող անձ: Ուստի, նա պատասխանատու էր ստորև չնշված բաժինները պատրաստելու համար և ծրագրի ամբողջ ընթացքում կատարել է խմբագրի առաջատար դեր:

Վիրջիլիո Մեիրա Սոարեսը ապահովել է Եվրոպայի խորհրդի բարձրագույն կրթության ոլորտի ծրագրերի հետ փոխլրացվածությունը և մշակել է բարձրագույն կրթությանը վերաբերող բաժինները:

Մարիա Հելենա Սալեման մշակել է թիվ 5, 9, 13 և 14 կոմպետենցիաները և մասամբ պատասխանատու է ձեռնարկի այլ բաժինների համար, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման թեմաների մեջ ԺՔԿ-ի բաղադրիչներ ներառելու, հետազոտելու և տեսական նյութեր պատրաստելու համար: Ամբողջ տարվա ընթացքում նա անմիջական մասնակցություն է ունեցել գործընթացում:

Վեդրանա Սպաջիկ-Վրկասը ներդրում է ունեցել ձեռնարկի ընդհանուր հայեցակարգային դարձնելու հարցում:

Սուլև Վալմաան ներդրում է ունեցել թիվ 1 և 8 կոմպետենցիաների մշակման գործում և ապահովել է կապը Եվրոպայի խորհրդի՝ ուսուցանող ուսուցիչների և կրթության ոլորտում դերակատարների, Պեստալոցի վերապատրաստման ծրագրի հետ:

2008 թվականի սեպտեմբերի Ուլրիք Վոլֆ-Ջոնթոֆսոնը միացավ փորձագետների խմբին և ներդրում ունեցավ բարձրագույն կրթության և նախնական վերապատրաստման փուլի բաժինների մշակման աշխատանքներին:

Պասկալ Մամփոինթ-Գելարդը Պեստալոցի ԺՔԿ խմբի հետ մանրամասն խորհրդակցություններից հետո 2008 թվականի մարտին լուրջ վերամշակման ենթարկեց ձեռնարկը՝ թե' կառուցվածքային և թե' լրացուցիչ բովանդակային առումով:

Եվրոպայի խորհրդի դպրոցական և արտադպրոցական վարչության ղեկավար Օլոֆ ՕլաֆսդՕթիրը ապահովեց ձեռնարկում մարդու իրավունքների ամուր հիմք, ինչպիսին է օրինակ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Ջոզեֆ Հուբերը Պեստալոցի ծրագրի միջոցով աջակցել է ձեռնարկի մշակմանը: Հեզեր Կուրանտն և Շարոն Լոուին տրամադրել են վարչական աջակցություն:

Եվ, ի վերջո, ես կցանկանայի շնորհակալության խոսք ասել ԺՔԿ համակարգողներին, Հարավ-արևելյան Եվրոպայի ԺՔԿ ցանցին և Ժողովրդավարական քաղաքացիության կրթության հարցերով հատուկ խորհրդատվական խմբին (ED-EDCHR), մասնավորապես նրա նախագահ Ռեինհիլդ Օտտեին, որը տրամադրել է արժեքավոր ընթացիկ աջակցություն և խորհրդատվություն:

Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել բոլոր հեղինակներին և համահեղինակներին: Ինձ համար մեծ բավականություն էր այս ծրագրի պատասխանատուն լինելը, և ոչ միայն այն պատճառով, որ հավատացած եմ, որ վերջնական արդյունքում այն օգտակար է լինելու, այլև որովհետև գործընթացը ինքնին արժեքավոր հնարավորություն էր աշխատելու կրթության ոլորտի նվիրված, փորձառու և նորարար մանկավարժների հետ:

Սարահ Քիտինգ-Չեթվինդ
Ծրագրի թիմի ղեկավար և խմբագիր
Ստրասբուրգ, 2008 թվականի դեկտեմբեր

1. Նախաբան

Համընդհանուր ճանաչում ունի այն, որ ուսուցիչները չափազանց կարևոր դեր են կատարում ակտիվ և ընդհանուր մոտեցումների միջոցով ժողովրդավարական արժեքների խթանման գործընթացում: Ժողովրդավարական քաղաքացիության կրթության (ԺՔԿ) և մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ) հաջողությունը էապես պայմանավորված է դասավանդողի մասնագիտական հմտությամբ:

Անկասկած սա է պատճառը, որ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների կրթության նախարարները Եվրոպայի կրթության նախարարների մշտական համաժողովի եզրափակիչ հռչակագրում (Ստամբուլ, 2007 թվականի մայիս) քաղաքացիության կոմպետենցիան նշեցին որպես ժողովրդավարական մշակույթը և սոցիալական համախմբվածությունը խթանող հինգ կոմպետենցիաներից մեկը (մյուս կոմպետենցիաներն էին՝ միջմշակութային կոմպետենցիան, բազմալեզու կոմպետենտությունը, սոցիալական պարտավորությունը, համերաշխության վրա հիմնված հեռանկարը և բազմահեռանկարային մոտեցումը): Այս ձեռնարկը նախարարների մակարդակով ընդունված հռչակագրի արձագանքն է և, ուստի, քաղաքական հզոր հիմնավորում ունի:

2008 թվականի հոկտեմբերի 3-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը կատարեց մեկ քայլ առաջ՝ ընդունելով «Ուսուցիչների ուսուցման միջոցով ժողովրդավարության մշակույթը և մարդու իրավունքները խթանելու մասին» 1849 (2008) առաջարկությունը:[1]

> Վեհաժողովը, այլ բաների թվում, առաջարկեց նաև, որ
>
> Նախարարների կոմիտեն կոչ անի կառավարություններին և անդամ պետությունների համապատասխան մարմիններին լավագույնս հաշվի առնել Եվրոպայի խորհրդի այս ոլորտում ունեցած փորձառությունը և փորձագիտությունը, և մասնավորապես՝
>
> …
>
> 5.2. ժողովրդավարության և մարդու իրավունքների մշակույթը դասապրոցեսում խթանելու համար պահանջվող կոմպետենցիաները պետք է ներմուծվեն բոլոր առարկաների գծով ուսուցիչների կրթական ուսումնական ծրագրերում:

Քաղաքական շրջանակներում այս նոր գործիքը պետք է դիտարկել նաև 1997 թվականից ի վեր Եվրոպայի խորհրդի ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում միջկառավարական աշխատանքի լայն համատեքստում:

ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում Եվրոպայի խորհրդի աշխատանքի (Ապրել և սովորել ժողովրդավարության պայմաններում (2006-09 թթ.)) ներկայիս փուլի հիմնական նպատակների և խնդիրների արձագանքն է՝

> կրթության ոլորտում քաղաքացիական հասարակության ձևավորումը, մասնավորապես՝ համայնքների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև անդամ պետությունների միջև համագործակցությունը, ուսուցիչների վերապատրաստման ընթացքում կարողությունների հզորացումը և զարգացումը:[2]

Եվրոպական շատ երկրներում հաճախ տարաձայնություն կա ԺՔԿ/ՄԻԿ վերաբերյալ պաշտոնական քաղաքականության և հռետորության ու դպրոցներում իրականացվող իրական գործելակերպի միջև:[3] Եվրիդայս հարցման մեջ նշվում է, որ չնայած քաղաքացիական կրթությունը լայն տարածում ունի դպրոցական ուսումնական ծրագրերում, այնուամենայնիվ միայն փոքրաթիվ եվրոպական երկրներում է այն հանդիսանում դասավանդման սկզբնական մակարդակի բաղադրիչ:[4]

---

1. Վեհաժողովի կողմից 2008 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունված տեքստ (36րդ նիստ):
2. Եվրոպայի խորհուրդ, Ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթություն, *Գործողությունների ծրագիր* (2006-2009 թթ.) *«Ապրել և սովորել ժողովրդավարություն բոլորի համար»*, DGIV/EDU/CAHCIT (2006թ.) 5, 2006 թվականի մարտի 14, 3
3. Նավալ, Փրինթ և Իրիատ (2003 թ.) *Քաղաքացիական կրթությունը Իսպանիայում. քաղաքականության քննադատական վերլուծություն*, (առցանց) *Հասարակական գիտությունների կրթության ամսագիր*, և Օսլեր և Ստարքի (2005 թ.) Տե՛ս 10-րդ գլխի «Հղումներ և ռեսուրսներ» բաժինը:
4. Եվրիդայս, *Քաղաքացիության կրթությունը Եվրոպայի դպրոցներում,* 2005 թ.

Վերջերս սահմանված մարտահրավերներից մեկը «ուսուցիչների՝ թե' նախնական և թե' առանց աշխատանքի ընդհատման առավել արդյունավետ և համապարփակ վերապատրաստում կազմակերպելն է».

> Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանում ՄՔԿ/ՄԻԿ-ի թեմաներով ուսուցիչների վերապատրաստումը ունի սահմանափակ, անկանոն բնույթ. Վերապատրաստումների հիմնական մասը ընդհանուր բնույթի նախնական վերապատրաստումներն են : Սա չի նպաստում ուսուցիչների՝ արդյունավետ ՄՔԿ/ՄԻԿ գործելակերպ զարգացնելու կարևոր գործառույթին: Լուրջ հարցեր են առաջ գալիս՝ կապված շատ երկրներում քաղաքացիական կրթության բարեփոխումներին առնչվող առավել ակտիվ, ընդհանուր խթանող մոտեցումներ ձևավորելու, ուսուցիչների կարողության զարգացման և նրանց աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:[5]

Այս հրատարակության մեջ հավաքված են Եվրոպայի խորհրդի ԺՔԿ ծրագրով վերջին մի քանի տասնամյակի ընթացքում մշակված նյութերի լայն շրջանակ և միևնույն ժամանակ այն հանդիսանում է Եվրոպայի խորհրդի այլ հրատարակությունների ուղեկից մասը:

- Ուսուցչի ուսուցումը կարևորվել է ի սկզբանե: Հատկանշական է Եվրոպայի խորհրդի՝ կրթության ոլորտում ունեցած գործունեությունը, որի մասն է կազմում քաղաքացիական կրթության բաղադրիչի եվրոպական մշակումը և դրա կիրառումը (2005թ.): Որպես վերջինիս մաս, Եվրոպայի խորհուրդը հրատարակել է *Ժողովրդավարական քաղաքացիության կրթության ու մարդու իրավունքների կրթության թեմաներով ուսուցիչների վերապատրաստման մասին գործիք* [6], որտեղ ներկայացված է անդամ պետությունների կառավարություններին և կրթական ոլորտի ներկայացուցիչներին ուղղված առաջարկություններ՝ ուսուցիչների ԺՔԿ/ՄԻԿ թեմաներով վերապատրաստման համակարգային և համակարգված մոտեցումների անհրաժեշտությունը ճանաչելու մասին: Այս հրատարակության մեջ բնորոշվել և նկարագրվել են նախնական վերապատրաստման փուլում դրական փորձի արդյունքները: Այն քաղաքացիության և մարդու իրավունքների ոլորտում լրացուցիչ աշխատանքի կոչ է արել դասավանդման սկզբնական մակարդակում մշակել հիմնական կոմպետենցիաները և բերել դրանց օրինակները :

  Սույն հրատարակության վրա հիմնված ծրագիրը հանդիսանում է նման կոչի պատասխան արձագանքը:

  > Ուսուցիչներն են ներմուծում և բացատրում նոր գաղափարներ և արժեքներ աշակերտներին, դյուրացնում են նոր հմտությունների և կոմպետենցիաների ձևավորումը, պայմաններ են ստեղծում, որոնք թույլ են տալի նրանց կիրառել այդ հմտությունները ու կոմպետենցիաները ամենօրյա կյանքում՝ տանը, դպրոցում և տեղական համայնքում:[7]

- հեղինակների խմբի աշխատանքը կարելի է դիտել նաև որպես *<<Դպրոցի ժողովրդավարական կառավարում>>*[8] հրատարակության ուղեկից հատոր, որտեղ ուսումնասիրվել են ԺՔԿ/ՄԻԿ-ի տեսանկյունից դպրոցական համակարգի մոտեցումների և առաջնորդության խնդիրները:

  Կոմպետենցիաների վերաբերյալ մեր աշխատանքը նպատակ ունի աջակցել դասաժամերի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի կարիքներին առնչվող խնդիրները:

  > Ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների կրթական ձեռքբերումներին, սակայն չպետք է մոռանալ կրթության ևս մեկ կարևոր գործառույթի մասին, այն է, խթանել այն արժեքները և սոցիալական հմտությունները, որոնք նախապայման են հանդիսանում ժամանակակից գլոբալիզացված հասարակությունում խաղաղ փոխգոյակցության համար:[9]

- «Եվրոպայի դպրոցներում ժողովրդավարական կառավարման արդյունավետ գործելակերպի մասին հայեցակարգային ուսումնասիրություն»-ը[10] ցույց է տվել, որ դպրոցական կառավարման գործընթացում աշակերտների մասնակցության հնարավորությունները արդյունավետության

5. Բիրզեա, Ս. և այլոք, *Ժողովրդավարական քաղաքացիության կրթության քաղաքականությունների համաեվրոպական ուսումնասիրություն*, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ, 2004 թվական:
6. Հաղլստոն, Թ. (խմբ.), *Ժողովրդավարական քաղաքացիության կրթության ու մարդու իրավունքների կրթության թեմաներով ուսուցիչների վերապատրաստման մասին գործիք*, Եվրոպայի խորհուրդ, 2005 թ.
7. նույն տեղում, էջ 15:
8. Բաքման, Ե. և Թրաֆորդ, Բ., *Ժողովրդավարական կառավարումը դպրոցներում, Եվրոպայի խորհրդի հրատարակություն,* Ստրասբուրգ, 2007 թ.:
9. նույն տեղում, էջ 43:
10. Հաղլստոն, Թ., *Աշակերտի կարծիքից մինչև ընդհանուր պատասխանատվություն. Եվրոպայի դպրոցներում դպրոցի ժողովրդավարական կառավարման արդյունավետ գործելակերպ,* Եվրոպական հիմնադրամների ցանց և Եվրոպայի խորհուրդ, 2007 թվականի մայիսի 22, էջ 28:

առավել մեծ հավանականություն ունեն, եթե դրանք սերտորեն կապակցված են դասավանդման հետ՝ որպես դպրոցական պարտադիր ուսումնական ծրագրերի մաս:

Մասնակցային գործունեությունից ուսուցման պոտենցիալը առավելագույնս արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ կլինի, որպեսզի աշակերտները հնավորություն ունենան քննադատաբար արձագանքելու այն ամենին, ինչ սովորում են, ինչպես նաև տեսնել «լայն պատկերը», թե դպրոցում ժողովրդավարական կառավարման հետ կապված խնդիրները ինչպես են առնչվում գլոբալ առումով ժողովրդավարական կառավարման խնդիրների հետ: Այն առաջարկում է ոչ միայն դասապրոցեսի ընթացքում քննադատական մոտեցմամբ միջավայրի ձևավորում, այլ նաև դասապրոցեսում դպրոցի ժողովրդավարական գործելակերպի գնահատում և այն լեզուն ու գաղափարները, որոնց միջոցով տեղի է ունենում քննարկումը:

- *Դպրոցներում ժողովրդավարական քաղաքացիության կրթության որակի ապահովման գործիքը*[11] ուղեցույց փաստաթուղթ/գործիք է, որը կիրառում է ԺՔԿ/ՄԻԿ-ի նկատմամբ որակի ապահովման սկզբունքներ և գործընթացներ. հաջողություն ապահովելու համար դպրոցը պետք է ներառի այն նույն սկզբունքները, որոնք ներառված են ԺՔԿ ուսումնական ծրագրում:

Այս ձեռնարկում կիրառվել են մի շարք խորհրդակցությունների արդյունքներ: 2008 թվականի մարտին դասավանդող ուսուցիչների և կրթության ոլորտի մասնագետների համար նախատեսված Պեստալոցի վերապատրաստման ծրագիրը օգտակար գործիք հանդիսացավ ուսուցիչների կոմպետենցիաները զարգացնելու գործընթացի համար: Սույն հրատարակությունը վերանայվել է 14 եվրոպական երկիր ներկայացնող ուսուցիչ վերապատրաստողներից կազմված Պեստալոցի ցանցի հետ խորհրդակցությունների արդյունքում և ծրագրի միջոցով 2008 թվականի գարնան և ամռան ընթացքում եղած ժամանակահատվածում սկսել է փորձնական կիրառվել տարբեր երկրներում:

ԺՔԿ համակարգողները, որոնք 2008 թվականի ապրիլին հանդիպել են Վիեննայում, նույնպես տրամադրել են խորհրդատվություն: Խորհրդատվություն են տրամադրել նաև Հարավ-արևելյան Եվրոպայի տարածաշրջանային ցանցերը (Զագրեբում և Բալթյան/Սև ծովյան ցանցը):

11. Բիրզեա, Ս. և այլոք, *Դպրոցներում ժողովրդավարական քաղաքացիության կրթության որակի ապահովման գործիք*, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Եվրոպայի խորհուրդ, 2005 թ.:

2. Ներածություն

2.1. Ձեռնարկի նպատակը և թիրախային խումբը

Սույն ձեռնարկի նպատակն է ուսուցիչների համար սահմանմանել ԺՔԿ/ՄԻԿ հիմնական կոմպետենցիաները, ներկայացնել դրա վերաբերյալ օրինակներ, ինչպես նաև դասապրոցեսի ընթացքում աջակցել ուսուցիչների կարիքներին և խնդիրների լուծմանը:

Խորվաթիայի, Էստոնիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Պորտուգալիայի դասավանդող ուսուցիչները միասին աշխատել են որպես թիմ՝ ԺՔԿ/ՄԻԿ առանցքային կոմպետենցիաները բացահայտելու և սահմանելու նպատակով: Նրանք փորձել են մշակել օրինակներ, ցույց տալու համար, թե կոմպետենցիաները ինչպես կարելի է կիրառել տարբեր միջավայրերում (պոտենցիալ կերպով՝ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններում) դասավանդող ուսուցիչների և դասապրոցեսին մասնակից մասնագետների համար:

Այս գործիքը նախատեսված է ինչպես ուսուցիչների, այնպես էլ վերապատրաստող ուսուցիչների համար:

Կոմպետենցիաները նախատեսված են ոչ միայն ԺՔԿ/ՄԻԿ մասնագետների համար, այլ արդիական են բոլոր ուսուցիչների համար՝ կրթության առաջնային և երկրորդային մակարդակներում:

Սույն փաստաթղթում ամփոփ ներկայացված կոմպետենցիաները չունեն պարտադիր բնույթ: Դրանք նախատեսված են օժանդակելու ուսուցիչներին և վերապատրաստողներին: Կոմպետենցիաներից պետք չէ վախենալ (կամ դրանք չպետք է կիրառվեն ղեկավարների կողմից որպես հարկադրանքի միջոց): Այն ոգին, որով մշակվել են այս կոմպետենցիաները, ծառայելու է ուսուցիչների հնարավորությունների և իրավունքների ընդլայնմանը: Նպատակն է աջակցել և խթանել դասավանդման և ուսուցման մեթոդները ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում և ոչ թե հանդես գալ որպես քննադատ: Սույն ձեռնարկում ամփոփ ներկայացված գաղափարները և ցուցումները կարող են ամբողջությամբ կամ մասամբ կիրառվել որպես ուսուցիչների վերապատրաստման դասընթացների համար ուսումնաօժանդակ նյութեր: Մենք ակնկալում ենք, որ դրանք կօգտագործվեն ճկուն և կհարմարեցվեն տարբեր երկրների կրթական պահանջներին, քանի որ հասկանում ենք, որ տարբեր երկրներ ԺՔԿ/ՄԻԿ-ը ներառելու են իրենց ազգային կրթական համակարգերում տարբեր եղանակներով:

2.2. Սահմանումներ

ԺՔԿ/ՄԻԿ-ի սահմանումները բաց են մեկնաբանության համար

Ընդհանուր առմամբ՝ ժողովրդավարական քաղաքացիության արդյունավետ կրթությունը նպաստում է արժեքահեն գիտելիքի, գործողությունների վրա հենված հմտությունների և փոփոխություններին ուղղված կոմպետենցիաների զարգացմանը, որոնք ընդլայնում են սովորողների հնարավորությունները և նպաստում են առավել ուժեղ սոցիալական արդարության ամրապնդմանը:

Եվրոպայի խորհուրդը ընդգծում է ժողովրդավարական հասարակությունում ապրելու և գործելու համար մարդկանց նախապատրաստելու, նրանց հնարավորությունները և իրավունքները ընդլայնելու ԺՔԿ/ՄԻԿ-ի մեծ կարևորությունը: Ակտիվ, տեղեկացված և պատասխանատու քաղաքացիներ դառնալու գործընթացում աշակերտներին խրախուսելը և նրանց աջակցելը Եվրոպայի խորհրդի կողմից ընդգծվում է որպես ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական նպատակ: Նման քաղաքացիներին բնորոշ է.

- որպես քաղաքացիների՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածությունը,
- սոցիալական և քաղաքական աշխարհի մասին տեղեկացվածությունը,
- այլոց բարեկեցության մասին մտահոգությունը,
- իրենց կարծիքների և փաստարկների հստակ ներկայացումը,
- աշխարհի վրա ազդեցություն ունենալու ունակությունը,

- իրենց համայնքում ակտիվությունը,
- որպես քաղաքացիներ գործելու պատասխանատվությունը:[12]

Ուսուցիչները պետք է չափազանց հստակ լինեն, թե ազգային տարբեր իրավիճակներում ինչպես և ինչու են իրենց վարքագիծը մշակում ԺՔԿ/ՄԻԿ-ի համար.

ԺՔԿ/ՄԻԿ-ին բնորոշ են փոխկապակցված թեմաներ, գաղափարներ և ուղղություններ:

Այդ թեմաներից են. օրինակ՝

- ժողովրդավարական հասարակության և դրան հարակից իրավունքների պահպանումը,
- հասարակական կյանքին մասնակցությունը,
- ակտիվ և տեղեկացված մասնակցության համար երիտասարդներին նախապատրաստումը և նրանց կարողությունների զարգացումը,
- հասարակության մեջ ներառման կամ ինտեգրման շեշտադրումը,
- ժամանակակից հասարակության վրա կենտրոնացումը,
- գործընկերության խրախուսումը և միջազգային հեռանկարների խթանումը և այլն:

ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմքում ընկած հիմնական գաղափարներից են ժողովրդավարությունը, իրավունքները, պարտականությունները, հանդուրժողականությունը, հարգանքը, հավասարությունը, բազմազանությունը և համայնքը: Այս հասկացությունները, ինչպես և ինքնին ԺՔԿ/ՄԻԿ-ը կարելի է վիճարկել և դրանք կարող են խնդրահարույց լինել տարբեր իրավիճակներում:

ԺՔԿ/ՄԻԿ-ը նաև ներառում է գիտելիքի և ըմբռնման, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների հայեցակետերը: Այս հայեցակետերը միավորվում են դասավանդման և ուսուցման այն մոտեցումների միջոցով, որոնց առաջնային նպատակն է ձևավորել և փոխել երիտասարդների վերաբերմունքը և վարքագիծը, որոնք նրանք կդրսևորեն չափահաս կյանքում:[13]

Գոյություն ունեն «կոմպետենցիա» եզրույթի տարբեր սահմանումներ

Ծրագրի համատեքստում ներառված է նաև ուսուցչի դերի և նրանից պահանջվող կոմպետենցիաների բնույթի մասին նախկին մտածելակերպը: Որպես Լիսաբոնյան ռազմավարության մաս՝ Եվրոպական հանձնաժողովը մշակել է «Ուսուցիչների կոմպետենցիաների և որակավորումների համընդհանուր եվրոպական սկզբունքներ» փաստաթուղթը:[14]

Դպրոցական միջավայրում բացահայտված նոր սոցիալական և համայնքային կարիքների համատեքստում առաջ են եկել նոր կոմպետենցիաներ (ինչպես օրինակ՝ կոնֆլիկտների կառավարում, արձագանքման մշակույթ, միջմշակութային զգայունակություն և հաղորդակցություն, գլոբալ և բազմակի տեսանկյուններ, խորհրդատվություն և այլն):

«Կոմպետենցիա», «կոմպետենցիաներ», «կոմպետենտություն», «կոմպետենտություններ» եզրույթները, որոնք առաջին անգամ մշակվել են կառավարման բնագավառում, հաճախ փոխարինում են միմյանց: Մենք այստեղ չենք կարող տալ «կոմպետենցիա» եզրույթի համապարփակ սահմանում: Այս եզրույթը ունի բազմազան նշանակություններ, և դրանք կարելի է արտահայտել «կարողություն», «ունակություն», «հնարավորություն», «արդյունավետություն» և «հմտություն» բառերով: Կոմպետենցիաներ կարելի է վերագրել անհատներին, սոցիալական խմբերին կամ հաստատություններին «երբ վերջիններս ունեն կամ ձեռք են բերում զարգացման հատուկ նպատակներին հասնելու պայմաններ և բավարարում են արտաքին միջավայրի կողմից առաջադրված կարևոր պահանջներին»[15]

12. Բիրզեա, Ս. և այլոք, 2005թ., նշված աշխատանքում, էջ 25:
13. Քեր, Դ., «Քաղաքացիություն. տեղական, ազգային և միջազգային»՝ Գերոն, Լ. (խմբ.) *Սովորել ուսուցանել քաղաքացիությունը միջնակարգ դպրոցում* գրքում, 2003 թ., էջ 7-8
14. Եվրոպական հանձնաժողովի կրթության և մշակույթի հարցերով գլխավոր տնօրինություն, *«Ուսուցիչների կոմպետենցիաների և որակավորումների համընդհանուր եվրոպական սկզբունքներ»*՝ ներկայացված Ուսուցիչների կոմպետենցիաների և որակավորումների համընդհանուր եվրոպական սկզբունքների մասին եվրոպական փորձնական համաժողովին: 2005 թվականի հունիսի 20-21, Բրյուսել:
15. Վայնարտ, Ֆրանց Ե., *Կոմպետենցիայի հասկացությունները,* Հոգեբանական հետազոտությունների Մաքս Պլանկի անվան ինստիտուտ, Մյունխեն, 1999 թ.:

ՏՀԶԿ-ն սահմանում է կոմպետենցիան որպես՝ *ավելին քան գիտելիքը և հմտությունները*:

> Այն ներառում է բարդ պահանջներին բավարարելու կարողություն՝ որոշակի իրավիճակում հոգեբանասոցիալական ռեսուրսների (այդ թվում՝ հմտությունների և վերաբերմունքի) վրա հիմնվելու և դրանք մոբիլիզացնելու միջոցով:[16]

2006 թվականին տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոտեցումները ըստ կոմպետենցիաների էլեկտրոնային ֆորումը նպատակ ուներ ստեղծել բազմակարծիք, բաց և կառուցողական տարածք ուսումնական ծրագրերի փոփոխության և մշակման փորձի միջտարածաշրջանային փոխանակման համար՝ հիմնվելով ըստ կոմպետենցիաների մոտեցումների վրա: Աշխատանքը հիմված է մի փաստաթղթի վրա, որտեղ մշակված է «իրավիճակային կոմպետենցիաներ» գաղափարը:

Այսուհետ, պարզապես կոնցեպցիայից զուրկ կոմպետենցիաների ցանկեր կամ պահոցներ կազմելու փոխարեն, առաջնահերթ պետք է համարվի որոշակի իրավիճակում անձի կոմպետենտ գործողության նկարագրությունը՝ նպատակ հետապնդելով մշակել կոմպետենցիային բնորոշ իրավիճակային մոտեցում:[17]

Այստեղ հիմնական կոմպետենցիաների տակ նկատի ունենք կարողությունների լայն շրջանակ ներառող բազմակողմ կոմպետենցիաներ, որոնք փոխազդում են փոխգործակցության պայմաններում՝ ԺՔԿ/ՄԻԿ ուսանելու նպատակին ընդառաջ:

Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք կոմպետենցիաները սահմանել, որպես մի մոտեցում, որը ներառում է այնպիսի հայեցակետեր, ինչպիսիք են՝

- գիտելիք (իմանալ ի՞նչ),
- վերաբերմունք և վարքագծերը(գիտակցել, թե ինչպե՞ս ենք գործում, ի՞նչ իրավիճակում և ինչու),
- դիրքորոշումներ (բաց լինել փոփոխության նկատմամբ, մոտիվացվել),
- ընթացակարգային հմտություններ (իմանալ, թե ինչպե՞ս անել),
- ճանաչողական հմտություններ (աշխատել տվյալների հետ, քննադատական մտածողություն և քննադատական վերլուծություն),
- փորձառական հմտությունները (իմանալ, թե ինչպե՞ս վարվել և հարմարվել՝ հիմնվելով նախկին գիտելիքների և սոցիալական հմտությունների վրա)

2.3. Որո՞նք են ԺՔԿ/ՄԻԿ-ի օգուտները

- ԺՔԿ/ՄԻԿ-ը երիտասարդներին և չափահասներին հնարավորություն է առաջարկում զբաղվել իրենց հետաքրքրող ժամանակակից խնդիրներով,
- ԺՔԿ/ՄԻԿ-ը ներառում է երիտասարդների և չափահասների ուսուցման տարբեր ակտիվ ձևեր և հնարավորություններ՝ քննարկելու և բանավիճելու վիճահարույց հարցերի շուրջ,
- ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելը հաճելի է: Դասարանը և դասարանից դուրս կրթական միջավայրը ուղղորդում են գաղափարների, կարծիքներ և բուռն քննարկումների,
- ի՞նչը կարող է ավելի կարևոր լինել, քան այն, որ մարդիկ համակեցության կարգով ապրեն խաղաղության և համագործակցության պայմաններում՝ տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում, ԺՔԿ/ՄԻԿ-ը «ապագայի» կրթության ձև է (երիտասարդ մարդիկ մտածում են, թե ինչպես կարող են աշխարհը ավելի լավը դարձնել),
- ԺՔԿ/ՄԻԿ-ը բնական և «իրական» հնարավորություններ է ստեղծում երիտասարդների (ինչպես նաև ուսուցիչների և այլ չափահասների) համար՝ «դրական ազդեցություն գործել» և քարոզել փոփոխություն,
- ԺՔԿ/ՄԻԿ-ը արմատավորված է համայնքային ներգրավվածության գաղափարներում. երիտասարդները և ուսուցիչները կարող են մտնել երկխոսության մեջ գործընկերների հետ դպրոցի պատերից դուրս,
- ԺՔԿ/ՄԻԿ-ը հնարավորություն է ստեղծում ուսումնական ծրագրի շրջանակներում ավելին իմանալու այն հասկացությունների մասին, ինչիսիք են իրավունքը, մարդու իրավունքները, քաղաքական և շրջակա միջավայրին առնչվող խնդիրները,

16. ՏՀԶԿ, «Հիմնական հմտությունների սահմանում և ընտրություն», ԴԵՍԵՔՈ հրատարակչություն, 2005 թ., www.oecd.org/dataoecd/47/61/35070367.pdf:
17. ՕՌԷ (Observatoire des Réformes en Éducation), Կոմպետենցիայի հասկացության վերանայում՝ որպես ուսման ծրագրերի կազմակերպման սկզբունք. կոմպետենցիայից՝ ունակ գործողություն, Մոնրեալ, 2006 թ.:

- ԺՔԿ/ՄԻԿ-ը հնարավորություն է տալիս հասարակությունում տեղ գտած բացասական ուժերի դեմ հանդես գալ դրական դիրքորոշմամբ (օրինակ՝ ռասիզմ, գլոբալ միգրացիայի մասին մեդիայի կողմից քարոզվող կարծրատիպեր և սխալ գաղափարներ և այլն),
- ԺՔԿ/ՄԻԿ-ը հնարավորություն է տալիս ուսուցիչներին (անկախ նրանց սոցիալական ծագումից) իրենց դասավանդումը համադրել արդիական հարցերի հետ. այն օգնում է ուսուցումը դարձնել նշանակալի և վերաբերելի,
- ԺՔԿ/ՄԻԿ-ը ամենատարբեր ճնշումների պարագայում ընդլայնում է ուսուցիչների հնարավորությունները և իրավունքները :

2.4. ԺՔԿ/ՄԻԿ-ը իրագործելու մարտահրավերների պատասխանը

Սույն ծրագրում ձեռնարկը մշակող թիմը պատրանքներ չուներ: ԺՔԿ/ՄԻԿ-ը դժվար է ներմուծել որպես ուսումնական ծրագրի նոր հատկանիշ: Եվրոպական շատ երկրներում փորձ է արվել այս մոտեցումը իրականացնել այլ առարկաների, օրինակ՝ պատմության կամ հասարակագիտության միջոցով:

Պետք չէ, որ այս գործիքը ձևավորի ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրերի տարբեր մոդելների վերաբերյալ դոգմատիկ դատողություններ, չնայած պետք է նշել, որ միջառարկայական կապը հաճախ ավելի ուժեղ է թղթի վրա, քան դասապրոցեսում, որտեղ քաղաքացիական կրթությունը կարող է լինել ենթադրվող, մասնատված կամ անիրական:[18] Արդյունքները հաճախ չեն իրականացրել ակնկալիքները, և այդ ջանքերին հաճախ փոխարինելու է եկել առավել կենտրոնացած մոտեցումը. օրինակ՝ քաղաքացիության թեմայով առաձին կրթություն՝ որոշակի ուսումնական ծրագրի շրջանակում, առավել իրական վարքագծային, ծրագրային դասավանդում, ակտիվ քաղաքացիության ծրագրեր, որոշակի ԺՔԿ/ՄԻԿ թեմաների շուրջ գիտելիքների հարստացման օրեր/շաբաթներ, կամ, իհարկե, այս մոտեցումների տարբեր համադրություններ:

Բոլոր ուսուցիչները պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

18. Օրինակ՝ տե՛ս Բոլիվար, *Non scholae sed vitae discimus: limites y problemas de la transversalidad* [Միջառարկայական մոտեցման սահմանները և խնդիրները] Revista de Education, 309, էջ 23-65, Enero-Abril 1995թ.:

3. Կոմպետենցիաների ընդհանուր նկարագիրը և փաստաթուղթը

3.1. Երբ և ինչու են կոմպետենցիաները խմբավորվում չորս խմբերում. համառոտ նկարագրություն

Տարբեր շահագրգիռ կողմերի, ինչպես օրինակ՝ Եվրոպայի խորհրդի 14 տարբեր երկրներ ներկայացնող ԺՔԿ/ՄԻԿ հարցերով Պեստալոցի ուսուցիչներ վերապատրաստողների ցանցի, ԺՔԿ/ՄԻԿ համակարգողների և ոլորտում աշխատող փորձագետների հետ խորհրդակցությունների արդյունքում մենք սահմանել ենք ընդհամենը 15 կոմպետենցիա, որոնց կիրառումը կարող է ընդլայնել ուսուցիչների հնարավորությունները՝ վստահությամբ ու արդյունավետորեն դասավանդելու ԺՔԿ/ՄԻԿ:

Այս 15 կոմպետենցիաները խմբավորված են չորս խմբերում (Ա, Բ, Գ և Դ), որոնք համապատասխանում են այն հարցերին և խնդիրներին, որոնք ուսուցիչները և վերապատրաստող ուսուցիչները կհանդիպեն ԺՔԿ/ՄԻԿ-ն իրագործելիս: Նախքան մանրամասնելը, մենք ստորև ամփոփ կներկայացնենք այդ չորս խմբերը և կնկարագրենք 15 կոմպետենցիաները:

Խմբի անվանումը	Հարակից հարցերը
ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և ըմբռնումը	Ի՞նչ կարող ենք մենք անել:
Մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը դասարանում և դպրոցում. պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում	Ի՞նչպես կարող ենք դա անել:
Մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը համագործակցության և համայնքային ներգրավվածության միջոցով. ԺՔԿ/ՄԻԿ-ը գործողության մեջ	Ո՞ւմ հետ կարող ենք դա անել:
Մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում	Ի՞նչպես կարող ենք դա անել ավելի լավ:

Աղյուսակ 1 Չորս խմբերը և դրանց պայմանական գույները

Խմբերը սահմանվել են ըստ իրենց գործնական նշանակության: Դրանք համապատասխանում են այն հարցերին, որոնք ուսուցիչները և վերապատրաստող ուսուցիչները կարող են հարցնել իրենց մասնագիտական միջավայրում ԺՔԿ/ՄԻԿ իրագործելիս.

Ա խումբ. «Ի՞նչ կարող ենք անել նախապատրաստելու համար ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործումը»
Բ խումբ. «Ինչպե՞ս կարող ենք իրագործել ԺՔԿ/ՄԻԿ-ը մեր դպրոցում»
Գ խումբ. «Ո՞ւմ հետ կարող ենք զարգացնել սովորողների ակտիվ քաղաքացիությունը»a
Դ խումբ. «Ինչպե՞ս կարող ենք բարելավել այն ինչ անում ենք/՝մասնագիտական զարգացումը»

Աղյուսակ 2 Խմբի նշանակությունը և հարակից հարցեր

3.2. Ինչպե՞ս գտնել այն, ինչ փնտրում ենք. փաստաթղթի կառուցվածքը և պայմանական գույները

Յուրաքանչյուր խմբի տրվել է պայմանական գույն՝ որպես տեսական օժանդակ միջոց ընթերցանությունը դյուրացնելու և արագ տեղեկություններ գտնելու համար: Ամբողջ փաստաթղթում կիրառվել է միևնույն պայմանական գույնը (տե՛ս աղյուսակ 1 և 2):

Հեղինակները ցանկանում էին այս պայմանական գույները հնարավորինս դարձնել գործնական գործիք, որը հասանելի կլինի տարբեր միջավայրերում ուսուցիչների, ինչպես նաև վերապատրաստող

ուսուցիչների համար: Յուրաքանչյուր խմբի և յուրաքանչյուր կոմպետենցիայի համար մենք ընդունել ենք նույն (բայց ճկուն) ձևաչափը.

- յուրաքանչյուր խմբի համար (3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխներ). ընթերցողը կգտնի տեսական տեղեկությունների հակիրճ նկարագրություն՝ հետազոտության, փաստերի և առաջարկությունների մասով տեղեկությունների հղումներով,
- յուրաքանչյուր կոմպետենցիայի համար (3.1 - 3.4, 4.1 - 4.4, 5.1 - 5.4 և 6.1 - 6.4). ընթերցողը կգտնի.
  - կոմպետենցիայի հակիրճ սահմանումը,
  - այն եղանակների օրինակները, որոնց միջոցով ուսուցիչները կարող են ապացույցներ բերել, որ իրենց պրակտիկայի ընթացքում բավարարում են տարբեր կոմպետենցիաների պահանջները,
  - առաջընթացի աղյուսակ, որն օգնում է ուսուցիչներին և վերապատրաստողներին սահմանել, թե իրենց գիտելիքի և այս կոմպետենցիայի պահանջները բավարարելու առումով «իրենք որտեղ են» և, ուստի, «ինչպիսին կարող են լինել իրենց հաջորդ քայլերը»:

Կոմպետենցիաների այս մոդելից բացի ընթերցողը այլ հավելվածներում կհանդիպի լրացուցիչ ռեսուրսների.

- այլ շահագրգիռ կողմերի համար նյութեր. չնայած որ այս փաստաթուղթը նախատեսված է ուսուցիչների և վերապատրաստողների համար:
- Մենք գիտակցում ենք, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործործումը ենթադրում է տարբեր շահագրգիռ կողմերի, ինչպես օրինակ՝ քաղաքականություն մշակողների, դպրոցների տնօրենների, ղեկավար ուսուցիչների և բարձրագույն ուսումնական համակարգի դերակատարների ակտիվ մասնակցությունը, կարելի է նշել և այլ անուններ: Ընթերցողը այստեղ կգտնի մի քանի առաջարկներ այն մասին, թե ինչպես այս շահագրգիռ կողմերը կարող են օգտագործել մեր կողմից առաջարկվող կոմպետենցիաների մոդելը՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի փորձառու ֆասիլիտատորներ դառնալու համար: Կոմպետենցիաների վերաբերյալ բաժիններում տեղ են գտել գծապատկերներ և աղյուսակներ, որոնք կօգնեն շահագրգիռ կողմերին սահմանել, թե «որտեղ են իրենք» կոմպետենցիաները բավարարելու առումով և «ինչպիսին կարող են լինել իրենց հաջորդ քայլերը», ինքնաարժեւորման գործիքներ, որոնք առաջարկվում են ուսուցիչներին և վերապատրաստողներին ինքնաարժեւորման գործընթացը իրականացնելու համակարգային եղանակով և կազմելու իրենց ու աշակերտների՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին իրենց գիտելիքների զարգացման, ըմբռնման և պլանավորման առաջընթացի գծապատկերը:

3.3. 15 կոմպետենցիաների ընդհանուր նկարագիրը

Ա խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքները և ըմբռնումը	Բ խումբ. Պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում	Գ խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ը՝ գործողության մեջ. համագործակցություն և համայնքային ներգրավվածություն	Դ խումբ. Ընդհանուր մոտեցումների ամփոփում և գնահատում
Կոմպետենցիա թիվ 1 ԺՔԿ/ՄԻԿ-ի նպատակները և խնդիրները. արժեքահեն գիտելիք, գործողությունների հիման վրա հմտություններ և փոփոխություններին ուղղված կոմպետենցիաներ	Կոմպետենցիա թիվ 5 ԺՔԿ/ՄԻԿ-ի գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, վերաբերմունքը և արժեքները ներառելու նպատակով նախատեսված մոտեցումների պլանավորումը, որտեղ ակտիվ ուսուցումն ու աշակերտների ներգրավումը մեծ դեր են խաղում	Կոմպետենցիա թիվ 10 Կրթական միջավայր, որը հնարավորություն է տալիս աշակերտներին քննադատաբար վերլուծել քաղաքական, էթիկական, սոցիալական և մշակութային արդիական հարցեր կամ իրավիճակներ՝ օգտագործելով տեղեկություններ տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ մեդիա, վիճակագրություն, և ՏՀՏ ռեսուրսներ	Կոմպետենցիա թիվ 13 Իրենց համար նշանակություն ունեցող հասկացությունների վերաբերյալ փաստի արժեվորում և որոշումներ կայացնելու հարցում աշակերտներին մասնակցելու հնարավորության տրամադրում
Կոմպետենցիա թիվ 2 ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող միջազգային հիմնական շրջանակներն և սկզբունքները և ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական գաղափարները	Կոմպետենցիա թիվ 6 ԺՔԿ/ՄԻԿ-ի սկզբունքների և գործելակերպերի ներառումը մասնագիտական առարկաների շրջանակում (միջառարկայական կապը ԺՔԿ/ՄԻԿ)՝ խթանելու համար գիտելիքը, հմտությունները և մասնակցություն, նպաստելու՝ ժողովրդավարության մեջ երիտասարդների հնարավորությունների և իրավունքների ընդլայնմանը	Կոմպետենցիա թիվ 11 Համապատասխան գործընկերների հետ համագործակցային աշխատանք (ինչպես օրինակ՝ ընտանիք, հասարակական կազմակերպություններ և համայնքի ու քաղաքական ներկայացուցիչներ)՝ պլանավորելու և իրականացնելու համայնքում ժողովրդավարական քաղաքացիության հարցերով մասնակցության մի շարք հնարավորություններ աշակերտների համար	Կոմպետենցիա թիվ 14 Երիտասարդներից ակնկալվող ԺՔԿ/ՄԻԿ դրական արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման մոդելավորման և դասավանդման ժողովրդավարական ոճ՝ աշակերտներին ներգրավելով կրթական աշխատանքների պլանավորման մեջ և նրանց մոտ ձևավորելու սեփականության զգացողություն

Ա խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքները և ըմբռնումը	Բ խումբ. Պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում	Գ խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ը՝ գործողության մեջ. համագործակցություն և համայնքային ներգրավվածություն	Դ խումբ. Ընդհանուր մոտեցումների ամփոփում և գնահատում
Կոմպետենցիա թիվ 3 ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագրերի բովանդակությունը, որի մաս են կազմում քաղաքական և իրավական, սոցիալ-տնտեսական և մշակութային, եվրոպական ու գլոբալ խնդիրները	Կոմպետենցիա թիվ 7 Հստակ հիմնական կանոնների և վստահության, թափանցիկության և փոխադարձ հարգանքի կայուն մթնոլորտի ստեղծում, դասարանում վարքագծքի կառավարման ժամանակ հաշվի են առնում ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները՝ ապահովելու դպրոցում դրական մթնոլորտ	Կոմպետենցիա թիվ 12 Նախապաշարմունքների և խտրականության բոլոր ձևերին մարտահրավեր նետելու, ինչպես նաև ռասիզմի դեմ պայքարի խթանման ռազմավարություններ	Կոմպետենցիա թիվ 15 Դասավանդման մեթոդները և աշակերտների ուսուցումը վերանայելու, մշտադիտարկելու և գնահատելու և այդ գնահատումը ծրագրերի կազմմանն ու մասնագիտական զարգացմանն ուղղելու հնարավորություն և կամք
Կոմպետենցիա թիվ 4 ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման համատեքստը՝ միջառարկայական մոտեցումներ, դպրոցական համակարգի մշակույթ և համայնքային ներգրավվածություն:	Կոմպետենցիա թիվ 8 Դասավանդման մի շարք ռազմավարություններ և մեթոդաբանություններ, այդ թվում՝ դասարանի կողմից ճիշտ հարցադրումներ՝ զարգացնելու համար աշակերտների բանավեճի հմտությունները, հատկապես՝ նրբանկատ, վիճահարույց հարցերի շուրջ		
	Կոմպետենցիա թիվ 9 Գնահատման մոտեցումների կիրառումը (այդ թվում, ինքնագնահատում և հավասարակիցների գնահատում)՝ տեղեկացնելու աշակերտների առաջադիմությանը և նվաճումների մասին ԺՔԿ/ՄԻԿ բնագավառում և շնորհավորելու այն		

Աղյուսակ 3. ԺՔԿ/ՄԻԿ-ը խթանելու կոմպետենցիաների ընդհանուր նկարագիր

4. Ա խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքներ և ըմբռնում

Կոմպետենցիաների այս խումբը վերաբերում է ԺՔԿ/ՄԻԿ-ն ներկայացմանը և հիմք է նախապատրաստում ուսուցիչների գիտելիքների համար: Այն պետք է պատասխանի հետևյալ հարցին, թե ԺՔԿ/ՄԻԿ-ը իրականացնելու ընթացքում «ի՞նչ կարող ենք մենք անել» դասարանում, դպրոցում և համայնքում: Ուսուցիչները պետք է գտնեն հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչո՞ւմն է կայանում ԺՔԿ/ՄԻԿ-ն, և որոնք են դրա սկզբունքները:
- Ի՞նչ հիմնական հասկացություններ կան:
- Ի՞նչ հմտություններ, արժեքներ, վերաբերմունք և դիրքորոշում են փորձում ուսուցիչները խթանել ԺՔԿ/ՄԻԿ-ի դասերի և փորձառության միջոցով:
- ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրի բաղադրիչները ինչպե՞ս կարող է բաժանվել կառավարելի տարրերի՝ որպեսզի հանրակրթական դպրոցի համար օգտակար լինի:

4.1. Համառոտ ակնարկ և տեսական հիմունքներ

Բոլոր ուսուցիչները պետք է հիմնավոր գիտելիքներ և ընկալում ունենան հետևյալի մասին.

Կոմպետենցիա թիվ 1. ԺՔԿ/ՄԻԿ նպատակները և խնդիրները

Արժեքահեն գիտելիքի, գործողությունների, հմտությունների հիման վրա և փոփոխություններին ու կոմպետենցիաների զարգացմանն ուղղված ԺՔԿ/ՄԻԿ-ի որոշիչ նշանակության մասին հասկացություն, որոնք կարող են ընդլայնել երիտասարդների հնարավորություններն ու իրավունքները, հզորացնեն սոցիալական արդարությունը և ժողովրդավարական ազատությունը:

Կոմպետենցիա թիվ 2. ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող միջազգային հիմնական շրջանակներն ու սկզբունքները

ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և հիմնական հասկացությունների մասին Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից մշակված շրջանակները՝ միջազգային երկխոսության զարգացումներին համահունչ. դրանց արտացոլումը ազգային, տեղական և հանրակրթական քաղաքականություններում, ուսուցիչների մասնագիտական դերը դասարանում և դասարանից դուրս:

Կոմպետենցիա թիվ 3. ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագրերի և ուսուցման բովանդակությունը

Չորս փոխկապակցված հայեցակետերի մասին գիտելիքներ՝ քաղաքական և իրավական հայեցակետ, սոցիալական և մշակութային հայեցակետ, տնտեսական հայեցակետ և եվրոպական ու գլոբալ հայեցակետ: Ուսուցիչները պետք է կարողանան զարգացնել աշակերտների քաղաքացիության վերաբերյալ գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը, արժեքները և ակտիվ մասնակցության դիրքորոշումը:

Կոմպետենցիա թիվ 4. ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման տարբեր հնարավոր իրավիճակներ

ԺՔԿ/ՄԻԿ-ի ընկալումը որպես առանձին դպրոցական առարկա, որպես միջառարկայական մոտեցման մաս, որպես դպրոցական համակարգի մշակույթի հիմնարար բաղադրիչ և համայնքային ներգրավվածության ու կապերի կենտրոնական տարր:

Աղյուսակ 4. Ա խումբ ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքները և ըմբռնումը

Տեսական գիտելիքներ

Քաղաքացիական գիտելիքի և մասնակցության առավել բարձր մակարդակների հասնելու նպատակը կրթական ոլորտի հետազոտողների համար եղել է վերջին գլոբալ զարգացումների ուշադրության կենտրոնում: Կրթական ձեռքբերումների արժևորման միջազգային ընկերակցությունը (IEA), օրինակ՝ եզրակացրել է, որ «բազմաթիվ երկրներում աշակերտները հասկանում են ժողովրդավարության

հիմնարար արժեքները և հաստատությունները, բայց ընկալման խորությունը հաճախ.... մակերեսային է»:[19]

Յան Դավիսը պնդում է, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին առարկայական գիտելիքը պետք է լինի ամբողջական (հոլիստիկ)՝ ոչ թե պարզապես հայտնի փաստերից կազմված համադրություն, այլ կոնցեպտուալ շրջանակների, փոխկապվածությունների մոդելների և իմաստի բացահայտման համար պահանջվող հմտությունների խորը ըմբռնում:[20] Նա ուսումնասիրեց ուսուցիչների ուսուցման համատեքստում ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքների և ըմբռնման բնույթը Շուլման[21] և ՄքՆամարա տեսաբանների գաղափարների միջոցով:[22] Այս հեղինակները ընդգծում էին, որ առարկան պետք է ներկայացվի այնպես, որ այն ըմբռնելի լինի մյուսների, հատկապես՝ երեխաների և երիտասարդների համար, օրինակ՝ անալոգիաների, պատկերների, օրինակների և բացատրությունների միջոցով: Առանցքային է այն, ինչը կարելի է անվանել «կիրառական» առարկայական գիտելիք.

ԺՔԿ/ՄԻԿ խնդիրների շուրջ առանցքային բովանդակության, կոնցեպցիաների, արժեքների և կազմակերպական սկզբունքների մասին գիտելիք և հասկացություն:

Այն ուսուցիչները, որոնք ավելի շատ բան գիտեն առարկայի մասին, ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ են իրենց դասավանդման մեթոդների մեջ: Նրանք ավելի հավանական է, որ կկառուցեն արդյունավետ անհատական դասեր և շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման/ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Եթե ուսուցիչն ունի ԺՔԿ/ՄԻԿ կոնցեպցիաների և սկզբունքների մասին միայն սահմանափակ գիտելիք, դժվար թե նա ցանկանա աշակերտներին ներգրավել ժողովրդավարական քաղաքացիության բարդ հայեցակետերում և ավելի հավանական է, որ կդասավանդի դիդակտիկ եղանակով՝ կանխելով աշակերտների մասնակցությունը և հարցադրումները, ինչով կսահմանափակ երիտասարդների փորձառության զարգացման հնարավորությունը:

ԺՔԿ/ՄԻԿ-ի նպատակները և խնդիրները արմատական են: Այդ նպատակները ձևակերպվել են որպես. «քաղաքական մշակույթի փոփոխություն»:[23] Երիտասարդները պետք է հասկանան, թե ինչ է ժողովրդավարական քաղաքացիությունը. նրանք պետք է ունենան գրագիտության պատշաճ մակարդակ՝ հասկանալու համար քաղաքական գործընթացները, ինչպես նաև ընդունելու քաղաքացիության տարբեր հայեցակետերի վերաբերյալ տեղեկացված որոշումներ: Ուստի, ուսուցիչները պետք է խթանեն քաղաքացիության «գրագիտության» մի շարք հայեցակետեր[24]՝ երիտասարդների հետ աշխատանքի ընթացքում: Մենք տարբերակում ենք «գրագիտության» չորս տեսակ՝ քաղաքական և իրավական, սոցիալական և մշակութային, տնտեսական և եվրոպական ու գլոբալ.

- Քաղաքական և իրավական գրագիտությունը վերաբերում է քաղաքական համակարգի նկատմամբ քաղաքական իրավունքներին և պարտականություններին, օրենքի գերակայությանը: Քաղաքական/իրավական ոլորտը հասկանալը ենթադրում է ԺՔԿ/ՄԻԿ-ի միջազգային շրջանակների մասին գիտելիքներ և ընկալումներ, որոնք հիմնվում են բոլոր մարդկանց արժանապատվության հավասար արժեքի պատմական գաղափարի վրա՝ անկախ կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ռասայական, էթնիկ պատկանելիության, ազգության, կրոնի կամ սոցիալական ու տնտեսական ծագման տարբերություններից:[25] Ուսուցիչները պետք

19. Տորնի-Պուրտա, Ջ., և այլոք *Քսանութ երկրներում քաղաքացիության կրթությունը. քաղաքացիական գիտելիքներ և մասնակցություն տասնչորս տարեկանում,* IEA քարտուղարություն, Ամստերդամ, 2001 թ.

20. Դավիս, Ի., «Ի՞նչ առարկայական գիտելիքներ են անհրաժեշտ քաղաքացիություն դասավանդելու համար, և ինչպե՞ս կարելի է այն խթանել» Դասավանդման սկզբնական մակարդակի համար քննարկման փաստաթուղթ», 2003թ., Citized կայքէջ՝ www.citized.info:

21. Շուլման, Լ., «Հասկացողների համար. գիտելիքի աճը դասավանդման ժամանակ», *Կրթական հետազոտող,* 15, էջ 4-14, 1986 թ.:

22. ՄքՆամարա, Դ., «Առարկայական գիտելիքները և դրանց կիրառությունը. խնդիրներ և հնարավորություններ ուսուցանող ուսուցիչների համար», *Դասավանդման ուսուցման ամսագիր,* 17 (2), էջ 113-128, 1991թ.:

23. Քրիկ, Բ., Քաղաքացիության կրթություն և ժողովրդավարության դասավանդում դպրոցներում զրքում, Քրիք զեկույց, QCA, 1998 թ.:

24. Ռիս, Փ., և Բլաքոլ, Դ. «Նորությունների կենտրոնում. քաղաքացիության գրագիտություն» http://makingnewstoday.uow.edu.au (2008 թվականի մարտ): Հղումները բերված են Ջ. Հաբերմասի «Հաղորդակցային գործողության տեսություն» զրքում, հատոր 1, Քեմբրիջ, ՄԹ. Փոլիթի փրես, 1984 թ., Հաբերմաս, Ջ., «Հաղորդակցային գործողության տեսություն», հատոր 1, Քեմբրիջ, ՄԹ. Փոլիթի փրես, 1987, Լյուք, Ա., Մուսպրատ, Ս., և Ֆրիբոդի, Փ., (խմբ.) *Քննադատական գրագիտության կառուցում. տեքստային գիտության դասավանդում և ուսուցում,* Քրեսկիլ ՆՋ. Համփթոն փրես, 1997 թ.:

25. Հիմնական տեքստերը հետևյալն են. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»(1948) և դրանից բխող ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան» (1989), «Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիան», որոնք ներկայացնում են բոլոր անդամ պետություններում պարտադիր դարձած համընդհանուր, անօտարելի և անբաժանելի մարդու իրավունքներ և ազատություններ. նաև՝ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան (1950):

է սովորեն մարդու իրավունքների և դրանց պաշտանության մեխանիզմների մասին, ինչպես նաև, թե ինչ հմտություններ են անհրաժեշտ առօրյա կյանքում դրանք կիրառելու համար: Աշակերտները պետք է կարողանան խորհել արժեքների շուրջ, զարգացնել վերաբերմունք և ձեռնարկել գործողություններ մարդու իրավունքները պաշտպանելու և խթանելու համար: Կարելի է կարծել, որ սա «ծանր» և չոր գիտելիք է ուսուցչի համար, բայց իրականում, այն գիտելիքը, որը պետք է «կիրառվի» դասասենյակում, կարող է շատ մեծածավալ չլինել. օրինակ, ընդունված է, որ շատ փոքր երեխաները դասարանում աշխատանք կատարեն ցանկությունների և կարիքների, կամ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

- • Սոցիալական և մշակութային գրագիտությունը վերաբերում է անհատների և հասարակության միջև փոխհարաբերություններին, այնպիսի տարրերին, ինչպիսիք են նրանց արժեքները, աշխարհայացքը, համատեղ կեցության հիմունքները: Ուսուցիչները պետք է գիտելիք ունենան այս հիմնական հասկացությունների մասին. սոցիալական բազմազանություն, մշակույթի դինամիկ բնույթ և ինքնություն, և այլն. Նրանք պետք է խորհեն սոցիալական արժեքների շուրջ և զարգացնեն միջմշակութային կոմպետենցիաներ, սոցիալական վերաբերմունք և հմտություններ, որոնք խթանում են սոցիալական ներառումը, խտրականության և ռասիզմի դեմ պայքարը:
- • Տնտեսական գրագիտությունը վերաբերում է անհատների/խմբերի միջև փոխհարաբերություններին և հասարակության տնտեսական իրավիճակին (աշխատանքի և սպառողների շուկա, սոցիալական պաշտպանություն, նվազագույն աշխատավարձ, գնողունակություն, և այլն): Ուսուցիչները պետք է իմանան և հասկանան, թե ինչպես են աշխատում տնտեսությունները, այդ թվում՝ պետք է իմանան բիզնեսի, կորպորացիաների և ֆինանսական ծառայությունների դերի, սպառողների իրավունքների և պարտականությունների, գործատու/աշխատող հարաբերությունների և բարոյագիտական սպառողականության ազդեցությունների մասին: Նրանք պետք է ներգրավեն աշակերտներին այնպիսի ՄՌ հասկացությունների շրջանակում, ինչպիսիք են օրինակ՝ աշխատանքի իրավունքը և կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքները,
- • Եվրոպական և գլոբալ գրագիտությունը կամ «գլոբալ քաղաքացիություն» կարող են թվալ տարբեր հասկացություններ: Այն վերաբերում է գլոբալ փոխադարձ կապվածության ճանաչմանը և խթանմանը, կայունության հարցերին և ապագա սերունդներին վերաբերող խնդիրներին: Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն եվրոպական հասարակությունների միության և բազմազանության մասին, նրանք պետք է հասկանան աշխարհը՝ որպես գլոբալ համայնք և պետք է ընդունեն դրա քաղաքական, տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալական հետևանքները: Նրանք պետք է կարողանան օգնել աշակերտներին հասկանալ փոխադարձ կախվածության գաղափարը՝ օգտագործելով այնպիսի իրավիճակներ, որոնք ծանոթ են երիտասարդներին և երեխաներին:

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից շատերում ԺՔԿ/ՄԻԿ-ը դիտվում է որպես նախնական և միջնակարգ կրթության ուսումնական ծրագրերի հիմքում ընկած կազմակերպական սկզբունք: Այն համարվում է ընդհանուր կրթական նպատակ, որը կարելի է մեկնաբանել տարբեր կերպ՝ ուսումնական ծրագրի և կրթության առավել լայն կառույցների շրջանակում: Այնուամենայնիվ, ուսումնական ծրագրի շրջանակում ներառված ԺՔԿ/ՄԻԿ- տարբեր ուսումնական համակարգերում կարող է տարբեր լինել՝ հաշվի առնելով քաղաքացիության կրթության ավանդույթները և գաղափարները, կրթության մակարդակը և այլն: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասին Rec(2002)12 առաջարկությունը հստակեցնում է, որ կրթական համակարգի բոլոր մակարդակներում և բնագավառներում պետք է իրագործվի ԺՔԿ/ՄԻԿ-ը որպես ուսումնական ծրագրերի մաս՝ որպես առանձին ուսումնական առարկա, կամ ինտեգրված այլ առարկաների շրջանակում, կամ որպես միջառարկայական թեմատիկա: Այս առաջարկության մեջ ընդգծվում է այն գիտելիքների, վերաբերմունքի և հմտությունների ձեռք բերումը դյուրացնելու միջոլորտային մոտեցումների անհրաժեշտությունը, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում միասին գոյակցելու համար:

Յուրաքանչյուր երկրում կախված աշակերտների տարիքից, կրթության մակարդակից և ուսումնական ծրագրի կառուցվածքից՝ քաղաքացիական կրթությունը կարող է առաջարկվել.

- որպես առանձին առարկա, որը կարող է լինել պարտադիր կամ ընտրովի,
- որպես մեկ կամ մի քանի առարկաներում ինտեգրված ուսումնական ծրագիր (հաճախ պատմություն, հասարակագիտություն, բարոյագիտություն և կրոն, էթիկա, փիլիսոփայություն, աշխարհագրություն ու լեզուներ առարկաներից),

- կամ, ի վերջո՝ որպես միջառարկայական կրթական թեմա կամ սկզբունք, այնպես, որ ԺՔԿ/ՄԻԿ հայեցակետերը ենթադրաբար կամ հստակ առկա լինեն ուսումնական ծրագրի բոլոր առարկաներում և կրթության բոլոր մակարդակներում՝ դպրոցում և դպրոցից դուրս:

Այս վերջին մոտեցման հետ կապված վտանգը կայանում է նրանում, որ այն ոլորտը, որը նախատեսված է լինել ամենուր, ոգեշնչել ամբողջ ուսումնական ծրագիրը, կարող է, ի վերջո, ոչ մի տեղ չլինել: Երբ որևէ ոլորտ բոլորի պատասխանատվությունն է, երբեմն այն կարող է դառնալ ոչ մեկի պատասխանատվությունը:

Այստեղ կարևոր է նշել, որ ուսումնական ծրագրի այս տարբեր մոտեցումները փոխադարձաբար իրարամերժ չեն, և, իրականում, կարող են ուժեղացնել միմյանց:

4.2. Կոմպետենցիա թիվ 1

Կոմպետենցիա թիվ 1. ԺՔԿ/ՄԻԿ նպատակները և խնդիրները

Արժեքահեն գիտելիքի, հմտությունների, գործողությունների վրա հիմնված և փոփոխություններին ուղղված կոմպետենցիաների զարգացմանն ուղղված ԺՔԿ/ՄԻԿ-ի որոշիչ նշանակության մասին հասկացողությունը ընդլայնում է երիտասարդների հնարավորություններն ու իրավունքները, հզորացնում սոցիալական արդարությունն ու ժողովրդավարական ազատությունը:

4.2.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիային կարող են մասնավորապես ցուցաբերել, որ իրենք՝ օրինակ,

- իրազեկ են, թե ինչպես է սահմանված ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքների և ըմբռնման շրջանակը (շատ երկրներում և շատ առարկաների գծով ուսուցիչների համար նախատեսված կրթական դասընթացների ժամանակ ուսուցիչներից պահանջվում է իրենց վերապատրաստման ընթացքում ուսումնասիրել կրթության բնույթը, փիլիսոփայությունը, նպատակները և իրենց մասնագիտական առարկաների ոլորտները):
- ունակ են փոխանցելու ոգևորությունը, ընդգրկումը և բարձրորակ ու ակտիվ ԺՔԿ/ՄԻԿ-ի ուղղորդող հատկանիշները:

Սա ենթադրում է, որ վերապատրաստման դասընթացների ժամանակ հնարավորություն պետք է ստեղծվի խորհելու համար, օրինակ՝

- ինչու է ԺՔԿ/ՄԻԿ-ին առաջնահերթ նշանակություն տրվում ժամանակակից հասարակության մեջ,
- ինչ դեր կարող են կատարել դպրոցները և ուսուցիչները նման զարգացումներում,
- ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող մրցակցող սահմանումների բնույթը, որը կարևոր նշանակություն ունի դասավանդման մեջ ընդգրկելու և ուղղորդելու համար, ինչպես նաև ուսուցման մոտեցումների առումով,
- ԺՔԿ/ՄԻԿ-ի հնարավորությունները և մարտահրավերները (ինչումն է կայանում տարբերությունը),
- ինչ գիտելիքներ, լեզու, հմտություններ, արժեքներ, վերաբերմունք և դիրքորոշում է փորձում ԺՔԿ/ՄԻԿ-ը խթանել,
- ԺՔԿ/ՄԻԿ-ի առանցքային կազմակերպական հասկացությունները,
- ինչ են ասում ԺՔԿ/ՄԻԿ-ի առնչությամբ ազգային, եվրոպական և գլոբալ մակարդակներով կատարված հետազոտությունները

4.2.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 1. ԺՔԿ/ՄԻԿ նպատակները և խնդիրները	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք ծանոթ չեք ԺՔԿ/ՄԻԿ-ին, դրա կարևորությանը, նպատակներին և խնդիրներին: Դուք քիչ պատկերացում ունեք քաղաքացիական «գրագիտությունների» մասին և ինչպես կարող են դպրոցները զարգացնել դրանք:*	**Փորձեք անել հետևյալը.** • ծանոթացեք ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմունքների, դրա նպատակների և խնդիրների հետ, • Ձեր մտքում հստակեցրեք ԺՔԿ/ՄԻԿ-ի մաս կազմող տարբեր «գրագիտությունները», • մտածեք դասավանդման Ձեր բնագավառի մասին և կապեր գտեք ԺՔԿ/ՄԻԿ-ի հետ Ձեր սեփական մասնագիտական պրակտիկայի համար, • որոշեք, թե ինչ «գրագիտություններ» կարելի է զարգացնել Ձեր առարկան և հարակից ուսումնական ծրագիրը դասավանդելիս, • տեղեկություններ փնտրեք տեղական, ազգային և եվրոպական կոլեգաների դրական փորձի մասին, երբ վերջիններս կիրառում են ԺՔԿ/ՄԻԿ-ը իրենց պարապմունքների ժամանակ, • մտածեք, թե ինչպես կարել է ներառել արժեքահեն ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները, փորձի վրա հիմնված ԺՔԿ/ՄԻԿ հմտությունները և փոփոխություններին ուղղված ԺՔԿ/ՄԻԿ կոմպետենցիաները Ձեր պարապմունքների ժամանակ:
Քայլ 2 (զարգացում) *Դուք ծանոթ եք ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմունքներին և գիտեք, թե տեսականորեն ինչպես կարող եք խթանել կրթական համակարգը և ազգային քաղաքականությունները, բայց հազվադեպ եք ներառում ԺՔԿ/ՄԻԿ-ը դասավանդման ընթացքում:*	**Փորձեք անել հետևյալը.** • Ձեր ուսումնական ծրագրում փնտրեք այն թեմաները, որտեղ հնարավոր է ներառել ԺՔԿ/ՄԻԿ-ը, • սահմանեք կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներ՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի տեղը և կարգավիճակը Ձեր ուսումնական ծրագրում և/կամ առարկայական ոլորտում որոշելու համար, • ուսումնական պլանում համապատասխան բաժիններ հատկացրեք՝ զարգացնելու համար արժեքահեն գիտելիքը, գործողությունների հիման վրա ձեռք բերվող հմտությունները և ներառեք փոփոխություններին ուղղված կոմպետենցիաները, • որոշեք, թե դասավանդման և ուսուցման ինչ մեթոդներ եք օգտագործելու ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները, հմտությունները և կոմպետենցիաները զարգացնելու համար, • պլանավորեք և դասավանդեք ԺՔԿ/ՄԻԿ մի քանի դասեր:
Քայլ 3 (հաստատում) *Դուք նախապատրաստել եք ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելու դասերը Ձեր դասարաններում և ավելի շատ վստահություն եք ձեռք բերում ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքների և տրամաբանության առումով: Այնուամենայնիվ, դուք անվստահ եք զգում բարդ իրավիճակների և հասկացությունների հետ աշխատելիս և ռիսկային ու ավելի «բաց» դասավանդման մեթոդներ կիրառելիս: Դուք վստահ չեք Ձեր դասավանդման արդյունավետության և դրական ազդեցության հարցում:*	**Փորձեք անել հետևյալը.** • ԺՔԿ/ՄԻԿ-ը Ձեր դասավանդման գործընթացում ներառելիս՝ պարզ եղեք Ձեր նպատակների և խնդիրների մասին Ձեր աշակերտների հետ խոսելիս, • որոշեք քաղաքացիության որ հասկացությունն եք փորձելու զարգացնել ամեն անգամ, • նախատեսեք հետադարձ կապ ստանալ Ձեր դասավանդման արդյունավետության առնչությամբ (օրինակ՝ նախօրոք հստակեցրեք կոնկրետ առաջադրանքների հաջողության չափանիշները), • վերլուծեք և ամփոփեք աշակերտի սովորածը յուրաքանչյուր դասից հետո՝ անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ, • վերահսկեք ԺՔԿ/ՄԻԿ տարբեր հասկացությունների ներառումը Ձեր դասավանդման գործընթացում:
Քայլ 4 (կատարելագործում) *Դուք լավ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ եք ձեռք բերել որոշակի առարկայի գծով ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելու համար: Դասավանդման ընթացքում Դուք հասկանում եք, թե աշակերտները ինչպես են զարգանում: Դուք ունակ եք գնահատելու նրանց ձեռքբերումները քաղաքացիության ոլորտում:*	**Փորձեք անել հետևյալը.** • կիսեք դրական փորձը այլ առարկաների գծով Ձեր գործընկերների հետ, • համայնքում գործընկերներ գտեք, ովքեր կարող են օգնել Ձեզ զարգացնելու Ձեր նպատակները և նախապատրաստելու ԺՔԿ/ՄԻԿ ծրագրի իրագործմանը աշակերտների հետ, • օգնեք զարգացնելու ԺՔԿ/ՄԻԿ-ը որպես դպրոցական համակարգի մոտեցման և դպրոցական ոգու մաս:

4.3. Կոմպետենցիա թիվ 2

Կոմպետենցիա թիվ 2. ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող միջազգային հիմնական քաղաքականությունները և սկզբունքները

ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և հիմնական հասկացությունների մասին Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից մշակված շրջանակները՝ միջազգային երկխոսության զարգացումներին համահունչ. դրանց արտացոլումը ազգային, տեղական և հանրակրթական քաղաքականություններում և ուսուցիչների մասնագիտական դերը դասարանում և դասարանից դուրս:

4.3.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ այս կոմպետենցիան, կարող են ցույց տալ, որ իրենք ունակ են քննադատաբար անդրադառնալ հետևյալ խնդիրներին և հարցերին.

- Ի՞նչ հիմնական գաղափարներ և արժեքներ են ընկած միջազգային և եվրոպական երկխոսության ենթատեքստում:
- Ինչպե՞ս է աշխատում ԺՔԿ/ՄԻԿ-ը աջակցող և խթանող միջազգային և եվրոպական համակարգը: Ի՞նչ բնույթ ունեն մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքների վերաբերյալ միջազգային և եվրոպական պարտավորությունները: Ինչո՞ւմն է կայանում իրավաբանորեն պարտադիր և բարոյապես ու քաղաքականապես պարտադիր փաստաթղթերի տարբերությունը:
- Ի՞նչ կոնկրետ դեր են կատարում միջազգային և եվրոպական կազմակերպությունները և ազգային ու տեղական կառավարությունները, հաստատությունները և կազմակերպությունները՝ միջազգային և եվրոպական պարտավորությունները կատարելիս:
- Որո՞նք են ԺՔԿ/ՄԻԿ-ին առնչվող հիմնական միջազգային և եվրոպական արժեքները, քաղաքականությունները, սկզբունքները և ծրագրերը, այդ թվում՝ մշակված Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից: Ինչպե՞ս են դրանք մշակվել: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ունեն հիմնական հասկացությունները և մեթոդները: Ինչպե՞ս են առնչվում տարբեր հասկացությունները:
- Ինչպե՞ս են ԺՔԿ/ՄԻԿ միջազգային և եվրոպական քաղաքականությունները և սկզբունքները առնչվում ազգային, տեղական և ինստիտուցիոնալ մակարդակներում տեղի ունեցող փոփոխությունների, այդ թվում ուսուցիչների վերապատրաստման մասով փոփոխությունների հետ:
- Ի՞նչ դեր ունեն ազգային և տեղական մակարդակներում քաղաքականություն մշակողները, ուսուցիչների վերապատրաստման հաստատությունները, հետազոտական ինստիտուտները, կրթական հաստատությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և անհատները միջազգային տարածում ունեցող ԺՔԿ/ՄԻԿ նպատակները և արժեքները խթանելու հարցում: Ինչու՞մն է կայանում անհատ քաղաքացիների կենտրոնական դերը միջազգային և եվրոպական արժեքները և սկզբունքները խթանելու հարցում:
- Ինչպե՞ս կարող են ուսուցիչները նպաստել և խթանել ԺՔԿ/ՄԻԿ միջազգային սկզբունքները և քաղաքականությունները իրենց դպրոցում և դասարաններում:
- Ինչու՞մն է կայանում ԺՔԿ/ՄԻԿ միջազգային սկզբունքները և քաղաքականությունները խթանելու առավելությունները և խոչընդոտները: Ինչպե՞ս կարելի է իրականություն դարձնել այս բարձր կատարելատիպերը միջազգային և եվրոպական համագործակցության միջոցով:

4.3.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 2. ԺՔԿ/ՄԻԿ-ին վերաբերող միջազգային հիմնական քաղաքականությունները և սկզբունքները	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք ծանոթ չեք ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների, քաղաքականությունների և գործելակերպերի միջազգային համատեքստին: Իրականում, դրանք բոլոր թողում են անհաղթահարելի, վերացական և չոր տպավորություն: Դուք չեք հասկանում, թե ինչումն է կայանում միջազգային և եվրոպական կազմակերպությունների առանձնահատուկ դերը: ՄԱԿ-ի սկզբունքները և եվրոպական կոնվենցիաները շատ հեռու են թվում Ձեր ամենօրյա կրթական գործընթացից:*	**Փորձեք անել հետևյալը.** • ծանոթացեք այս ոլորտում միջազգային քաղաքականության առաջատար փաստաթղթերի հեշտ յուրացվող մի քանի համառոտ շարադրանքների հետ՝ ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», «Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիա»: Գոյություն ունեն զգալի համընկնումներ: Որոշեք, թե որոնք են Ձեզ համար առաջին տաս սկզբունքները, որոնք առնչվում են որպես մանկավարժ Ձեր կողմից իրականացվող դերին: • տեղեկություններ հավաքեք և փորձեք հնարավորինս դասընթացներ անցնել այդ ոլորտում:
Քայլ 2 (զարգացում) *Դուք իրազեկ եք, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի առնչությամբ գոյություն ունեն միջազգային քաղաքականություններ և սկզբունքներ, և տեսականորեն գիտեք, որ դրանք կարելի է խթանել ազգային և դպրոցական քաղաքականությունների միջոցով, բայց դեռ հազվադեպ եք ներառում ԺՔԿ/ՄԻԿ-ը ձեր դասավանդման գործընթացում:*	**Փորձեք անել հետևյալը.** • իմացեք, թե ազգային և տեղական քաղաքականություն մշակողներն ինչպես են գործնականում արտահայտել ԺՔԿ/ՄԻԿ-ի միջազգային կիրառում ունեցող նպատակները և արժեքները բնորոշ իրավիճակում: Ինչպե՞ս է արտահայտված դա Ձեր ուսումնական ծրագրում և դասագրքերում: • առանձնացրեք որոշակի տարիքին համապատասխան մի քանի դասարանային աշխատանքներ, որոնք կարելի է կիրառել իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցերը հետազոտելիս: Եվրոպայի խորհուրդը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը այս հարցի շուրջ մշակել են մի քանի գերազանց կրթական նյութեր Եվրոպայի խորհրդի շատ անդամ երկրներում, • առանձնացրեք ֆիլմեր և/կամ ֆիլմերից հատվածներ, որոնց միջոցով հնարավոր է ցուցադրել ԺՔԿ/ՄԻԿ քաղաքականությունները և սկզբունքները:
Քայլ 3 (հաստատում) *Դուք ավելի շատ վստահություն եք ձեռք բերում ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքների և տրամաբանության առումով: Ձեր դասավանդման ժամանակ կիրառվում են գլոբալ մոտեցումներ, և այն հիմնականում միջազգային է: Դուք հասկանում եք տվյալ ոլորտի մարդու իրավունքների հիմունքները: Այնուամենայնիվ, դուք բավարար փորձ չունեք եվրոպական հայեցակետերի հիման վրա դասավանդելիս և Ձեր դասավանդումը դեռևս մեծապես կենտրոնացած է դասարանի վրա:*	**Փորձեք անել հետևյալը.** • փնտրեք արտաքին գործընկերներ և դաշնակիցներ, օրինակ՝ միջազգային զարգացման հասարակական կազմակերպությունների կամ Ամնեսթի Ինթերնեշնլի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի նման կազմակերպությունների շրջանակից, որպեսզի վերջիններս օժանդակեն աշակերտներին առավել խորը զբաղվելու մարդու իրավունքներին առնչվող խնդիրներով, • մտածեք դպրոցների թվինինգներ ստեղծելու ներուժի մասին. կարող եք հետաքրքրվել, թե ինչ ձևով կարելի է դա անել, և ԵՄ անդամ պետություններում կարող եք գտնել ֆինանսավորման հնարավորություններ Կոմենիուս ծրագրի միջոցով, • մտածեք մեկ դասարան կամ ամբողջ դպրոցը Եվրոպայի միջազգային օր միջոցառմանը ներգրավելու մասին (այս միջոցառումը բավականին կանոնավոր կերպով է տեղի ունենում): Սա կօգնի ընդլայնել տարբեր եվրոպական մշակույթների և հարցերի մասին երիտասարդների ընկալումները գործնական և հետաքրքիր աշխատանքների միջոցով (օրինակ՝ տարբեր դասարաններ կարող են հետազոտել տարբեր երկրների մասին, պատրաստել շնորհանդեսներ և այլ բնույթի ցուցադրումներ):
Քայլ 4 (կատարելագործում) *Դասարանային դասավանդմամբ և միջազգային կողմնորոշման խորը հանձնառությամբ Դուք սկսում եք զարգացնել երիտասարդների մոտ գլոբալ քաղաքացիության խորն արմատավորված զգացողություն: ԺՔԿ/ՄԻԿ-ին առնչվող միջազգային քաղաքականությունների մասին գիտելիքներն օժանդակել դպրոցի արտաքին կողմնորոշմանը:*	**Փորձեք անել հետևյալը.** • մասնակցեք միջազգային նախաձեռնություններին, որոնք հնարավորություն են տալիս երիտասարդներին իրականացնել միջազգային համատեղ ծրագրեր, • գտեք համայնքում գործընկերներ, որոնք կօգնեն Ձեզ առաջ տանելու Ձեր նպատակները, • այդ նախաձեռնություններում մասնակից դարձրեք ամբողջ աշխատակազմին և դպրոցի տնօրենին, • շարունակեք ավելի շատ կապող օղակներ ստեղծել և զարգացնել Ձեր դպրոցի ուսումնական ծրագիրը՝ եվրոպական և գլոբալ կողմնորոշման առումներով: Մտածեք, թե ինչպես կարող են թեմաները տարեցտարի վերանայվել՝ բարդության առավել պահանջկոտ մակարդակներում:

4.4. Կոմպետենցիա թիվ 3

Կոմպետենցիա թիվ 3. ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագրի և ուսումնասիրության ծրագրերի չորս փոխկապակցված բաղադրիչների մասին գիտելիքներ՝ քաղաքական և իրավական հայեցակետ, սոցիալական և մշակութային հայեցակետ, տնտեսական հայեցակետ և եվրոպական ու գլոբալ հայեցակետ: Ուսուցիչները պետք է կարողանան զարգացնել աշակերտների քաղաքացիական կրթության մասին գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը, արժեքները և ակտիվ մասնակցության դիրքորոշումը և միմյանց հետ կապակցել ուսուցման տարբեր կողմեր:

4.4.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան կարող են ցուցաբերել հետևյալ կերպ, օրինակ՝

- հասկացել են, թե ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքներն ու ըմբռնումը ինչպես են ազդում դասապրոցեսի վրա: Սա կարող է նշանակել օրինակ՝ ԺՔԿ/ՄԻԿ գաղափարների և հմտությունների ընկալման ցուցադրում և աշակերտների ամենատարածված թյուրըմբռնումների և սխալների շտկում,
- ուսուցիչները կարող են ցույց տալ, որ իրենք տիրապետում են տեղեկություններին, այդ թվում՝ դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Նրանք պետք է կարողանան հստակ ներկայացնել ԺՔԿ/ՄԻԿ մի շարք հիմնական գաղափարների շուրջ բովանդակությունը՝ կիրառելով համապատասխան առարկայական բառապաշար և կիրառելով գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը,
- փորձեք իմանալ, թե մտածողության որ մակարդակի վրա են գտնվում աշակերտները և ինչպես կարող են զարգացնել իրենց ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները, հմտությունները և մասնակցությունը: Պետք է կարողանալ աջակցել աշակերտների ուսուցմանը՝ նպատակի հստակ ընկալման, նախկինում սովորածի վրա կառուցելու համապարփակ մտածելակերպի և հետագայում սովորելու և ԺՔԿ/ՄԻԿ բնագավառում ձեռքբերումներ ունենալու առումով: Նրանք պետք է կարողանան առանձնացնել ուսուցման տարբեր կողմերը, օրինակ՝
  - գիտելիք և հիմնական հասկացություններ՝ ժողովրդավարության և քաղաքացիության հասկացություններ, քաղաքացիների քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ (Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա), մարդու իրավունքներ, քաղաքական գրագիտություն, օրենքի գերակայություն, սոցիալ- մշակութային բազմազանություն և ինքնություն, կայուն զարգացում, գլոբալ փոխադարձ կախվածություն, տեղական, ազգային և գլոբալ մակարդակներով գործող տնտեսական ուժեր, բարոյագիտական սպառողականության և մասնակցության գործընթացներ, համերաշխություն և սոցիալական համախմբվածություն,
  - հմտություններ՝ քննադատական մտածողություն, հարցում, խնդիրների լուծում, թիմային աշխատանք, պլանավորում և որոշումների կայացում, ՏՀՏ-ի կիրառում հետազոտական և հաղորդակցության նպատակներով, այլ մարդկանց տեսանկյունից հարցազրույցների անցկացում, կարծիքների և որոշումների իրատեսական հիմնավորում, փաստարկների բերում և բանավեճ, վստահություն, կոնֆլիկտների լուծում, մտքերի գրավոր և բանավոր հաղորդում, վերանայում և ինքնաանդրադարձ,
  - վերաբերմունք և դիրքորոշում՝ սոցիալական և մշակութային տարբերությունների և ժառանգության նկատմամբ հարգանք, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների փոխադարձ կախվածության ընկալում, այլոց հետ համագործակցություն և գործընկերություն, լայնախոհություն, ճշմարտության հանձնառություն, հանդուրժողականություն, կարեկցանք, մշակութային բազմազանության նկատմամբ հարգանք, ռասիզմի դեմ պայքար և սոցիալական արդարություն, անհամաձայնությունները խաղաղ կարգավորելու դիրքորոշում, համայնքի շահերից ելնելով կամավոր աշխատանք կատարելու հանձնառություն,
  - արժեքներ՝ մարդու իրավունքներ (մարդու արժանապատվության հարգանք, այլոց իրավունքները պաշտպանելու պարտականություն), ժողովրդավարական արժեքների և գործելակերպերի, այդ թվում՝ օրենքի գերակայության, քաղաքական բազմախոհության, ժողովրդավարական ազատությունների և հավասարության գաղափարի նկատմամբ հարգանք, շարունակական մտածելու ցանկություն, խաղաղության/առանց բռնությունների հարաբերության հանձնառություն, արդարություն, հավասարություն և ներգավման ու ակտիվ քաղաքացիության արժևորում,
- ակտիվ մասնակցություն՝ տարբեր մակարդակներում տեղեկացված և պատասխանատու գործողությունների նախաձեռնում, քվեարկություն, ներկայացուցչություն, լոբբինգ, քարոզարշավ և պաշտպանություն:

4.4.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 3. ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագրերի և ուսուցման ծրագրերի բովանդակությունը	
Քայլ 1 (կենտրոնացում) *Ձեր ընկալումները ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին սահմանափակ են բովանդակության, մասշտաբների և ձգտումների առումով: ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագիրը պլանավորված չէ և մասնատված է: Դուք չեք հասկանում, թե ինչ կապ կարող է ունենալ ԺՔԿ/ՄԻԿ-ը այլ ուսումնական ծրագրի առարկաների հետ: Դուք բավականաչափ չեք կարևորում կրթության մեջ ժողովրդավարական արժեքները:*	Փորձեք անել հետևյալը. • հնարավորություններ փնտրեք իմանալու, թե լավ ԺՔԿ/ՄԻԿ-ն ինչպիսին է լինում: Դրական փորձի մասին գիտելիքների, վերապատրաստողների կամ արտաքին փորձագետների հետ կապերի, կամ այլ դպրոցներ այցելությունների միջոցով հասկացեք, թե որն է ԺՔԿ/ՄԻԿ-ի «տեսլականը», • առանձնացրեք թեմաներ, որտեղ Ձեզ վստահ չեք զգում ԺՔԿ/ՄԻԿ-ի գիտելիքների առումով, բայց որտեղ հնարավորություններ կան նոր դասերի պլաններ մշակելու համար: Այս պլանների մասին խոսեք մյուս ուսուցիչների հետ: Կազմակերպեք դասալսում՝ տեսնելու համար, թե այլ փորձառու գործընկերներ ինչպես են դասավանդում նմանատիպ թեմաներ: • Պլանավորման նախնական փուլում հիշեք, որ ԺՔԿ/ՄԻԿ մշակելու հմտությունները և գործընթացները նույնքան կարևոր են, որքան գիտելիքը: Դասի պլանը մշակելիս հստակ առաջնահերթություն տվեք ուսուցման գործընթացներին:
Քայլ 2 (զարգացում) *Դուք սկսել եք դասավանդել ԺՔԿ/ՄԻԿ-ի որոշ տարրեր Ձեր դասարանում/առարկայի գծով: Դուք օգտվում եք հրատարակված ռեսուրսներից կամ դասագրքերից՝ Ձեր սեփական ուսումնական նյութերը մշակելու փոխարեն: Դուք դեռևս ունեք բավականին մեծ «բացթողումներ» գիտելիքի առումով, օրինակ՝ դուք համոզված չեք քաղաքական հարցերին և գաղափարներին ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին: Դուք վերապատրաստվել եք, բայց գտնվում եք տեսությունը գործնականում կիրառելու նախնական փուլում:*	Փորձեք անել հետևյալը. • սկսեք հավաքել առարկայական գիտելիքներ պարունակող նյութեր մեդիայից՝ թերթերից կտրատած հատվածներ, նորություններից հատվածներ, որոնք հանդիսանում են ԺՔԿ/ՄԻԿ հիմնական խնդիրների, հարցերի և գաղափարների օրինակներ: Այս դեպքում առարկայական գիտելիքներից Ձեր սեփական վստահությունը կամրապնդվի և աշակերտներին դուր կգա թեմատիկ նյութը, • քննադատաբար վերանայեք Ձեր կողմից օգտագործվող դասագրքի նյութերը: Ի՞նչն է աշխատում և/կամ ի՞նչն է հետաքրքրում աշակերտներին: Կա՞ն արդյոք այլ առցանց լավ ռեսուրսներ, որոնցով կարելի է հետաքրքրվել՝ կազմված հասարակական կազմակերպությունների, բարեգործական կազմակերպությունների կամ մասնագիտական ասոցիացիաների կողմից: Հարցրեք ինքներդ Ձեզ, թե ինչպես կարող եք ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսուցման գործունեությունը դարձնել ավելի իմաստալից, հիշարժան և աշակերտների հետաքրքրություններին համապատասխան, • վերցրեք ԺՔԿ/ՄԻԿ մեկ առանցքային գաղափար, օրինակ՝ ժողովրդավարություն, հավասարություն, ազատություն կամ արդարություն, և կազմեք դասի կամ մի քանի դասերի պլաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին խորացնել իրենց ընկալումներն այդ գաղափարների շուրջ: Կիրառեք այդ հասկացությունը այն հարցերի նկատմամբ, որոնք հետաքրքրում են աշակերտներին: Ինչպես ձեզ, այնպես էլ նրանց քաղաքական կառույցները կամ ինստիտուտները կարող են թվալ «ձանձրալի». ստուգեք, թե արդյոք նրանք նույն զգացողություններն ունեն քաղաքական հարցերի առումով:
Քայլ 3 (հաստատում) *Առարկայի դասավանդման ընթացքում Դուք Ձեզ վստահ եք զգում, միայն փոքրաթիվ հարցերն են մնում «քննարկումից դուրս»: Դուք որպես ուսուցիչ Ձեր դերն ընկալում եք ոչ միայն ԺՔԿ/ՄԻԿ-ի գիտելիքներ և հմտություններ, այլև աշակերտներին արժեքներ փոխանցելու առումով: ԺՔԿ/ՄԻԿ-ի ծրագիրը զարգանում է ամբողջ դպրոցում, այդ թվում՝ առանձին առարկայական ոլորտների գծով:*	Փորձեք անել հետևյալը. • լավ մտածեք, թե պլանավորված ուսումնական աշխատանքների ընթացքում ինչպես կարող եք խթանել աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ հմտությունները, օրինակ՝ աշակերտների հետազոտական հմտությունների որակի, թիմային աշխատանքի կամ համագործակցային ուսուցման զարգացման, կամ իրենց կարծիքները համոզիչ կերպով հիմնավորելու հարցում աշակերտներին օժանդակելու միջոցով, • ավելի լավ կիրառեք ՏՀՏ-ն ԺՔԿ/ՄԻԿ խթանելու ուսուցումը՝ ոչ միայն խնդիրներ հետազոտելիս, այլև բավականին արդյունավետ կերպով տեղեկություններ փոխանակելիս և ներկայացնելիս, • մտածեք, թե ինչպես կարող եք կիրառել ուսուցման գործունեության մասին Ձեր գիտելիքները ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրում:
Քայլ 4 (կատարելագործում) *Դուք գիտակցում եք, որ ուսուցման գործընթացում չափազանց կարևոր է հնարավորություն տալ աշակերտներին տեղեկատվական ոլորտից ընտրություն կատարելու:ԺՔԿ/ՄԻԿ-ը կանոնավոր կերպով քննարկվում է առարկայական և ներդպրոցական համակարգի հանդիպումների ընթացքում: Դուք բավականին հմուտ եք ԺՔԿ/ՄԻԿ տարբեր հայեցակետերում աշակերտների կոմպետենցիաները զարգացնելու հարցում:*	Փորձեք անել հետևյալը. • դուք գիտակցում եք, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական տարբերիչ առանձնահատկությունը աշակերտների կարողությունն է ընդգրկվելու իրական խնդիրների լուծման ոլորտում և քարոզելու «փոփոխություններին ուղղված գործողություններ» (տե՛ս կոմպետենցիա 11): Փորձեք անել ավելին, որպես անհատ ուսուցիչ՝ խթանելու համապատասխան և հետաքրքիր համայնքային ներգրավվածություն: Ինչպե՞ս կարող են համայնքային գործընկերները խթանել աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ փորձառությունը դասարանում: • շարունակեք ուշադրությունը կենտրոնացնել հարցադրումների հմտությունների վրա՝ օժանդակելու աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ պատրաստակամության ձևավորմանը: Խնդրեք գործընկերներին հետևել Ձեր դասավանդման փորձին, • կիսեք Ձեր փորձառությունը այլ դպրոցների հետ, մտածեք դպրոցների թվինինգի մասին՝ Ձեր երկրում կամ միջազգային մակարդակով:

4.5. Կոմպետենցիա թիվ 4

Կոմպետենցիա թիվ 4. ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման տարբեր հնարավոր իրավճակներ, ԺՔԿ/ՄԻԿ-ի ընկալումը որպես առանձին պարտադիր առարկա, որպես միջառարկայական մոտեցման մաս, որպես դպրոցական համակարգի մշակույթի հիմնարար բաղադրիչ, ինչպես նաև համայնքային ներգրավվածության և կապերի կենտրոնական նշանակություն ունեցող բաղադրիչ:

4.5.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիային կարող են ունենալ հետևյալ հմտությունները, օրինակ.

- ԺՔԿ/ՄԻԿ-ը գործողության մեջ՝ դպրոցական համակարգի մշակույթի համատեքստում, ԺՔԿ/ՄԻԿ- ի դասավանդումը դասարանում որպես ուսումնական ծրագրի մաս և դասասենյակից և դասավանդումը դպրոցի պատերից դուրս,
- տիրապետում են կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու մասնագիտական կոմպետենցիային և համապատասխան տարբերակներ են ընտրում՝ դասավանդման և ուսուցման տարբեր ռազմավարություններ կիրառելիս: Այս մասնագիտական կոմպետենցիան նպատակ ունի տրամադրել ներդասարանային (նաև դասարանից դուրս) փորձառություն երիտասարդների համար, որի միջոցով ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները վերածվում են ուսուցման կոնկրետ գործողությունների, որոնք հարմարեցված են աշակերտների տարիքային առանձնահատկություններին, կարողություններին և կարիքներին,
- ընտրում, հարմարեցնում և կիրառում են ԺՔԿ/ՄԻԿ համապատասխան մեթոդները,
- դպրոցում ունակ են զարգացնել ակտիվ մասնակցություն և ներգրավվածություն ,
- նրանց մասնագիտական կարողությունը պետք է վերաբերվի.
  - ներգրավման տարբեր հնարավորությունների մասին իրենց գիտելիքներին,
  - դպրոցի համայնքում, ինչպես նաև առավել լայն համայնքում և գլոբալ միջավայրում ակտիվ մասնակցությունը պլանավորելու և այն կառավարելու նրանց կարողությանը:

4.4.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 4. ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման տարբեր հնարավոր իրավիճակներ	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք չեք գնահատում ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման տարբեր վայրերի գոյությունը: Սովորաբար դուք սահմանափակվում եք Ձեր դասասենյակի տարածքով: Այդ չափով, դուք իրազեկ եք, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը գոյություն ունի, և որ այն բախվում է Ձեր կողմից նախկինում դասավանդած առարկայական եղանակների հետ:*	**Փորձեք անել հետևյալը.** • տեսեք «մեծ պատկերը»: Ինքներդ Ձեզ հարցրեք, թե Ձեր դպրոցում աշակերտները ԺՔԿ/ՄԻԿ-ի ինչ փորձառություն ունեն: Գծեք իրականացման վայրերի գծապատկերը Ձեր դասարանի համար: Դպրոցական համակարգի մշակույթի մաս կարող են կազմել քվեարկությունը, ակումբներում մասնակցությունը, «ընկերական խմբերը» կամ գործընկերային դասավանդման աշխատանքները: Ուսումնական ի՞նչ փորձառություն են նրանք ներկայումս ստանում: Ուսումնական ծրագրում ի՞նչ կապեր կան համայնքային խնդիրների և մտահոգությունների հետ:
Քայլ 2 (զարգացում) *Դուք սկսում եք գնահատել, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը կարող է արդյունավետ լինել, երբ այն քննարկում է ծրագրից դուրս խնդիրներ և իրավիճակներ: Դուք Ձեր պրակտիկայում կարող եք զգալ դասավանդման համայնքային հայեցակետի ներառման օգուտները:*	**Փորձեք անել հետևյալը.** • առանձնացրեք երեք եղանակ, որի ժամանակ Ձեր դասավանդումը կարող է կապվել ԺՔԿ/ՄԻԿ առարկայական բովանդակությանը: Այժմ վերանայեք «փոփոխություններին ուղղված» հնարավոր գործողությունների ցանկը էջ 66- ում: Ո՞վ կարող է դառնալ օգտակար գործընկեր համայնքում՝ Ձեր կողմից ընտրված ԺՔԿ/ՄԻԿ հարցի/գիտելիքի ոլորտի առնչությամբ:
Քայլ 3 (հաստատում) *Անցյալում դուք իրականում չեք մտածել, որ ԺՔԻ/ՄԻԿ-ին առնչվող դպրոցական համակարգի քաղաքականությունները և ոգին առնչություն ունեն Ձեզ հետ: Դա համարել եք դպրոցի ղեկավար կազմի պարտականությունը: Բայց դուք աստիճանաբար սկսում եք իրազեկ լինել հանրակրթության մեջ տեղի ունեցող փոփոխություններից:*	**Փորձեք անել հետևյալը.** • ծանոթացեք դպրոցում գործող կառույցների հետ, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին իրենց վերաբերող հարցերի շուրջ արտահայտելու իրենց կարծիքը: Որչափո՞վ է հնարավոր փոխանցել Ձեր դասարանի աշակերտների տեսակետները և գաղափարները առավել բարձր ներկայացուցչական մակարդակ: Ինքներդ Ձեզ հարցրեք, արդյոք կա մի բան, որը կարող եք անձամբ անել՝ առավել ժողովրդավարական մշակույթ օժանդակելու համար, • շարունակեք փնտրել, թե արդյոք կարելի է հաստատել ավելի ամուր և տրամաբանական կապեր դպրոցական համակարգի միջոցառումների և աշակերտների ուսումնական փորձառության միջև:
Քայլ 4 (կատարելագործում) *Դուք առաջ եք տանում ԺՔԿ/ՄԻԿ-ի տեսլականը՝ կապեր հաստատելով դպրոցական համակարգի քաղաքականությունների և գործելակերպերի, դասարանային և ուսումնական հնարավորությունների և համայնքային գործընկերությունների միջև: Դուք անձամբ այս կամ այն ձևով ներգրավված եք ԺՔԿ/ՄԻԿ երեք հայցեակետերից մեկում. ԺՔԿ/ՄԻԿ-ը գործողության մեջ՝ դպրոցական համակարգի մշակույթի համատեքստում:*	**Փորձեք անել հետևյալը.** • խորհուրդ տվեք, որ Ձեր դպրոցը ունենա համակարգեր, որոնք կանոնավոր կերպով ԺՔԿ/ՄԻԿ դասավանդման և ուսուցման գործընթացների վերաբերյալ հետադարձ կապ ապահովեն հիմնական շահագրգիռ կողմերից՝ աշակերտներից, կրթական գործընկերներից և ծնողներից, • մտածեք, թե ինչպես կարող է ՏՀՏ-ն խթանել աշակերտների հմտությունները, դրական փորձի փոխանակումը և արտաքին գործընկերների հետ հաղորդակցությունը, • մտածեք, թե արդյոք «համայնք» հասկացության ընկալման մեջ կարող են ներառվել եվրոպական և գլոբալ համայնքները, որոնց հետ կարելի է համատեղ աշխատել:

5. Բ խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ն զարգացնող մանկավարժական և կրթական գործունեություն դասարանում և դպրոցում

Կոմպետենցիաների այս խումբը վերաբերում է դասարանում և դպրոցում ԺՔԿ/ՄԻԿ-ի մոտեցումները իրականացնելուն: Այն պատասխանում է «ինչպե՞ս կարող են ԺՔԿ/ՄԻԿ-ը իրագործել դպրոցում» հարցին: Ուսուցիչները պետք է գտնեն հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս կարող եմ ես պլանավորել իմ աշխատանքները, որ կարողանամ խրախուսել աշակերտներին ակտիվ դեր ունենալ ուսուցման գործընթացում:
- Ո՞ր ուսուցիչների հետ կարող եմ աշխատել, որ կարողանամ ներառել ԺՔԿ/ՄԻԿ-ը այդ առարկաներում :
- Դասարանային միջավայրում ի՞նչ արժեքներ կապահովի կողմնորոշումը և ինչպե՞ս
- Վիճահարույց հարցերի մասին խոսելիս որքանո՞վ ինձ հարմար և վստահ կզգամ:
- Ո՞րն է աշակերտի ուսուցման գնահատման դրական փորձը, որը ես կարող եմ կիրառել իմ պրակտիկայում:

5.1 Համառոտ ակնարկ և տեսական հիմունքներ

Բոլոր ուսուցիչները պետք է հիմնավոր գիտելիքներ և ընկալում ունենան հետևյալի մասին.

Կոմպետենցիա թիվ 5. Մոտեցումների, մեթոդների և ուսուցման հնարավորությունների պլանավորում

ԺՔԿ/ՄԻԿ-ի գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, վերաբերմունքը և արժեքները ներառելու նպատակով նախատեսված մոտեցումների, մեթոդների և ուսուցման հնարավորությունների պլանավորման մեջ մեծ դեր է խաղում ակտիվ ուսուցումը և աշակերտների ներգրավումը:

Կոմպետենցիա թիվ 6. ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և գործելակերպերի ներառում սեփական դասավանդման պրակտիկայում

ԺՔԿ/ՄԻԿ-ի սկզբունքների և գործելակերպերի ներառումը մասնագիտական առարկաների շրջանակում (միջառարկայական ԺՔԿ/ՄԻԿ) կարող է խթանել գիտելիքը, հմտությունները և մասնակցությունը, կարող է նաև նպաստել ժողովրդավարության համակարգում երիտասարդների հնարավորությունների և իրավունքների ընդլայնմանը:

Կոմպետենցիա թիվ 7. Դպրոցում դրական ոգին պահելու նպատակով հիմնական կանոնների սահմանում

Վստահության, թափանցիկության և փոխադարձ հարգանքի կայուն մթնոլորտ ստեղծելու նպատակով հստակ հիմնավոր կանոնների սահմանում: Դասարանում վարքագծքի կառավարման ժամանակ հաշվի են առնում ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները՝ նպատակային և արդյունավետ ուսուցում ապահովելու համար:

Կոմպետենցիա թիվ 8. Աշակերտների բանավիճելու հմտություններն օժանդակելու նպատակով ռազմավարությունների մշակում

Դասավանդման մի շարք ռազմավարություններ և մեթոդաբանություններ, այդ թվում՝ դասարանի կողմից ճիշտ հարցադրումներ՝ օժանդակելու համար աշակերտների բանավեճի հմտությունները, հատկապես՝ նրբանկատ, վիճահարույց հարցերի շուրջ

Կոմպետենցիա թիվ 9. Գնահատման մոտեցումների կիրառում

Ինքնագնահատման և հավասարակիցների գնահատման կիրառումը՝ տեղեկացնելու աշակերտների առաջադիմության և նվաճումների մասին ԺՔԿ/ՄԻԿ բնագավառում:

Աղյուսակ 5. Բ խումբ. ԺՔԿ/ՄԻԿ-ն զարգացնող մանկավարժական և կրթական գործունեություն դասարանում և դպրոցում

Տեսական գիտելիքներ

Այս խմբի կոմպետենցիաները, հատկապես թիվ 5-ը և 6-ը սերտորեն կապված են թիվ 4 կոմպետենցիայի հետ, քանի որ աշխատանքների պլանավորումը և միջառարկայական մոտեցումների սահմանումը պահանջում են ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման համատեքստի մասին լավ գիտելիքներ և դրանց հնարավոր է հասնել միայն ուսուցիչների թիմային, համագործակցային ջանքերի միջոցով: Մենք մանրամասն չենք նկարագրի, թե այս հինգ կոմպետենցիաներից յուրաքանչյուրն ինչ է նշանակում:

Պլանավորման կոմպետենցիայի մշակումը պահանջում է ժամանակ, աջակցություն, հետադարձ կապ և համագործակցային աշխատանք: Այս ձևով այն առնչվում է ԺՔԿ/ՄԻԿ իրագործման համատեքստին վերաբերող 4-րդ կոմպետենցիային. այն ենթադրում է, որ ուսուցիչը գիտի, թե կարգապահական «մատուցման ինչ մոդել» պետք է կիրառվի՝ դասարանում, դպրոցում և համայնքում:

Ուսուցման աշխատանքների պլանավորումը ժողովրդավարության և ակտիվ քաղաքացիության նպատակով առանցքային կոմպետենցիա է, քանի որ այն ենթադրում է.

- ուսուցման հստակ նպատակների ձևավորում և փոխանակում,
- ուսուցման աշխատանքների առանցքային թեմայի սահմանում, թեմաների ընտրություն և դասաժամի կառավարում,
- թեմայի հասանելիության հարմարեցումը աշակերտին, բայց միևնույն ժամանակ խթանող աշխատանքների ընտրություն,
- ակտիվ մասնակցությանը օժանդակող արդյունավետ ռեսուրսների սահմանում,
- դասավանդման և ուսուցման գործընթացների մասին աշակերտների կողմից արդյունավետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում:

Այս կոմպետենցիան ենթադրում է, որ ուսուցման աշխատանքների նախագծերը հարմարեցված լինեն աշակերտների ուսուցման տարբեր ոճերին, որոնց ժամանակ աշակերտները ձևակերպում են հասկացություններ և հենվում են ԺՔԿ/ՄԻԿ թեմաների և խնդիրների վերաբերյալ նախկին գիտելիքից ձեռք բերված փորձառության վրա:[26] Ինչպիսին էլ լինի դասավանդվող առարկան, ուսուցիչը պետք է աշակերտներին մասնակից դարձնի ուսուցումը պլանավորելու գործընթացին՝ ներգրավելով նրանց քննարկումներում: Դրանով կկարողանա ապահովել ուսումնական պլանի, դասավանդման նախընտրելի մեթոդների, ուսուցման ռեսուրսների ընտրության և գնահատման համապատասխան միջոցների առումով աշակերտների տեղեկացվածությունը և բաց մասնակցությունը:

ԺՔԿ/ՄԻԿ-ի առարկայական ինտեգրումը նպատակ ունի խթանել ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին բովանդակային գիտելիքները՝ տարբեր առարկաներ դասավանդելու միջոցով: Սա կարևոր խնդիր է և ուսուցիչներից պահանջում է ուշադրություն: ԺՔԿ/ՄԻԿ-ի տարբեր հասկացություններ և բովանդակային ոլորտներ (օրինակ՝ քաղաքացիական հասարակության հետ բանավեճերը, շրջակա միջավայրի կայունության խնդիրը և այլն) կարելի է տարբեր մոտեցումներով ներառել տարբեր առարկաների ուսումնական պլաններում: Ուսուցիչները պետք է վերահսկեն ուսումնական ծրագիրը և համագործակցեն: Տարբեր առարկաներում ասելիքի ինտեգրումը տեղի է ունենում ընդհանուր հմտությունների առկայության պարագայում: Օրինակ, եթե մեր նպատակն է աշակերտների մոտ որպես ԺՔԿ/ՄԻԿ կարևոր առանձնահատկություն ինքնարտահայտում զարգացնելը, ապա բոլոր ուսուցիչները պետք է նպաստեն դրան:

Գործնականում ավելի նպատակահարմար է, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը սահմանափակվի «փոխադրող առարկաների» կառավարելի թվով: «Փոխադրող» առարկան այն առարկան է, որը բնական առնչություն ունի կամ ուսումնական ծրագրի բովանդակությամբ համընկնում է ԺՔԿ/ՄԻԿ-ի հետ: «Փոխադրող» առարկաներից ամենաակնառուն են հումանիտար և հասարակագիտական առարկաները: Սակայն եռանդուն ներգրավվումից չպետք է բացառվի այն առարկաները, ինչպիսիք են մաթեմատիկան, բնական գիտությունները, արվեստը և այլն: Օրինակ, սպորտով զբաղվելու եղանակները և «սպորտի» նկատմամբ մեր ձևավորված վերաբերմունքը կարող է «փոխադրող» տարր լինել ԺՔԿ/ՄԻԿ-ի համար:

Դասարանի կառավարումը և դասարանում դրական մթնոլորտի նպատակով հիմնական կանոնների ձևավորումն առանցքային են ԺՔԿ/ՄԻԿ-ի համար: Ժողովրդավարական ինստիտուտները և խմբերն իրենց անդամներից պահանջում են հարգել կանոններն և օրենքները: Անհրաժեշտ է, որ քաղաքացիներն ունակ լինեն բարոյական տեսանկյունից քննադատաբար մտածել իրենց գործելակերպի և ինստիտուտների մասին և կարողանան արդար վերաբերվել, մեկնաբանել կանոնները

26. Դուեր, Կ., Սպաջիկ-Վրկաս, Վ. և Ֆերեիրա Մարտինս, Ի., *Ժողովրդավարական քաղաքացիություն սովորելու ռազմավարությունները,* Եվրոպայի խորհուրդ, 2000թ.:

և օրենքները՝ ելնելով իրենց սեփական կյանքի փորձից: Բիլ Ռոջերսը ընդգծում է, որ վարքագծային քաղաքականությունները և մեթոդները դպրոցի և դասարանի մակարդակում պետք է հստակ առնչվեն իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև արդարության առանցքային գաղափարներին.

> Փորձենք մոտենալ բոլոր առարկաներին՝ իրավունքների, կանոնների և պարտականությունների տեսանկյունից և կտեսնենք, որ կարգապահության կենտրոնում ոչ միայն ուսուցչի հարաբերական իշխանությունն ու հեղինակությունն է (վաստակած և ոչ թե պարտադրված), այլև դասարանի աշակերտների համատեղ իրավունքները: Դրական կարգապահության կենտրոնական առանձնահատկությունն այն է, որ ուսուցիչները փորձեն ուղղորդել աշակերտներին պատասխանատվություն վերցնելու իրենց սեփական վարքագծի նկատմամբ՝ օգտագործելով այնպիսի բառապաշար, որն ընդգծում է աշակերտի ընտրության հնարավորությունը և ոչ թե ուսուցչի սպառնալիքը:[27]

«Վիճահարույց հարցերի դասավանդում» կոմպետենցիան պետք է լինի այն ուսուցիչների ուշադրության կենտրոնում, ովքեր հանգիստ և վստահ զգալու կարիք ունեն: ԺՔԿ/ՄԻԿ-ը աշակերտներից պահանջում է կիսել իրենց այն կարծիքներն ու գաղափարներն իրական կյանքի իրավիճակների շուրջ, որոնք վերաբերում են իրենց և իրենց համայնքներին (օրինակ՝ հանցագործություն, անարդարություն, երեխաների իրավունքների խախտումներ, շրջակա միջավայր և այլն: Ուսուցիչները պետք է սովորեն խրախուսել երիտասարդներին վստահորեն արտահայտելու իրենց կարծիքները՝ միևնույն ժամանակ հարգելով տարբեր տեսակետները: Նրանք նաև պետք է իմանան, թե վիճելի հարցերի շուրջ իրենց սեփական տեսակետները ե՞րբ կարող են արտահայտել:

Վիճահարույց հարցերի շուրջ նրբանկատ աշխատելու համար ուսուցիչների համար կարող է օգտակար լինել հետևյալ հարցերի շուրջ մտորելը.

- Որո՞նք են տվյալ հարցի հիմնական առանձնահատկությունները և հետևանքները:
- Ինչքանո՞վ եք համոզված տեղեկությունների ճշտության վերաբերյալ:
- Հարցի շուրջ ի՞նչ խմբեր են ներգրավված:
- Ինչպիսի՞ն են այս խմբերի շահերն ու արժեքները:
- Ինչպե՞ս, որտե՞ղ և ո՞ւմ հետ կարելի է քննարկել այդ հարցերի շուրջ:
- Ի՞նչ այլ տարբերակներ կան:
- Ինչպե՞ս կարելի է կամ պետք է համոզել մարդկանց փոխելու իրենց տեսակետները:
- Ինչպե՞ս կարելի է ազդել արդյունքների վրա. ինչքանո՞վ է դա մեզ վերաբերում:

Աշակերտների ուսուցման գնահատման ժամանակ կիրառվում են ԺՔԿ/ՄԻԿ համատեքստում գնահատման մի շարք մոտեցումներ: Գնահատման հարցի շուրջ այժմ ակտիվ բանավեճ է ընթանում: Վերջին տարիներին կրթական համակարգում շատ է քննարկվում ամփոփիչ և ձևավորող գնահատման առավելությունները և թերությունները:28[28] Կարող են կիրառվել մասնակցային մոտեցումներ, ինչպես օրինակ աշակերտների ինքնագնահատումը և հավասարակիցների գնահատումը՝ ԺՔԿ/ՄԻԿ մասին գիտելիքների, հմտությունների և ակտիվ մասնակցության ոլորտում աշակերտների առաջխաղացումների և ձեռքբերումների մասին տեղեկացնելու և դրանք գնահատելու նպատակով: Գոյություն չունի գնահատում ներդնելու և իրականացնելու մեկ եզակի «սցենար»: Այնուամենայնիվ, ինչ մոտեցումներ էլ որ կիրառվեն, պետք է ներդրվեն համակարգման և աշակերտների առաջխաղացման՝ նրանց ուսուցման որակի գնահատման արդյունավետ միջոցներ: Աշակերտների ուսուցման գործընթացը կշահի խոհեմ հետադարձ կապից:

Եվրոպական շատ երկրներում կարող են գոյություն ունենալ օրինական մտահոգություններ, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի գնահատման չափազանց կոշտ մոտեցումը կարող է <<ոչնչացնել>> երիտասարդների կողմից իրականացվող ակտիվ, հետաքրքրաշարժ ԺՔԿ/ՄԻԿ ծրագրերի ոգին: Այս վտանգը հատկապես մեծ է, երբ կիրառվում են «ամփոփիչ» մոտեցումներ և «ուսուցման համար գնահատման» ռազմավարություններ: Մյուս կողմից, «գնահատում հանուն ուսուցման» ռազմավարությունները կարող են առաջնային լինել ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքում, չնայած այս մոտեցումը դեռևս միայն մասամբ է ընդունվել Եվրոպայի երկրների և դպրոցների կողմից: 2003 թվականին կատարված մի ուսումնասիրություն սահմանում է «գնահատում հանուն ուուցման» մեթոդը՝ որպես «աշակերտների և ուսուցիչների կողմից փաստերի ձեռք բերման և դրանց մեկնաբանման գործընթաց՝ որոշելու, թե արդյո՞ք աշակերտները սովորում են,

27. Ռոգերս, Բ., *Կարգապահության լեզուն. Դասարանի արդյունավետ կառավարման գործնական մոտեցում,* Նորսքոթ Հաուս Փաբլիշերս, Փլիմաուս, 1994թ., էջ 14-15:
28. Բլաք, Փ., և այլոք, *Գնահատում հանուն ուսուցման. գործնական կիրառում,* Օփեն յունիվերսիթի փրես, Նյու Յորք, 2003 թ.:

ո՞ր ուղղությամբ պետք է առաջնորդվեն և ինչպես լավագույնս հասնեն այդտեղ»:[29] Այս մոտեցմամբ շեշտադրվում են ուսուցման ընդհանուր նպատակները և հաջողության հասնելու չափանիշները ըստ երիտասարդների և շեշտադրվում է ինքնագնահատման և հավասարակիցների գնահատման գործընթացներում աշակերտների ներգրավվածության նշանակությունը:

5.2. Կոմպետենցիա թիվ 5

Կոմպետենցիա թիվ 5. մոտեցումների, մեթոդների և ուսուցման հնարավորությունների պլանավորում

ԺՔԿ/ՄԻԿ-ի գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, վերաբերմունքը և արժեքները ներառելու նպատակով նախատեսված մոտեցումների պլանավորումը, որտեղ ակտիվ ուսուցումը և աշակերտների ներգրավումը մեծ դեր են խաղում:

5.2.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիային ցուցաբերում են հետևյալը, օրինակ.

- ունակ են ընտրել և պլանավորել ԺՔԿ/ՄԻԿ-ի տարբեր համատեքստերում մշակվող համապատասխանական կրթական գործողություններ, օրինակ՝ դպրոցական պարտադիր առարկայի կամ միջառարկայական համատեքստում ընտրել թեմաներ, որոնք պարզորոշ կերպով առաջատար են ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքի և գործընթացների համար: Օրինակ՝ ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակները կարող են թեմաներ հանդիսանալ դպրոցական պարտադիր բաղադրիչի համար, կամ արտադասարանային օրվա ուսուցման կամ աշխատանքների համար, ատոմային էներգիայի մասին կարելի է դասավանդել ֆիզիկայի ժամանակ՝ ԺՔԿ/ՄԻԿ բաղադրիչներով,
- գիտեն ինչպես պլանավորել հերթական դասերի շարք՝ ապահովելու համար ուսուցման կարճաժամկետ և երկարաժամկետ առաջընթացը, ինչը կհամապատասխանի ուսումնական ծրագրի պահանջներին և միջառարկայական կապի ամրապնդմանը:
- տեղյակ են ճանաչողական ոճերին, օրինակ՝ զգայական բազմակի մոտեցումներ՝ նպաստելու համար տեսողական, կինեսթետիկ, լսողական և բանավոր ունակություններ ունեցող աշակերտների ուսուցմանը դասարանում, համագործակցային/մրցակցային ուսուցում, թեմատիկ ուղղվածություն ունեցող/թեմային առնչվող հաղորդակցություն, կախյալ/անկախ ուսուցում, անդրադարձային/ազդակային մոտեցումներ, ոլորտային անկախություն/ոլորտային զգայունակություն, հանդուրժողականություն երկիմաստության նկատմամբ, և այլն,
- տեղյակ են աշակերտների ունեցած գիտելիքների, մտածելակերպի ու զգացողությունների մասին և գիտեն, թե ինչպես պլանավորել ռազմավարությունները և հարցադրումներ կատարել հիմնվելով ունեցած գիտելիքների վրա: Նրանք կարող են ձևավորել ուսուցման նպատակակետեր և դասերին տալ հստակ կառուցվածք՝ ապահովելու համար, որ աշակերտները հասկանան, թե ինչ է իրենցից ակնկալվում և կարողանան ակտիվ աշխատել ու համագործակցել,
- ուշադրություն են դարձնում հերթական տարրերի համապատասխան շարքին, ինչպիսիք են օրինակ՝ ներածությունը, առանցքային հարցերը, ամբողջ դասարանի համար ընձեռնված հնարավորությունները, խմբային, զույգով և անհատական աշխատանքը, անցումային փուլերը, պահանջվող ռեսուրսները և համապատասխան տարատեսակ աշխատանքները (օրինակ՝ բանավոր, տեսողական և շարժողական ուղղվածություն ունեցող միջոցներով խնդիրների լուծում, հետաքննություններ, համագործակցային ռազմավարություններ, ՏՀՏ-ի և այլ ռեսուրսների օգտագործում, ուսուցման խմբային վերանայում և գործնական աշխատանքներ),
- հասկանում են իրենց համայնքներում երիտասարդների ունեցած մտահոգությունները: Նրանք նաև ունակ են, օրինակ՝ օգնել երիտասարդներին մշակելու շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված իրենց սեփական ծրագիրը, որը կարելի է իրականացնել համայնքում:
- իրազեկ են, որ ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքների պլանավորումը լավ ելակետ է դասավանդման համար, բայց պլանավորումը պետք է նաև ճկուն լինի: Ուսուցիչների՝ իրենց դասավանդման ինքնագնահատականը էական է՝ ռազմավարությունները և աշխատանքները հարմարեցնելու, աշակերտների տարաբնույթ ուսուցման ոճերն ու կարիքները բավարարելու և ԺՔԿ/ՄԻԿ-ի ոլորտում աշակերտների ունեցած փորձի վրա հենվելու համար:

29. նույն տեղում:

5.2.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 5. մոտեցումների, մեթոդների և հնարավորությունների պլանավորում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք գտնում եք, որ ավելի շատ տեղեկությունների և օժանդակության կարիք ունեք ուսումնական աշխատանքները պլանավորելիս: Դուք գտնում եք, որ Ձեզ մանրամասն պլան է անհրաժեշտ ԺՔԿ/ՄԻԿ հիմնական թեմաների, հմտությունների, վերաբերմունքի, դիրքորոշման ու արժեքների վերաբերյալ, որոնք կարելի է ներառել դասերում: Ձեզանից երկար ժամանակ է պահանջվում դա պլանավորելու համար: Դուք գտնում եք, որ դասավանդման ռազմավարությունների վերաբերյալ որոշ տեղեկությունների կարիք ունեք՝ առավել արդյունավետ խթանելու համար քաղաքացիական հասարակությունում կամ համայնքում մասնակցելու դրական դիրքորոշումը: Դուք անվստահ եք զգում Ձեր պրակտիկան փոխելու համար և մանկավարժական հիմնավորումների կարիք ունեք: Ձեզ հետաքրքիր է, թե աշակերտները ինչպես կարձագանքեն նոր ուսումնական աշխատանքներին:*	**Փորձեք անել հետևյալը.** • փորձեք խոսել ավելի փորձառու ուսուցիչների հետ, • դուք պետք է գտնեք լավ օրինակներ, թե ինչպես են ավելի փորձառու ուսուցիչները դասարանում կամ դպրոցում դասեր անցկացնում և փորձեք գնահատել պլանավորումը (նպատակները, թեմաները, մոտեցումները և ուսումնական ռազմավարությունները), • մտածեք, թե որքանով էր Ձեր պլանավորած դասը հաջող աշակերտների համար: • լսեք այլ ոչ փորձառու ուսուցիչներին և պատմեք նրանց Ձեր ակնկալիքների և մտահոգությունների մասին, • ընտրեք պլանավորման աշխատանքի որևէ կողմ, որտեղ ավելի շատ փորձագիտության կարիք ունեք: Օրինակ, տեղին թվացող սոցիալական և քաղաքական խնդիրները վերլուծելու Ձեր կարողությունը՝ պլանավորելու և դասերում իրագործելու հետ մեկտեղ: Հարցրեք գործընկերոջը, թե ինչպես է նա թեմաներ ընտրում, ինչպես է ընդունում պլանավորման որոշումներ՝ ելնելով աշակերտի կրթական մակարդակից և տարիքից:
Քայլ 2 (զարգացում) *Դուք սկսել եք դասավանդել ԺՔԿ/ՄԻԿ-ի որոշ տարրեր Ձեր դասարանում: Դուք մտահոգ եք Ձեր պլանավորած աշխատանքների կրթական արդյունքների որակի վերաբերյալ: Դուք պլանավորել եք աշխատանքը, բայց դրա ժամանակ և դրանից հետո զգում եք, որ կորցրել եք վերահսկողությունը և մեծ ջանքեր եք գործադրում կառավարելու բանավեճերը և աշակերտների մասնակցությունը:*	**Փորձեք անել հետևյալը.** • ընտրեք և վերլուծեք որևէ գործընթացի մեկ կոնկրետ քայլ: Օրինակ, ինչպես եք դուք կառավարել աշակերտների և Ձեր միջև հաղորդակցությունը, կարող եք ավելի փորձառու գործընկերոջ խնդրել հետևել Ձեր հաղորդակցությանը և հետո համեմատել նշումները, • մտածեք, թե ինչպես կարող եք բարելավել հաղորդակցությունը՝ մտքում ունենալով աշակերտների ժողովրդավարական մասնակցությունը և դասի նպատակները: Դուք տվե՞լ եք բաց հարցեր: Դուք օգնե՞լ եք աշակերտներին պարզաբանելու նոր և վերացական հասկացությունների իմաստը: Ի՞նչ ԺՔԿ/ՄԻԿ արժեքներ էին ընկած թեմայի հիմքում:
Քայլ 3 (հաստատում) *Դուք վստահ եք զգում աշակերտի հետագա կյանքի փոփոխություններին և քաղաքացիության կոմպետենցիաներին ուղղված ԺՔԿ/ՄԻԿ թեմաները ընտրելիս: Դուք վստահ եք զգում աշակերտներին շահերին համապատասխան հաղորդակցության ռազմավարությունները պլանավորելիս: Դուք վստահ եք զգում ԺՔԿ/ՄԻԿ կոնկրետ թեմայի համար համապատասխան դասավանդման գործընթացները ընտրելիս: Դուք պատրաստ եք Ձեր մտքերը կիսել գործընկերների հետ:*	**Փորձեք անել հետևյալը.** • մտածեք Ձեր ներքին ենթադրությունների և արժեքների մասին՝ աշխատանքները պլանավորելիս: Ինչո՞ւ եք ընտրել X թեման: Ինչո՞ւ եք կիրառել ինդուկտիվ ուսուցման ռազմավարություն՝ դեդուկտիվի փոխարեն: Ձեր աշակերտների համար, թե՞ Ձեր համար: Ի՞նչ ենթադրություններ և մտքեր ունեք աշակերտների ուսումնական կարողությունների վերաբերյալ: • ինքնագնահատեք Ձեր ենթադրությունները աշակերտների աչքերով, հաշվի առնելով դասարանում տեղի ունեցող իրադարձությունները, • կիսեք Ձեր մտքերը գործընկերների և ծնողների հետ:

Քայլ 4 (կատարելագործում)	**Փորձեք անել հետևյալը.**
Դուք գիտակցում եք որպես ուսուցիչ աշակերտներին գիտելիքով, հմտություններով, արժեքներով և հասարակության մեջ մասնակցությամբ արտոնելու Ձեր պատասխանատվությունը: Դուք հիշում եք Ձեր, որպես դերային մոդել ,գործառույթի մասին: Դուք գտնում եք, որ պետք է պլանավորել միջառարկայական համատեղ աշխատանքներ: Դուք գնահատում եք Ձեր աշակերտների ակտիվ մասնակցությունը համայնքում՝ չմոռանալով գլոբալ քաղաքացիության մասին:	• մշտապես հետևեք, որպեսզի Ձեր պատասխանատվության և Ձեր պլանավորածի միջև կապ գոյություն ունենա, • ստուգեք, թե արդյոք դուք պլանավորում եք աշակերտների ներգրավվածությամբ աշխատանքներ: • համատեղ պլանավորեք աշխատանքները՝ դիտելով բոլոր շահագրգիռ կողմերին և գործընկերներին որպես արժեքավոր ներդրում կատարողների, ինչպես պոտենցիալ շահառուների. պլանավորման և աշխատանքների մասին որոշումներ կայացնելիս դուք ներգրավված եք ոչ թե պարզապես գործընկերության, այլ իրական «ժողովրդավարական մասնակցության»[30] գործընթացներում:

30. Բաքման, Ե., և Թրաֆորդ, Բ., 2007 թ., նշված աշխատանքում, էջ 28:

5.3. Կոմպետենցիա թիվ 6

Կոմպետենցիա թիվ 6 ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և գործելակերպերի ներառում սեփական դասավանդման պրակտիկայում

ԺՔԿ/ՄԻԿ-ի սկզբունքների և գործելակերպերի ներառումը մասնագիտական առարկաների շրջանակում (միջառարկայական ԺՔԿ/ՄԻԿ)՝ խթանելու համար գիտելիքը, հմտությունները և մասնակցությունը և ժողովրդավարության մեջ նպաստելու երիտասարդների հնարավորությունների և իրավունքների ընդլայնմանը:

5.3.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան կարող են ցույց տալ, որ իրենք, օրինակ.

- գնահատում են այլ առարկաների «միջոցով» ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելիս բարձրաձայնվող հարցերը: Ուսուցիչները հենց սկզբից պետք է լուծեն ԺՔԿ/ՄԻԿ-ի դասավանդման ժամանակ օրինակ՝ հասարակագիտության, պատմության, աշխարհագրության կամ այլ հումանիտար առարկաների «միջոցով» բարձրաձայնվող երբեմն խրթին հարցերը,
- հասկանան այն պահը, երբ ԺՔԿ/ՄԻԿ «կապող օղակները» շարժվում են պարզից դեպի բարդ:
- արդար լինեն դասավանդվող առարկայի ուսումնական հիմնական նպատակների և ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական նպատակների առումով (նրանք սկսում են տարբերակել ԺՔԿ/ՄԻԿ-ին առանձնահատուկ նպատակները, երբ մատուցում են տարբեր մոդելների դասեր, որոնք ենթադրաբար տարբեր նպատակներ են հետապնդում):

Նշում՝ Ուսումնական ծրագրի շրջանակում փոխկապակցված չորս կամ հինգ բարձր մակարդակի դասերը մեկ դասարանի համար առավել արդյունավետ և կապակցված կարող են լինել, քան մեծ թվով վատ սահմանված և մակերեսայնորեն կապակցված դասեր: ԺՔԿ/ՄԻԿ-ի բովանդակությունը ամբողջ ուսումնական ծրագրին կապելը առաջացնում է այնքան շատ կապեր, որ դժվար է դառնում այն կառավարել առանց կապակցված հենքի:

ԺՔԿ. հիմնարար հասկացությունները

Ժողովրդավարության և քաղաքացիության հասկացություններ, քաղաքացիների քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ (Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա), մարդու իրավունքներ, քաղաքական գրագիտություն, կառավարության դերը, քրեական և քաղաքացիական իրավունք, սոցիալական և մշակութային բազմազանություն և ինքնություն, կայուն զարգացում, գլոբալ փոխադարձ կախվածություն, տեղական, ազգային և գլոբալ մակարդակներով գործող տնտեսական ուժեր, ընթացիկ գործեր և մասնակցության գործընթացներ, համերաշխություն և սոցիալական համախմբվածություն:

Պատմություն

Ինչպե՞ս են քաղաքացիական և մարդու իրավունքները զարգացել ժամանակի ընթացքում: Բռնությամբ ուղեկցվող որևէ բողոք արդարացվա՞ծ է, թե ոչ: Անցյալում ստրկության և 21րդ դարում ստրկության համեմատություն:

Արվեստ

Ինչպե՞ս կարող են արվեստը և դիզայնը օգնել մեր համայնքները ավելի լավ վայր դարձնելու համար: Ի՞նչ կարող է սովորեցնել մեզ արվեստը մշակութային բազմազանությունը գնահատելու համար: Ինչպե՞ս կարող է տեսողական արվեստը կիրառվել բողոքների և քարոզարշավի ժամանակ:

Աշխարհագրություն

Որո՞նք են արդար առևտրի առավելությունները: Մեզ ավելի շա՞տ, թե ավելի քիչ ճանապարհներ են հարկավոր: Ի՞նչ պետք է անի Եվրոպան խթանելու համար կայունությունը:

Գիտություն

Մարդկանց պե՞տք է կլոնավորել, թե ոչ: Պե՞տք է ստանալ համաձայնություն օրգանների նվիրատվության ժամանակ: Պե՞տք է թույլ տալ գենետիկորեն փոփոխված բերքի արտադրությունը:

Լեզու/գրականություն

Քննարկեք ռասայական նախապաշարմունքը և բնորոշեք արդար վերաբերմունքի մասին վճռականությունը: Քննարկեք հավասարության և առանց խտրականությունների հասկացությունները:

Մաթեմատիկա

Ինչո՞ւ է անհրաժեշտ գլոբալ աղքատության և երեխաների աշխատանքի մասին վիճակագրությունը: Ինչպես կարելի է խեղաթյուրել վիճակագրությունը:

5.3.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 6 ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և գործելակերպերի ներառում սեփական դասավանդման պրակտիկայում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Իրականում դուք դիտում եք ԺՔԿ/ՄԻԿ-ը որպես «վտանգ» Ձեր առարկայական ոլորտի համար: Դուք որպես ուսուցիչ Ձեր խնդիրը տեսնում եք միայն ուսումնական պլանի, դպրոցի ուսումնական ծրագրի շրջանակներում դասավանդող, այդ առաքելությունն իրականացնող:*	**Փորձեք անել հետևյալը.** • ծանոթացեք ԺՔԿ/ՄԻԿ հասկացություններին, իմացեք ինչումն են կայանում ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները և գործելակերպերը, • վերահսկեք և վերլուծեք Ձեր ուսումնական ծրագիրը՝ ընդհանուր հիմքեր սահմանելու համար. և սահմանեք (հնարավոր) համընկնումներ և «հատվող կետեր»՝ բովանդակության, հմտությունների, հասկացությունների և արժեքների առումներով, • քննարկումներ վարեք Ձեր գործընկերների հետ, որոնք դպրոցում դասավանդում են հասարակագիտական առարկաներ: Մտածեք աշակերտների համար «համատեղ» և կապակցված մոտեցում առաջարկելու առավելությունների մասին, որը ԺՔԿ/ՄԻԿ հայեցակետերը ուսումնական ծրագիր է ներմուծում բնական և ընթացիկ եղանակներով:
Քայլ 2 (զարգացում) *Դուք, ընդհանուր առմամբ, ծանոթ եք ԺՔԿ/ՄԻԿ հասկացություններին, դրանց սկզբունքներին և գործելակերպերին: Դուք կարող եք համընկնումներ գտնել ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքի, հմտությունների, արժեքների ու Ձեր ուսումնական պլանի և/կամ դպրոցի առարկայական ուսումնական ծրագրի միջև:*	**Փորձեք անել հետևյալը.** • պլանավորեք, թե ինչպես կարելի է ներմուծել ԺՔԿ/ՄԻԿ-ի սկզբունքները և գործելակերպերը Ձեր դասավանդման պրոցեսում. սահմանեք համապատասխան բովանդակային ոլորտներ և խնդիրներ, • հանդիպեք Ձեր գործընկերների հետ և տեղեկություններ փոխանակեք ԺՔԿ/ՄԻԿ-ը դասավանդելու վերաբերյալ: Համախմբեք Ձեր ջանքերը: Գործնական առումներով պլանավորեք կանոնավոր հանդիպումներ՝ դպրոցական հանդիպումների օրացույցում՝ քննարկելու ԺՔԿ/ՄԻԿ-ի հետ կապված խնդիրները: • դասավանդման ժամանակ փորձեք ապահովել, որ աշակերտները գնահատեն ինտեգրումը առարկաների միջև և ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսուցումը դիտարկեն նպատակային:
Քայլ 3 (հաստատում) *ԺՔԿ/ՄԻԿ մոտեցման մասին գոյություն ունի հստակ տեսլական դպրոցի ուսումնական ծրագրի շրջանակում: Ուսուցիչները պլանավորումը կատարում են համագործակցային պայմաններում և ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքներն ու գործելակերպերը ներառում են իրենց դասավանդման պրոցեսում: ԺՔԿ/ՄԻԿ-ը նաև դպրոցի ոգու էական մասն է կազմում:*	**Փորձեք անել հետևյալը.** • հետաքրքրվեք, թե որչափով արտադասարանային և արտադպրոցական ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքները կարող են կիրառվել Ձեր առարկայի դասավանդման ժամանակ, • ուսումնասիրեք էքսկուրսիաների և այցելությունների հնարվորությունները (օրինակ՝ թանգարաններ, համայնքի/խորհրդարանի շենք և փառատոներ), • ներգրավեք դասավանդման պրոցեսում հյուրերին, • աշակերտներին դարձրեք Ձեր գործընկերը : Փոխանակեք տեղեկություններ նպատակների մասին և հնարավորություն տվեք մասնակցելու պլանավորման գործընթացում: Ապահովեք հետադարձ կապ:
Քայլ 4 (կատարելագործում) *ԺՔԿ/ՄԻԿ-ը կանոնավոր, բնական և կայուն տարր է Ձեր դասավանդման գործընթացում:* *Աշակերտներին կանոնավոր կերպով տրամադրվում են դասասենյակում բարձրացված հարցերի վերաբերյալ գործողություններ նախաձեռնելու հնարավորություններ (տարբեր ուսումնական համատեքստերում):*	**Փորձեք անել հետևյալը.** • փորձեք և իրագործեք կրթության և ուսուցման տարբեր մեթոդներ, • օգնեք Ձեր գործընկերներին իրենց մասնագիտական զարգացման պրոցեսում՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի մոտեցումները կիրառելու իրենց դասավանդման ժամանակ, • շարունակեք հարստացնել Ձեր պրակտիկան, • համայնքում գործընկերներ գտեք, որոնք կօգնեն Ձեզ առաջ տանելու Ձեր նպատակները:

5.4. Կոմպետենցիա թիվ 7.

Կոմպետենցիա թիվ 7. դպրոցի դրական ոգու նպատակով հիմնական կանոնների սահմանում

Վստահության, թափանցիկության և փոխադարձ հարգանքի կայուն մթնոլորտ ստեղծելու նպատակով հստակ հիմնավոր կանոնների սահմանում: Դասարանի և վարքագծի կառավարման ժամանակ հաշվի են առնում ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները՝ ապահովելու համար նպատակային և արդյունավետ ուսուցումը:

5.4.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիային կարող են ասել, որ իրենք, օրինակ.

- նպատակ են հետապնդում ընդլայնել աշակերտների սովորելու ներուժը՝ բարձր ակնկալիքներ ունենալով աշակերտների վարքագծից,
- մոդելավորում և խթանում են արժեքներ, որոնք ընկած են ԺՔԿ/ՄԻԿ-ի նպատակների հիմքում, ինչպես օրինակ՝ ճշմարտության որոնում և այլոց կարծիքների նկատմամբ հարգանք,
- քայլեր են ձեռնարկում աշակերտների հետ ստեղծելու դրական անհատական հարաբերություններ, ջանքեր են գործադրում լսելու աշակերտների տեսակետները ուսուցման վերաբերյալ և նրանց վերաբերվում են հարգանքով: Նրանք աշակերտների հետ հարաբերություններում հետևողական են, թափանցիկ և արդար,
- դասարանում կարողանում են սահմանել հստակ և միանշանակ կանոններ և ընթացակարգեր, խրախուսանքի և պատժի միջոցներ, որոնք հստակ կապված են իրավունքների և պարտականությունների, ԺՔԿ/ՄԻԿ առավել լայն սկզբունքների և դպրոցում վարքագծին վերաբերող քաղաքականությունների հետ: Սրան հնարավոր է հասնել հետևյալի միջոցով՝
  - աշակերտների համար հասկանալի դրական ձևակերպված փոքրաթիվ կանոնների սահմանում,
  - աշակերտներին կանոնները ձևակերպելու և վերանայելու հնարավորության տրամադրում,
  - դրական վարքագծի խրախուսանքի և պարգևատրության ռազմավարության կիրառում,
  - ոչ պատշաճ վարքագիծը, բայց ոչ աշակերտին հերքող բառապաշարի օգտագործում:
- հղում են կատարում վարքագծի կառավարման չորս սկզբնատառերին, մասնավորապես՝ այլոց իրավունքներին, կանոնների անհրաժեշտությանը, սովորական ընթացակարգերի արժեքին և անձնական պատասխանատվություն վերցնելու անհրաժեշտությանը,
- խուսափում են աշակերտների հետ խոսել այնպես, որ ինքնագնահատակին վնաս հասցվի և վտանգվի փոխհարաբերությունները: Դրա փոխարեն հաճախակի օգտագործում են խրախուսանքն ու դրական բառապաշարը՝ տարիքին և հանգամանքներին համապատասխան,
- հասկանում են անհատի և խմբի մակարդակով ռազմավարությունները՝ օժանդակելու աշակերտներին ավելի լավ կառավարելու իրենց վարքագիծը,
- հասկանում են, որ աշակերտները կարող են հակասություն ապրել «փողոցային» նորմերի և դպրոցում իրենց վարքագծից ակնկալիքների միջև, և օգնում են աշակերտներին հստակ գիտակցել տարբերությունները և քննարկել համապատասխան հարցերը,
- խրախուսում են ինքնուրույն որոշման կայացումը՝դասարանում հնարավորություններ ստեղծելով ժողովրդավարական որոշումների կայացման համար . օրինակ՝ «աչքերը փակ» քվեարկություն, որպեսզի քվեարկության վրա մյուս դասընկերների քվեները չազդեն:

5.4.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 7. Դպրոցի դրական ոգու նպատակով հիմնական կանոնների սահմանում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Ուսուցիչները դասարանում պարտադրում են ունենալ ինքնասահմանված կանոններ, նույնիսկ եթե աշակերտները հստակ ընդդիմանում կամ հակադրվում են դրան: Բանակցությունների քիչ հնարավորություն կա, կամ բոլորովին չկա: Պարտականությունները ընդգծված են, իսկ իրավունքները՝ նվազեցված: Կանոնը կանոն է և քիչ հնարավորություն կա բազմազանության, նախադրյալների կամ հատուկ կարիքների համար, կամ բոլորովին չկա այդ հնարավորությունը: Հիմնական օրենքների շուրջ համաձայնության բացակայությունը խոչընդոտում է բաց և հարգալից քննարկում անցկացնել դասարանում:.*	**Փորձեք անել հետևյալը.** • մեծացրեք դպրոցում և դասարանում որոշ գործոնների մասին Ձեր իրազեկվածությունը, որոնք կարող են հանգեցնել անցանկալի վարքագծի, • ձևավորեք ամբողջ աշխատակազմի վերապատրաստման կամ դպրոցական համակարգի վերապատրաստման համար շահախումբ՝ արտաքին փորձագետների աջակցությամբ՝ բարձրացնելու դպրոցի համայնքային իրազեկվածությունը տվյալ հարցի շուրջ և սովորելու անհատի և խմբի մակարդակով ռազմավարություններ աշակերտներին և աշխակատազմին վարքագիծը առավել լավ կառավարելու հարցում օժանդակելու համար, • քայլեր ձեռնարկեք հիմնելու դրական անհատական հարաբերություններ աշակերտների հետ, ջանքեր գործադրեք լսելու աշակերտների տեսակետները ուսուցման վերաբերյալ և նրանց վերաբերվեք հարգանքով: • փորձեք վարքագծի ամրապնդման դրական եղանակներ, մասնավորապես, զամբյուղում միավորներ ավելացրեք, վարքագիծը պետք է խրախուսվի, երբ զամբյուղում 15 միավոր հավաքվի, դասարանին արժանացրեք հատուկ վերաբերմունքի (գործողություն, խաղ, և այլն):
Քայլ 2 (զարգացում) *Ուսուցիչները սահմանում և կիրառում են կանոններ դասարանում: Որոշ փորձեր արվում են աշակերտների հետ խորհրդակցելու ուղղությամբ, բայց արձագանքը հուսադրող չէ, հավանաբար զրույցն անկեղծ չի ընկալվում: Աշակերտները չունեն իրենց ձայնը լսելի դարձնելու իշխանություն: Եթե դասարանում իրոք տեղի է ունենում քննարկում, ապա բացակայում է լսելու և այլոց տեսակետների նկատմամբ հարգանքը:*	**Փորձեք անել հետևյալը.** • ներգրավվեք աշակերտներին հիմնական դպրոցական և դասարանային կանոնները սահմանելու աշխատանքներում: Խորհուրդ հարցրեք աշակերտներից, թե ինչպես աշխատել դասարանում բազմազանության խնդրի առնչությամբ (ուսումնական ոճերի բազմազանություն, աղջիկների/տղաների կարիքներ և սովորելու ոճեր) և ներդասարանային խնդիրներ (օրինակ՝ լեզվական հմտությունների տարբերություններ, ուսուցման սահմանափակումներ կամ դժվարություններ): • հիմք ընդունեք ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքները և բառապաշարը. կանոնների և պատժամիջոցների լեզվով խոսելու փոխարեն, օգտագործեք այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «պատասխանատվություն», «իրավունքներ», «ընդհանուր եզրակացություն», «փոխադարձ հարգանք» և «հանդուրժողականություն», • երբ պետք է կիրառել պատժամիջոցներ՝ եղեք հստակ, հետևողական և չափավոր: Քննադատեք արարքը և ոչ թե մարդուն: Օրինակ՝ ընդգծեք դպրոցի մթնոլորտի համար յուրաքանչյուրի պատասխանատվությունը՝ հարցադրումներ կատարելով այլոց և անհատի վարքագծի հետևանքների մասին:
Քայլ 3 (հաստատում) *Դպրոցի և դասարանի շրջանակներում որոշ հարցերի շուրջ քննարկումներ են կատարվում և համաձայնություն է ձեռք բերվում դրանց մասին աշակերտական խորհրդի ներկայացուցիչների հետ: Ուսուցիչները կիրառում են դրական բառապաշար և ուղղորդում են աշակերտներին պատասխանատու լինել իրենց վարքագծի համար՝ ընդգծելով սովորողի ընտրության հնարավորությունները և ոչ թե ուսուչցի սպառնալիքները: Քննարկման համար տեղ է տրամադրվում:*	**Փորձեք անել հետևյալը.** • աշակերտներին ընդգրկեք կանոնների սահմանման աշխատանքներում: Հարգեք աշակերտական խորհրդի դերը հիմնական կանոնները սահմանելիս: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները իրատեսական և հեշտ հետևելի կանոններ են ընդունում. նրանց համար նաև կարևոր է դասարանում տիրող մթնոլորտը, • ավելի մեծ տարիքային խմբերին տվեք հատուկ առաջադրանքներ և բացատրեք այն պատասխանատվության չափը, որն ակնկալում եք իրենցից: Փոքր տարիքային խմբերին մեծերի հետ զույգ նշանակելը արդյունավետ է՝ ԺՔԿ/ՄԻԿ արժեքները իրականացնելու օժանդակելու համար, • ակտիվ կերպով փորձեք իմանալ աշակերտների տեսակետները այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են ահաբեկումը, վանդալիզմը և թե նրանց կարծիքով դպրոցը ինչպես կարող է դառնալ ավելի լավ, ավելի նպաստավոր և ավելի ապահով ուսումնական համայնք:

Քայլ 4 (կատարելագործում)	Փորձեք անել հետևյալը.
Դպրոցի/դասարանի վարքագծի կանոնները մշակվում են դպրոցի և աշակերտական խորհուրդների հետ խորհրդակցությունների և բանակցությունների արդյունքում: Բոլորի խոսքը արժեք ունի: Աշակերտները կատարում են իրենց դերը որպես պատասխանատու քաղաքացիներ՝ դասարանի վարքագծի կանոններն իրագործելիս: Գոյություն ունի իրական միջմշակութային մթնոլորտ և դպրոցի համայնքի անդամների միջև չկա «մենք և դուք» վերաբերմունք : Դասասենյակները նպատակային և կենդանի ուսուցման վայրեր են:	• հնարավորություններ տվեք, որպեսզի դասարանի կանոնները կանոնավոր կերպով փոփոխվեն/վերանայվեն աշակերտների և դասավանդողների կողմից, • շարունակեք վստահել աշակերտներին առաջատար դեր խաղալու և իրենց ազատությունները ընդլայնելու հարցում, այսինքն, ստեղծեք մի մթնոլորտ, որտեղ ինչքան շատ պատասխատվություն են աշակերտները դրսևորում, այնքան շատ իրավունքներ են նրանք ձեռք բերում, • խրախուսեք, որպեսզի այցելուներ գան Ձեր դասերին՝ ականատես լինելու ԺՔԿ/ՄԻԿ բարձրորակ բանավեճերի, փոխհարաբերությունների և այլոց տեսակետների նկատմամբ դրսևորած հարգանքի: • շարունակեք աշխատել Ձեր գործընկերների հետ զարգացնելու Ձեր հմտությունները:

5.5. Կոմպետենցիա թիվ 8

Կոմպետենցիա թիվ 8. աշակերտների բանավիճային հմտություններին օժանդակելու նպատակով ռազմավարությունների մշակում

Դասավանդման մի շարք ռազմավարություններ և մեթոդաբանություններ, այդ թվում՝ դասարանի կողմից ճիշտ հարցադրումներ՝ օժանդակելու համար աշակերտների բանավիճային հմտությունները, հատկապես՝ նրբանկատ, վիճահարույց հարցերի շուրջ:

5.5.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան

- հասկանում են, թե ինչ հմտություններ են հարկավար քաղաքացիության մասին քննարկումների ժամանակ: Օրինակ՝
  - սոցիալական և հաղորդակցության հմտություններ, ինչպես օրինակ՝ փաստարկների բերման, մտքերը հստակ ներկայացնելու, հերթով խոսելու հմտություններ, բանավոր հաղորդակցության միջոցների արդյունավետ օգտագործում,
  - համապատասխան բառապաշարի և ԺՔԿ հասկացությունների (ինչպես օրինակ՝ «քաղաքացի», «ընդհանուր բարիք» և «պաշտպանություն») օգտագործում և վիրավորական կամ նախապաշարում պարունակող խոսքերից խուսափում,
  - քննարկման տարբեր ձևերի ըմբռնում, օրինակ՝ վիճաբանող և քննող,
  - բանավեճային տեխնիկաներ, օրինակ՝ այլոց համոզելու կարողություն, փոխզիջման կամ կոնսենսուսի ձեռք բերում, հռետորության ըմբռնում և օգտագործում,
  - ԺՔԿ/ՄԻԿ համատեքստում աշակերտների արտահայտման ազատության սահմանների վերաբերյալ իրավական շրջանակների իմացություն:
- գիտեն մի շարք ռազմավարություններ, որոնք կարող են օգնել աշակերտներին զարգացնելու քննարկման իրենց հմտությունները: Աշակերտներին պետք է սովորեցնել, թե ինչպես անցկացնել քննարկումներ: Ռազմավարությունների շարքին պատկանում են.
  - թեման համապատասխան դարձնելը - քննարկումը պետք է առնչվի աշակերտների հետաքրքրություններին և փորձառությանը,
  - զվարճալի դարձնելը - մեդիայի օգտագործում, որտեղ բարձրացվում են հարցեր, որոնք կարող են քննարկվել հետաքրքիր եղանակով, օրինակ՝ պատմություն, տեսահոլովակ, լուսանկար, արվեստ, և այլն,
  - թեմաները և քննարկման ենթակա հարցերը ներկայացնելու միջոցով նպատակը հստակ դարձնելը, աշակերտներին խրախուսելը, քննարկման հարցեր առաջադրելը, օրինակ՝ թույլ տալ նրանց կազմել որևէ թեմայի շուրջ սեփական հարցեր և «փակ աչքերով» քվեարկել, թե որ հարցերը պետք է քննարկվեն,
  - խմբային գործընթացները և համագործակցային մեթոդաբանությունը բազմազան դարձնելը,
  - լսելու/հերթափոխելու մասին հիմնական կանոնները կրկնելը/պահպանելը ,
  - չափից շատ խոսելուց ձեռնպահ մնալը՝ թույլ տալով, որ մյուսներն էլ խոսեն,
- վիճահարույց հարցերը դասավանդելու հնարավոր մոտեցումների իմացությունը: Աշակերտի տարիքը կարող է որոշիչ լինել, թե ինչն է ավելի տեղին: Եթե ճկուն չօգտագործվի, յուրաքանչյուր մոտեցում իր թերություններն ունի: Եթե օգտագործվի խոհեմ և մի քանի համադրություններով, բոլորն էլ կարող են նվազեցնել կողմնակալ դասավանդման վտանգը: Ընդհանուր առմամբ, կան երեք մոտեցումներ՝
  - չեզոք, երբ ընդհանրապես ոչ մի անձնական տեսակետ չի արտահայտվում,
  - հավասարակշռված, երբ ներկայացվում են մի շարք տեսակետներ, այդ թվում այնպիսի տեսակետները, որոնց հետ անձնապես դուք համաձայն չեք,
  - հանձնառում, երբ սեփական տեսակետները հայտնի եք դարձնում:

- դասավանդման պրոցեսում մշտապես ուշադրություն են դարձնում կողմնակալությունից խուսափելուն: Օրինակ՝ նրանք ապահովում են, որ բանավեճի բոլոր կողմերի փաստարկները լսվեն, վիճաբանող տեսակետները ներկայացվում են հավասարակշիռ եղանակով, վիճարկվում են համընդհանուր մոտեցում ունեցող/ավանդական տեսակետները, կարծիքը որպես փաստ չեն ներկայացնում, իրենց չեն ներկայացնում որպես միակ հեղինակություն և չեն հրահրում,
- խթանում են բարձր մակարդակի ԺՔԿ/ՄԻԿ մտածելակերպ իրենց հարցադրումների միջոցով: Արդյունավետ ԺՔԿ/ՄԻԿ հարցերի օրինակներ են. Կարծում եք դա արդա՞ր է: X-ը իրավունք ունի՞ այդպես վարվել: Ո՞վ պետք է ասելիք ունենա այս դեպքում: Դրա մասին օրենք պե՞տք է լինի: Ո՞վ պետք է դրա համար վճարի: Որտեղի՞ց է ծագում այդ իրավունքը: Ինչո՞ւ է դա ասվում: Ի՞նչը ամենալավը կլինի յուրաքաչյուրի համար: Ո՞ր հարցերի վերաբերյալ են բոլորը համաձայն:

5.5.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 8. աշակերտների բանավիճային հմտություններին օժանդակելու նպատակով ռազմավարությունների մշակում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Ձեզ վստահություն է պակասում վիճահարույց խնդիրներ լուծելու համար: Ձեր հիմնական ռազմավարությունը կայանում է խուսափելու մեջ: Ձեզ կարող է թվալ, որ որոշ խնդիրներ չափազանց հուզական են դրանցով զբաղվելու համար: Ձեզ անհանգստացնում է, թե ինչ ընթացք կունենա դասարանի կառավարումը, եթե աշակերտներն ուժեղ ու հակասական կարծիքներ ունենան: Դուք համոզված չեք, թե ինչպիսին կլինի ծնողների արձագանքը դասարանական քննարկումների համար ընտրված թեմաների վերաբերյալ:*	**Փորձեք անել հետևյալը.** • ընդլայնեք Ձեր տեսակետը՝ դիտելով ավելի փորձառու ուսուցիչների աշխատանքը, որոնք քննարկումներ են կազմակերպում վիճահարույց/նրբանկատ խնդիրների շուրջ, • դասավանդեք մեկ դաս հետևելով վերևում առաջարկված կառուցվածքին/հարցերի ցանկին այն ոլորտում, որտեղ առարկայական գիտելիքների առումով դուք Ձեզ վստահ եք զգում, • գնահատեք դասի արդյունավետությունը, • ծանոթացեք վիճահարույց հարցերը դասավանդելու երեք հնարավոր մոտեցումներին և ռազմավարություններին՝ կողմնակալությունից խուսափելու համար, • կարդացեք սույն փաստաթղթում առաջարկվող տեքստերը՝ հասկանալու և վստահություն ձեռք բերելու համար, բացատրելիս, թե ինչու է կարևոր քննարկել վիճահարույց հարցեր:
Քայլ 2 (զարգացում) *Դուք իրազեկ եք որոշ հարցերի վիճահարույց բնույթի մասին և սկսել եք դրանք ընդգրկել ուսումնական ծրագրում և Ձեր դասերը պլանավորելիս: Դուք տեղյակ եք, որ պետք է կողմնակալ չլինեք դասավանդելիս: Որոշ թեմաներ Ձեզ համար մնում են «քննարկումից դուրս»:*	**Փորձեք անել հետևյալը.** • սկսեք մտածել աշակերտների քննարկման այլ հմտությունների մասին, որոնք պետք է զարգացնել և գործնականում կիրառել, • փորձեք վերևում առաջարկված ռազմավարություններից մի քանիսը, • մտածեք ԺՔԿ/ՄԻԿ մի քանի ժամանակակից և վիճահարույց հարցեր Ձեր առարկայական դասավանդման պրոցեսում բնական եղանակով ներառելու մասին և սկսեք փոփոխել Ձեր ուսումնական ծրագրի պլանավորումը, • որոշակի դասընթացներ անցեք այս ոլորտում՝ օգտվելով բարձր որակավորում ունեցող արտաքին աղբյուրներից:
Քայլ 3 (հաստատում) *Դուք որոշ դասընթացներ եք անցել վիճահարույց և նրբանկատ հարցերի հետ աշխատելու համար: Դուք գիտակցաբար իրագործում եք մի շարք ռազմավարություններ՝ օգնելու աշակերտներին զարգացնել իրենց քննարկման հմտությունները:*	**Փորձեք անել հետևյալը.** • տարբեր եղանակներ կիրառեք կառուցելու համար աշակերտների կողմից վիճահարույց հարցերի քննարկումը, • հնարավորություններ գտեք վերապատրաստելու ամբողջ աշխատակազմը համագործակցային մեթոդաբանությունների վերաբերյալ, • կենտրոնացեք հարցադրումներ կատարելու Ձեր հմտությունները զարգացնելու վրա. կազմեք ԺՔԿ/ՄԻԿ օգտակար հմտությունների ցանկ, որոնք կարող են խթանել բարձր կարգի մտածողությունը ԺՔԿ/ՄԻԿ առանցքային հասկացությունների վերաբերյալ, • մտածեք, թե ինչ ձևով պետք է պատասխանել աշակերտների կողմից ինքնաբերաբար բարձրացված՝ ուսուցման հնարավորություններն ընդլայնող հարցերին. հարցերին պատասխանեք այլ հարց առաջարկելով և խրախուսեք աշակերտներին առաջ քաշել քննարկման իրենց հարցերը:
Քայլ 4 (կատարելագործում) *Վիճահարույց հարցերը կենտրոնական են ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրի համար: Դուք խրախուսում եք աշակերտներին քննել հարցերը և արձագանքել դրանց հավասարակշիռ պատասխանների շուրջ: Դուք գիտակցում եք բարձր մակարդակի հարցադրումներ կատարելու կարևորության կենտրոնական նշանակությունը և խթանում եք ԺՔԿ/ՄԻԿ բարձր կարգի մտածելակերպ՝ սովորողներին հարցադրումներ կատարելու միջոցով:*	**Փորձեք անել հետևյալը.** • կիսեք Ձեր դրական փորձը այլ ուսուցիչների հետ : Զարգացրեք այս կարողությունը գործընկերների հետ դպրոցում անցկացված վերապատրաստման դասընթացների միջոցով. աշխատակազմի/ուսումնական մասի հետ ժողովները դրա համար լավ հնարավորություն են հանդիսանում, • կիրառեք ուսուցչի Ձեր հմտությունները ուսումնական ծրագրի նոր ոլորտների նկատմամբ, որոնք դպրոցը ցանկանում է զարգացնել (օրինակ՝ համայնքային համախմբվածության խթանում և կոնֆլիկտների լուծման թեման), • առանձնացրեք հարցեր, որոնք ունեն արդիական նշանակություն համայնքի ներսում, օրինակ՝ ռասիզմը, ահաբեկումը, ոտնձգությունը, «ուրախ հարձակումը» (անձի վրա հարձակում՝ նպատակ հետապնդելով ձայնագրել նրա արձագանքը հեռախոսի վրա) և շարժական տեխնոլոգիաների օգտագործման գաղտնիության/էթիկական հարցեր, • համայնքում գործընկերներ գտեք, որոնք կօգնեն Ձեզ առաջ տանելու Ձեր նպատակները:

5.6. Կոմպետենցիա թիվ 9

Կոմպետենցիա թիվ 9. գնահատման մոտեցումների կիրառում

Ինքնագնահատման և հավասարակիցների գնահատման կիրառումը՝ տեղեկացնելու աշակերտների առաջադիմության և նվաճումների մասին ԺՔԿ/ՄԻԿ բնագավառում և շնորհավորելու այն:

5.6.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ-ի այս կոմպետենցիան.

- հասկանում են քաղաքացիական կրթության կարիքների գնահատման գործընթացը, որի տնօրինողը, ի վերջո, պետք է լինեն աշակերտները. գործընթացը պետք է իրականացվի աշակերտների կողմից և ոչ թե նրանց նկատմամբ,
- օգտագործեք գնահատման ռազմավարություններ՝ գնահատելու համար աշակերտների գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների ու մասնակցության առաջադիմությունը: Ոչ փորձառու ուսուցիչներին կարելի է խրախուսել իրենց աշակերտների հետ միասին անել հետևյալը.

Փաստացի և կոնցեպտուալ գիտելիք

– մշակել բազմակի պատասխանով հարցաշարեր,
– բառերը համապատասխանեցնել սահմանումներին,
– գտնել տեքստի հատվածից կամ տեքստից հիմնական գաղափարները/տեղեկությունները,
– տալ լրագրի հոդվածի կամ պատմության հիմնական տեքստի բացատրությունը,
– բերել վիճահարույց հարցի դեմ և կողմ փաստարկներ,
– վերլուծելվիճակագրական տվյալները :

Հարցում և հաղորդակցություն

– հաղորդակցության հմտությունների ցուցադրում համոզիչ գրավոր աշխատանքի միջոցով,
– PowerPoint ծրագրով պրեզենտացիայի կազմում, որտեղ քարոզվում է որևէ տիպի փոփոխություն,
– ցուցադրումների պատրաստում կամ ժողովի վարում՝ բարձրացնելու համար դպրոցում որևէ հարցի շուրջ իրազեկվածությունը,;
– որևէ թեմայի հետազոտում (անհատական կամ փոքր խմբերով)՝ օգտվելով տարաբնույթ աղբյուրներից, և դրա մասին բանավոր կամ գրավոր պրեզենտացիայի անցկացում,
– որևէ արդիական հարցի շուրջ պետական պաշտոնյայի նամակ գրելը (օրինակ՝ խորհրդատուի, ոստիկանապետի կամ տեղական լրագրի խմբագրի):

Մասնակցությունը և պատասխանատու գործողությունը

– խմբային աշխատանքին հաջողությամբ մասնակցելը, խմբի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տարբեր գործառույթների և որպես միավոր խմբի գործունեությունը գնահատելու կարողության մասին իրազեկվածություն ցուցադրելը,
– սոցիալական ակցիայի անհրաժեշտության սահմանումը և փոփոխությանը հանգեցնող ռազմավարությունների մշակումը,
– ընկալման ցուցադրում, թե ինչպես ազդել որոշակի հարցի շուրջ կարծիքի վրա, լինի դա հասարակական կարծիք, թե տեղական կամ ազգային քաղաքականություն մշակողների կարծիքը,
– ինչպես հարցադրումներ անցկացնել «փորձագետների» հետ արդիական հարցերի վերաբերյալ (օրինակ՝ ինչպես հարցեր ուղղել տեղական ոստիկանությանը հանցագործությունների և դրանց կանխարգելման վերաբերյալ հարցերի շուրջ, կամ շրջակա միջավայրի փորձագետներին՝ կայունության վերաբերող հարցերի վերաբերյալ),
– խրախուսել աշակերտներին որոշակի հանձնարարությունների համար մշակելու հաջողության իրենց չափանիշները (օրինակ՝ հարցնելով «Ինչպես կիմանանք, որ հասել ենք արդյունքի»),

- կարողանում են սովորել և կիրառել գնահատման արդյունավետ գործելակերպեր ԺՔԿ այլ առարկաներից: Սրանք կարող են մոդելներ հանդիսանալ ԺՔԿ այլ ծրագրերի կազմման համար:

5.6.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 9. գնահատման մոտեցումների կիրառում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք հազվադեպ եք գնահատում աշակերտների ԺՔԿ աշխատանքը կամ դա անում եք ինքնակամ: Քանի որ ԺՔԿ սահմանում և/կամ կենսագրություն չունի Ձեր դպրոցում, բառացիորեն հնարավոր չէ հետադարձ կապ տրամադրել աշակերտների ձեռքբերումների և առաջընթացի վերաբերյալ: Այն դասերը, որոնք պարունակում են որոշ ԺՔԿ նյութ կամ հմտություններ, հստակ չեն ուսուցման նպատակների առումով:*	**Փորձեք անել հետևյալը.** • սահմանեք Ձեր պլանավորման նպատակները ԺՔԿ գիտելիքի, հմտությունների կամ մասնակցության առումով: Կոնկրետացրեք Ձեր դասերի խնդիրները, • ԺՔԿ ուսուցման խնդիրների մասին խոսեք Ձեր աշակերտների հետ՝ նախքան դասը: Օգնեք աշակերտներին հասկանալ ԺՔԿ հարցերի և ծրագրերի մասով հաջող աշխատանքի չափանիշները, • դասերի ընթացքում ժամանակ հատկացրեք, որպեսզի աշակերտները կարողանան գնահատել ԺՔԿ իրենց ուսուցումը: Խրախուսեք աշակերտներին բացատրել ԺՔԿ հմտությունները և գործընթացները, որոնք ներառված են դասերում, օրինակ՝ յուրաքանչյուր աշխատանքից հետո կամ դասի վերջում կարճ խմբային պարապմունքների միջոցով:
Քայլ 2 (զարգացում) *ԺՔԿ աշխատանքը որոշ չափով գնահատվում է, բայց գնահատումը հիմնականում ամփոփիչ է և կենտրոնացած է գիտելիքի տարբեր կողմերի վրա՝ ընկալման վարժությունների և տեքստերի միջոցով: Որոշ դասեր պլանավորված են և ունեն հստակ սահմանված ԺՔԿ խնդիրներ: Ժամանակի ընթացքում առաջընթացը ստուգելու մեխանիզմներ չկան: Աշակերտների ակտիվ քաղաքացիությունը և մասնակցությունը գնահատված չէ:*	**Փորձեք անել հետևյալը.** • մեծացրեք այն եղանակները, որով գնահատում եք աշակերտների ԺՔԿ աշխատանքը, այսինքն, ոչ միայն թղթի վրա, այլ նաև ցուցադրումների, PowerPoint ծրագրի պրեզենտացիաների, համագործակցային ծրագրերի, տարբեր լսարանների հետ համոզիչ զրույցների և այլնի միջոցով, • ստեղծեք միջոցներ ԺՔԿ համատեքստում աշակերտների կատարած աշխատանքի արդյունքները հավաքելու համար՝ թղթապանակների միջոցով նպատակ հետապնդելով նշել ձեռքբերումները և պլանավորել հետագա ուսուցումը, • ԺՔԿ միավոր աշխատանքի կամ ծրագրից հետո փորձարկեք ինքնագնահատման կամ գնահատման տարբեր ձևեր: ԺՔԿ ո՞ր հայեցակետերն են աշակերտները ավելի լավ յուրացրել և սովորել իրենց կարծիքով: Ինչպե՞ս կարող են նրանք բարելավել իրենց ուսուցումը:
Քայլ 3 (հաստատում) *Ուսուցիչների կողմից կիրառվող ԺՔԿ տարբեր հայեցակետերի համար առաջընթացի գնահատումը գրանցելու առումով դպրոցում գոյություն ունի որոշակի մոտեցում: Դուք սկսել եք աշխատել գնահատման տարբեր ռազմավարություններով, այդ թվում՝ աշակերտներին ինքնագնահատման և հավասարակիցների գնահատման միջոցով: Աշակերտները հետադարձ կապ են ստանում ԺՔԿ իրենց աշխատանքի և/կամ ծրագրերի վերաբերյալ:*	**Փորձեք անել հետևյալը.** • փորձեք աշխատել ինքնագնահատման և հավասարակիցների գնահատման բազմազան տարբերակներով (գնահատականների բանկ, ուղղորդված վերանայում, և այլն), • մի կիրառեք ավանդական արժեորման աղյուսակներ: Դրա փոխարեն աշխատեք կիրառել ավելի ընկերական տարբերակներ (ինչպես օրինակ՝ վստահության «լուսանշաններ», ժպտացող/չժպտացող դեմքեր, և «երկու աստղ և մեկ ցանկություն», որոնք իրենցից ներկայացնում են աշակերտների աշխատանքը գովաբանելու երկու կոնկրետ տարբեր և հատուկ կառուցողական քննադատության մեկ ոլորտ, որն առաջարկվում է հետագա ուսուցման նպատակով), • խրախուսեք միջառարկայական «քարտեզագրում»-ը՝ սահմանելու համար ԺՔԿ ուսուցումը տարբեր առարկայական ոլորտներում: Խոսեք գործընկերների հետ, թե ինչպես է գնահատվում աշակերտների ԺԷԿ/ՄԻԿ ուսուցումը: Դպրոցի շրջանակներում փորձեք կիրառել համագործակցային մտածելակերպ:

Քայլ 4 (կառարեկազրծում)	Փորձեք անել հետևյալը.
Դասերի պլանների մեջ ԺՔԿ ուսուցման արդյունքները լավ են սահմանված: Գնահատման գործընթացում աշակերտները վիրտուալ ներգրավված են, և նրանց ձեռքբերումները սահմանված և արժեվորված են: ԺՔԿ սաաով իրենց աշխատանքը գնահատված է ձևավորող գնահատմամբ, այնպես որ հետագա աշխատանքում կամ ծրագրերում հնարավոր լինի հենվել ԺՔԿ գիտելիքի, հմտությունների և մասնագիտության վրա: Դուք հակառում եք, որ ԺՔԿ գնահատման գործընթացի տնօրինողը վերջնական արդյունքում, աշակերտներն են:	• խորացրեք ուսուցման հետազոտական աշխատանքի վերաբերյալ Ձեր գիտելիքները: Գաղափարներ ներառեք ԺՔԿ ինքնագնահատման Ձեր աշխատանքներում (օրինակ՝ լեզվի և բառերի կիրառում, կառուցվածքներ և տրամաբանություն, տեղադրման նկարներ, հմտություններ դիագրամների, մոտածողության ուղղված և գծային կամ և այլն), • ներգրավվեք աշակերտներին գնահատման մեթոդներ մշակելիս, որոնք հարմարեցված են ուսուցման արդյունքներին, • հնարավորություն տվեք աշակերտներին վերամշակել/բարելավել իրենց ԺՔԿ աշխատանքը այն բանից հետո, երբ այդ աշխատանքը վերանայվել է, ինչպես նաև խրախուսեք նրանց հետ աշխատանքը կատարելագործելու ռազմավարությունների մասին, • կազմակերպեք վերապատրաստման հավասարակիցների դասընթաց Ձեր գործընկերների հետ՝ գնահատման նորարարական ռազմավարությունների վերաբերյալ:

6. Խումբ Գ. մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը գործընկերության և համայնքային ներգրավվածության միջոցով

6.1. Համառոտ ակնարկ և տեսական հիմունքներ

Առողջ բազմամշակութային հասարակության մեջ առկա է երկխոսություն և ժողովրդավարական փոխհարաբերություն, որոնք հատում են սոցիալական և մշակութային սահմանները: Դպրոցները հանդիսանում են հաստատություններ, որոնք կարող են օժանդակել համայնքներում կապող օղակներ ստեղծելու և խոչընդոտները վերացնելու հարցում, որտեղ երիտասարդները ապրում են «զուգահեռ կյանքով»: Ներառական քաղաքացիության կարևոր հայեցակետների շարքում ընդգրկվում է ռասիզմի դեմ պայքարի և մարդու իրավունքների դրական և ակտիվ մոտեցումը: Դպրոցները պետք է փորձեն զինվել և հենվել ազգային իրավիճակի վրա: Համայնքային համախմբվածությունը զարգացնելու հիմնական գործակալներ՝ դպրոցները, կարող են դառնալ սիմվոլիկ հաստատություններ, գործնական լուծումների փոխարեն փորձելով գտնել մակերեսային լուծումներ: Ուսուցիչները պետք է «փոփոխություն բերող գործողությունները» ներմուծեն որպես իրենց դասավանդման բնական և ոչ թե արտասովոր կամ հազվագյուտ առանձնահատկություն:

Կոմպետենցիաների այս խումբը ներառում է ԺՔԿ/ՄԻԿ ուսուցումը դասասենյակից դուրս տանելու ունակություն: Այն պատասխանում է «Ո՞ւմ հետ մենք կարող ենք դա անել» հարցին: ԺՔԿ/ՄԻԿ գործունեությունը երիտասարդների կողմից արդյունավետ չի կարող լինել, եթե այն տեղեկացված գործունեություն չէ: Ուստի այս խմբի առաջնային հարցերը հանդիսանում են հետևյալը.

- Տեղեկությունների մշակման ի՞նչ հմտությունների և քննադատական մտածողության նախապայման է հանդիսանում ակտիվ մասնակցությունը:
- Ակտիվ քաղաքացիության ի՞նչ տեսակներ կան, որոնք ամենալավն են այն երիտասարդների համար, որոնք ցանկանում են գործել հանուն փոփոխության:
- Ինչպե՞ս կարող են ուսուցիչները աշխատել արտաքին գործընկերների հետ՝ դյուրացնելու երիտասարդների քարոզարշավները այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում են նրանց:
- Ինչո՞ւ և ինչպե՞ս ենք մենք նախագծում ծրագրեր այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են նախապաշարումը, խտրականությունը և ռասիզմի դեմ պայքարը:

Այս կոմպետենցիաները սերտորեն կապված են թիվ 8 կոմպետենցիայի հետ, քանի որ այն ներգրավվում է աշակերտներին մասնակցության, ուստի երբեմն այդ ընթացքում բարձրացվում են վիճահարույց հարցեր և որպես դասավանդման կենտրոնական գործընթաց՝ կատարվում են հարցադրումներ.

- Ինչպիսի հասարակությունում ենք մենք ապրում:
- Ինչպիսի հասարակությունում և աշխարհում են մենք ցանկանում ապրել ապագայում:
- Ինչ կարող եմ անել ես և մյուսները գործընթացը փոխելու համար և փոփոխություն կատարելու աշխարհում, որտեղ ապրում ենք:

Կոմպետենցիա թիվ 10. Կրթական միջավայր, որտեղ խթանվում է բազմազան աղբյուրների կիրառումը

Կրթական միջավայր, որը հնարավորություն է տալիս աշակերտներին քննադատաբար վերլուծել քաղաքական, էթիկական, սոցիալական և մշակութային արդիական հարցեր, խնդիրներ կամ իրադարձություններ՝ օգտագործելով տեղեկություններ տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ մեդիա, վիճակագրություն, և ՏՀՏ ռեսուրսներ:

Կոմպետենցիա թիվ 11. Համագործակցային աշխատանք՝ համայնքային համապատասխան գործընկերության շրջանակում

Համապատասխան գործընկերների հետ համագործակցային աշխատանք (ինչպես օրինակ՝ համայնքային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ կամ ներկայացուցիչներ) պլանավորելու և իրականացնելու համայնքում ժողողովրդավարական քաղաքացիության հարցերով մասնակցության մի շարք հնարավորություններ աշակերտների համար:

Կոմպետենցիա թիվ 12. Խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարություններ

Նախապաշարումների և խտրականության բոլոր ձևերին մարտահրավեր նետելու, ինչպես նաև ռասիզմի դեմ պայքարի խթանման ռազմավարություններ

Աղյուսակ 6. Խումբ Գ. Մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը գործընկերության և համայնքային ներգրավվածության միջոցով

Տեսական գիտելիքներ

Ուսուցիչները հասկանում են, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը պետք է ներառի կրթության ակտիվ քաղաքացիության առումով առավել լայն հեռանկար: «Դպրոցները[31] որպես ժողովրդավարական տարածք» Դյուի տեսլականի համաձայն ուսուցիչները պետք է փորձեն աշակերտների համար հնարավորություններ ստեղծել իրենց քաղաքացիական վերաբերմունքը և վարքագիծը զարգացնելու ուղղությամբ՝ աշխատելով ներդպրոցական կամ համայնքային ծրագրերի շրջանակում: ԺՔԿ/ՄԻԿ-ի այս լայն հասկացության հիմնական նպատակն է խրախուսել աշակերտներին կիրառելու այն, ինչ սովորել են ԺՔԿ/ՄԻԿ վերաբերյալ և փոխանցելու իրենց ճանաչողական և սոցիալական հմտությունները գործնական և ակտիվ մասնակցության դաշտ: ԺՔԿ/ՄԻԿ ուսուցիչները պետք է ունակ լինեն կառավարել և աջակցել դպրոցում մասնակցային նախաձեռնությունների տարբեր ձևերի (օրինակ՝ աշակերտական խորհուրդներ, աշակերտ-ծնող նախաձեռնություններ, համայնքային ծրագրեր և ուսուցողական ծառայությունների ուսուցում):

Բազմազան աղբյուրների կիրառությունը խթանող կրթական միջավայրի ստեղծումը և տեղեկությունների որոնումը, վերլուծությունը և կիրառությունը կարևորագույն նշանակություն ունեն, քանի որ քաղաքացիներին անհրաժեշտ է ունակ լինել բանական փաստերի հիման վրա վերլուծելու հանրային քաղաքականությունը և արդի խնդիրների լուսաբանումը լրատվամիջոցներում: Ուսումնական ծրագրի տարբեր ոլորտներ որպես աշակերտների ուսուցման էական տարր ներառում են տեղեկությունների մշակումը, այդ թվում՝ տվյալների հավաքումը, քննադատական վերլուծությունը, համեմատական մոտեցումները, բազմահեռանկարային մոտեցումը և այլն: Համացանցը, մամուլը, գրքերը, հեռուստատեսությունը և կինո արդյունաբերությունը հարուստ նյութ են տրամադրում՝ խթանելու աշակերտներին վերլուծել քաղաքական, էթիկական, սոցիալական և մշակութային արդիական հարցեր: Ուստի, բոլոր առարկաների ուսուցիչները պետք է իրազեկ լինեն, որ աշակերտների հետ նման միջոցառումներ նախաձեռնելիս իրենց աշխատանքային պլաններում, ուսումնական պլաններում և դասավանդման գործընթացում նրանք պետք է զարգացնեն ԺՔԿ/ՄԻԿ մեծ թվով հմտություններ: Մեդիան, վիճակագրությունն ու ՏՀՏ հիմքով տարբեր ռեսուրսներ հարուստ հնարավորություններ են առաջարկում՝ դասարանում այդ հմտությունները կիրառելու համար: Եթե երիտասարդները ցանկանում են հիմնավորել իրենց տեսակետները, կամ փոփոխությանն ուղղված որևէ գործունեություն ծավալելու նպատակով հնարավորինս արդյունավետորեն փաստեր և օրինակներ փնտրել և կիրառել, ապա չափազանց կարևոր է, որ նրանք վստահ զգան տեղեկությունների հետ աշխատելու հմտությունների առումով:

Համայնքային համապատասխան գործընկերությունների շրջանակում համագործակցային աշխատանքը պետք է ներառի տեղական, ազգային և միջազգային մակարդակներում ակտիվ քաղաքացիությանն ուղղված ծրագրեր և համայնքային հետագա ներգրավվածության

31. Դյու, Ջ., *Ժողովրդավարություն և կրթություն,* Նյու Յորք Ֆրի փրես (1916), 1966թ.: Նաև հասանելի է Google books կայքէջում՝ http://books.google.com: Դյուի կարծիքով հանրային դպրոցների առանցքային դերը պետք է լինի ժողովրդավարական հասարակություններ զարգացնելը: Նա պնդում է, որ հանրային դպրոցները զուտ հանրությանը ծառայելու համար չեն, այլ իրականում ժողովրդավարական համայնքին աջակցող և պահպանող ընդհանուր արժեքներով, ընկալումներով և հմտություններով «հասարակություն ձևավորելու» համար են: Այս իմաստով հանրային դպրոցները և ժողովրդավարական համայնքը անբաժանելի են:

պլանավորում, որտեղ երիտասարդները փոփոխություններ կատարելու հնարավորություն ունեն: Երիտասարդների կրթության ոլորտում ԺՔԿ/ՄԻԿ-ի գործառույթը դուրս է ֆորմալ դասասենյակի պատերից: Աշակերտները սովորում են ակտիվ քաղաքացի դառնալ նաև դպրոցի և առավել լայն համայնքում տարբեր գործընկերների միջև ստեղծվող կապերի միջոցով: Ուստի ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում ուսուցչի ուսուցման կարևոր հայեցակետ է ԺՔԿ/ՄԻԿ ուսուցման այս ուղղվածությունը կազմակերպելու համար՝ ուսուցչին փորձագիտություն տրամադրելը: Դպրոցները երբեմն իրենց մոտեցումների և գործելակերպերի առումով կարող են լինել մեկուսացված հաստատություններ: Դասավանդման գործընթացում գործընկերության գաղափարը ԺՔԿ/ՄԻԿ ուսումնական ծրագրում և նախաձեռնություններում տարբերվում է կրթության ավանդական մոտեցումից, որի ժամանակ առանձին ուսուցիչներ պլանավորում, մատուցում և վերանայում են ուսումնական ծրագիրը: Կասկած չկա, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը ավելի արդյունավետ է դառնում, եթե դպրոցը գործում է իր պատերից դուրս և դրանից այն կողմ: Երիտասարդները պետք է զարգացնեն այն, ինչ Հենրի Գիրուքսը[32] անվանել է փոփոխությունների գործակալներ հանդես գալու «հնարավորությունների լեզու»: Ուսուցիչները պետք է օժանդակեն իրենց աշակերտներին պատկերացնելու տեղական և գլոբալ մակարդակներով ավելի լավ ապագա և պետք է միջոցներ տրամադրեն (գիտելիք, հմտություններ և ինքնավստահություն)՝ ձեռնարկելու գործնական քայլեր այդ ապագան իրականություն դարձնելու համար:

Դասավանդման և ուսուցման այն մոտեցումները, որոնք ընկած են երիտասարդների համար իրական սեփականության զգացողություն ստեղծող ակտիվ, մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ ծրագրերի հիմքում, կարելի է պարզորոշ դիտել որպես ապագայի համար սոցիալական կապիտալ ներդրում:

Իրական փոփոխություն կատարելու համար դպրոցները և աշակերտները պետք է աշխատեն և ներգրավեն տարբեր գործընկերների, որոնք կազմում են «համայնք» և կրթության ոլորտում ներգրավում են փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ հնարավորինս շատ համայնքային ոլորտներ. ընտանիք, հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, եկեղեցիներ, նույն հետաքրքրություններով միավորված մարդկանց խմբեր, համայնքային ներկայացուցիչներ, ընտրված պաշտոնյաներ, մեդիա պրոֆեսիոնալներ, տեղական կառավարման ներկայացուցիչներ և այլն:

Գոյություն ունեն այս մոտեցումը պաշտպանող հետազոտական տվյալներ.

- Դպրոցները համայնքին կապելու միջոցով ժողովրդավարական քաղաքացիության կոմպետենցիաների զարգացումը կարող է նպաստել սոցիալական խնդիրների չեզոքացմանը և սոցիալական համախմբվածության խթանմանը՝ որպես ԺՔԿ/ՄԻԿ-ի շուրջ ցանցերի ստեղծումն ու քաղաքացիական գործընկերությունը խթանող սոցիալական գործունեություն,[33]
- ուսուցողական ծառայությունները՝[34] որպես դպրոցը համայնքին կապող հատուկ գործունեություն, դրական ազդեցություն ունեն աշակերտների զարգացման տարբեր կողմերի վրա, ինչպես օրինակ՝
    - աշակերտների անձնական և սոցիալական պատասխանատվությունը,
    - աշակերտների միջանձնային հաղորդակցումը և մշակութային տարբեր խմբերի հետ փոխհարաբերվելու ունակությունը. նրանց դուր է գալիս այլոց օգնելը, նրանք կապեր են ստեղծում ավելի շատ մեծահասակների հետ և համաձայն են աշխատել տարեցների և հաշմանդամների հետ,
    - աշակերտների քաղաքացիական և սոցիալական պատասխանատվությունը և նրանց քաղաքացիության կոմպետենցիաները. ավագ դպրոցի աշակերտները զարգացրել են սոցիալ-պատմական համատեքստերի առավել խորը ընկալում, նրանք մտածում են քաղաքականության և հասարակության մեջ բարոյականության մասին, քննարկում են, թե ինչպես հասնեն սոցիալական փոփոխությունների: Նրանք քաղաքականապես ավելի ակտիվ են ուզում դառնալ,

32. Գիրուքս, Հ., *Գաղափարախոսության մշակույթը և դպրոցական կրթության գործընթացը,* Թեմփլ յունիվերսիթի փրես, Ֆիլադելֆիա/Ֆալմեր փրես, Լոնդոն, 1981 թ.:

33. Եվրոպայի խորհուրդ «Ապրել և սովորել ժողովրդավարություն բոլորի համար: Հայեցակարգ», Կրթության միջոցով քաղաքացիության եվրոպական տարվա փորձագետների ժամանակավոր կոմիտե, CAHCIT, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 2005 թ.:

34. Բիլիգ, Ս., և Շիլի, Հ., *Մանկապարտեզից մինչև 12- ամյա կրթության դպրոցներում ուսուցողական ծառայությունների մասին հետազոտություն: Ապացույցները խոսում են*: ՖիԴելտա Կապանի կողմից Բլումինգթոնի Գիտական կրթություն հրատարակության մեջ տպագրված ուսուսումնասիրություն, որը ֆինանսավորվել է Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի և ՔԿՄՏՀԿ-ի կողմից (Քաղաքացիական կրթության և մասնակցության տեղեկատվական և հետազոտական կենտրոն), 2000 թ.:

- ուսուցողական ծառայությունները ազդեցություն ունեն համայնքի անդամների՝ որպես դպրոցի գործընկերների վրա. նման գործընկերները դիտում են երիտասարդներին որպես համայնքի արժեքավոր ռեսուրս:

- ուսուցողական ծառայությունների վրա ազդեցության մեկ այլ հետազոտության մեջ նշվում է, որ այն օրինական և հզոր կրթական գործելակերպ է, որը թույլ է տալիս աշակերտներին առավել լավ հասկանալ ժողովրդավարական քաղաքացիության գաղափարները՝ աշխատելով իրենց համայնքների համար և բավարարելով համայնքի իրական կարիքները:[35]

Կարևոր է ընդունել, որ որոշ դպրոցներ սկսում են քաղել օգուտներ, երբ վերջիններս զարգացնում են ի օգուտ ԺՔԿ/ՄԻԿ-ի համայնքային ներգրավվածությունը: Սոցիալական կապիտալի վրա կենտրոնանալու առումով կա մի հստակ վտանգ, որը կայանում է հետևյալում՝ ինչպես ցանկացած կապիտալի դեպքում, ինչքան մեծ է նախնական կապիտալը, այնքան մեծ է այն մեծացնելու ներուժը:[36] Դպրոցները կարող են ծառայել ոչ թե մեկ համայնքի, այլ, իրականում, մի քանի բաժանված և բազմազան համայնքների: Ուսուցիչները պետք է ուրախ լինեն այս ոլորտում առաջ շարժվելու ապահով, անվտանգ և երբեմն փոքր քայլեր ձեռնարկելու հարցում:

Աշակերտներին պետք է ուսուցանել խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարությունները՝ օգնելու նրանց հասկանալ հարցի բարդությունը: Ռասիզմի, նախապաշարումների ու խտրականության բոլոր ձևերի, ինչպես օրինակ սեքսիզմի, մարդատյացության և կրոնական խտրականության մասին ընկալումը, այն բանի առնչությամբ, թե ինչպես են նրանք միասին ծառայում ժողովրդավարությունը վարկաբեկելու համար, ուստի՝ ցանկացած կրթական ծրագրի կարևոր առանձնահատկությունն է խթանել քաղաքացիների քաղաքական գրագիտությունը: Աշակերտները պետք է հասկանան, որ ազատ խոսքը բացարձակ չէ: Դպրոցում տեղ չունեն ռասիստական դիտողությունները, դպրոցները կանոնադրական պարտավորություն ունեն մշտադիտարկել, արձանագրել և քայլեր ձեռնարկել ռասիստական դրսևորումների դեմ: Ռասիզմը պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի գլոբալ սկզբունքների և եվրոպական ու ազգային մակարդակներում պետական քաղաքականությունների շրջանակներում որպես փոքրամասնությունների քաղաքացիության իրավունքները սահմանափակող և ժողովրդավարության սկզբունքները վտանգող ուժերից մեկը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1989) 13-րդ հոդվածում նշվում է. «Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը....եթե դա չի վնասում այլոց իրավունքներին և հեղինակությանը»:[37] Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (1950 թ.) նշում է 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում, որ «Յուրաքանչյուր ոք ունի սեփական կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունք... Այդ իրավունքների իրականացումը, քանի որ դրանք պարատավորություններ և պատասխանատվություն են ենթադրում, կարող է պայմանավորվել այնպիսի ... պայմաններով, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»:[38]

Դպրոցները առանցքային վայր են՝ խթանելու համայնքների միջև փոխըմբռնումը և պայքարելու անհանդուրժողականության և կրոնական ծայրահեղականության դեմ: Կրթությունը կենտրոնական ներուժ ունի նախապաշարումների դեմ պայքարելու, անձանց և համայնքների միջև փոխըմբռնում ձևավորելու, աննպաստ վիճակում գտնվող անձանց արտոնելու, բաց ու հարգալից բանավեճը խրախուսելու համար: ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում ցանկացած լուրջ ծրագիր պետք է երիտասարդներին ընձեռի գիտելիք և հմտություններ՝ պայքարելու ռասիզմի և հակաժողովրդավարական ուժերի դեմ և հասկանալու ռասիզմի և խտրականության ներքին սոցիալական գործառույթը, ինչպես նաև հասկանալու դրանց տնտեսական և քաղաքական ուղղվածությունները: Նման ծրագիրը պետք է նաև հնարավորություն տա բոլոր երիտասարդներին որպես քաղաքացիներ ապահով և ինքնավստահ ինքնություն ձևավորելու հարցում. «Իրենց ինքնության հարցում ինքնավստահ երիտասարդ քաղաքացիներն ավելի ամուր դիրքերում կլինեն մարտահրավեր նետելու փոքրամասնությունների մասին նախապաշարմունքային պատկերացումներին, որոնք այժմ ուղեկցում են խտրական գործելակերպերին»:[39]

Հետազոտական փաստերը ցույց են տալիս, որ շատ ուսուցիչների կողմից ընդունված վիճահարույց հարցերի, ինչպես օրինակ խտրականության և ռասիզմի դասավանդման համընդհանուր մոտեցումից

35. նույն տեղում:
36. Զախարակիս-Յութս, Յ., և Ֆլորա, Զ., «Համայնքային զարգացման մեջ սոցիալական կապիտալը ամրապնդելուն ուղղված համագործակցային հետազոտության օգտագործմամբ հարցեր և փորձառություններ» Արմսթրոնգ, Փ., Միլերմ, Ն. և Զուկաս, Մ. (խմբ.) *Սահմանների հատում, սահմանների խզում,* Լոնդոնի համալսարան, 1997 թ.:
37. See: www.unesco.org/education/pdf/CHILD_E.PDF.
38. See: www.hri.org/docs/ECHR50.html#C.Art10.
39. Օսլեր, Ա. «Քրիքի զեկույցը. տարբերություն, հավասարություն և ռասայական արդարություն», *Ուսումնական ծրագրերի ամսագիր,* հատոր 11(1), 2000թ., էջ 25-37:

պետք է հրաժարվել: Օրինակ՝ Հյուսիսային Իռլանդիայի մի ինտեգրված դպրոցի մասին քննադատական ակնարկում, Դոնելին[40] ցույց տվեց, թե ինչպես է այդ դպրոցը վերաբերում փոխադարձ ըմբռնման դասավանդմանը. «Ուսուցիչներից շատերը «ծայրահեղ որոշումներ» են ընդունում, որոնք արտացոլում և ամրապնդում են «խուսափելու մշակույթը», որի դեպքում քաղաքական կամ կրոնական վիճահարույց խնդիրները շրջանցվում և ոչ թե քննվում են»: Դպրոցները պետք է պատրաստ լինեն քննարկել լրատվամիջոցների վիճահարույց թեմաները, ինչպես օրինակ՝ ներգաղթի և միգրանտ համայնքների ինտեգրման շուրջ բանավեճն է: «Բոլոր դպրոցները պարտավորություն ունեն բարձրացնելու «ինչպես ենք մենք ապրելու միասին» և «ինչպես են լուծվելու տարբերությունների խնդիրները» հարցերը, ինչքան էլ որ դրանք խրթին և հակասական թվան»:[41]

Այսպիսով՝ ԺՔԿ/ՄԻԿ-ը հիմնարար դեր ունի արդյունավետ համայնքային հարաբերությունների, ընդհանուր ինքնությունների և տարբերություններն արտահայտելու ապահով եղանակների մասին գիտելիքները խորացնելու և հմտությունները զարգացնելու գործում: Սա ենթադրում է կրթություն հանուն կոսմոպոլիտան քաղաքացիության: Կարևոր է, որպեսզի երիտասարդները շրջանցեն ինքնության և բազմազանության ուսուցման ազգային նեղ հայեցակետերը, և իրենց մտածելակերպը արմատավորեն մարդու իրավունքների առավել գլոբալ հայեցակետի վրա: Մարդու իրավունքների մոտեցումը կարևոր նշանակություն ունի, որովհետև այն ներմուծում է այն հիմնարար գաղափարը, որ նույնիսկ ժողովրդավար կառավարությունները կարող են լինել ճնշող, հատկապես փոքրամասնություն ներկայացնող խմբերի հետ վերաբերմունքի դրսևորումներում: Մարդու իրավունքների արժեքները և միջազգային կանոնագրքերն ու սկզբունքները առաջարկում են հեռանկար, ըստ որի հնարավոր է քննադատաբար գնահատել հասարակությունում հավասարության իրական մակարդակը:

Արժե սահմանել (միգուցե աշակերտական խորհրդի միջոցով) իրական կյանքի հետ առնչություն ունեցող ծրագրեր, որոնք կօգնեն ամրապնդել համայնքային համախմբվածությունը և հանգեցնել հետագա միջոցառումների, ինչպես օրինակ՝ ոչ միայն դպրոցի այլ նաև համայնքի ներգրավմամբ ցուցահանդեսներ, քարոզարշավ և բանավեճեր՝ փորձելով պատասխանել «ով ենք մենք» հարցին:

6.2. Կոմպետենցիա թիվ 10

Կոմպետենցիա թիվ 10. կրթական միջավայր, որտեղ խթանվում է բազմազան աղբյուրների կիրառումը

Կրթական միջավայր, որը հնարավորություն է տալիս աշակերտներին քննադատաբար վերլուծել քաղաքական, էթնիկական, սոցիալական և մշակութային արդիական հարցեր, խնդիրներ կամ իրադարձություններ՝ օգտագործելով տեղեկություններ տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ մեդիա, վիճակագրություն, և ՏՀՏ ռեսուրսներ:

6.2.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան կարող են մասնավորապես, ցուցաբերել, որ իրենք, օրինակ.

- կարողանում են դասավանդման ժամանակ օգտվել տվյալների հավաքագրումից ՝ ԺՔԿ/ՄԻԿ ծրագրերի անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Օրինակ՝
  - պատմության ուսուցիչները կարող են խնդրել աշակերտներին մեդիայի տարբեր աղբյուրներից փնտրել տեղեկություններ անցյալում գոյություն ունեցող ոչ ժողովրդավար հասարակությունների մասին: Տվյալների հավաքագրումը և կայացրած եզրակացությունները կարող են համեմատության հիմք հանդիսանալ ժամանակակից աշխարհում տիրող իրավիճակի համար,

40. Դոնելի, Ս., «Ո՞րն է ներդաշնակության գինը»: Հյուսիսային Իռլանդիայի ինտեգրված դպրոցում հանդուրժողականության և բազմազանության ոգին մատուցելու ուսուցիչների մեթոդները», *Կրթական հետազոտություն,* հատոր 46 (1), 2004 թ., էջ 3-16:
41. Աջեգբո, Ք., *Ուսումնական ծրագրերի վերանայում. բազմազանություն և քաղաքացիություն,* DfES, 2007 թ.:

– աշխարհագրության ուսուցիչները կարող են խնդրել աշակերտներին հավաքել տվյալներ աղտոտման կամ ռեսուրսների վատնման վերաբերյալ, կարող են քննարկել գլոբալ կայունության հետագա հեռանկարները՝ քննարկմանը տալով պատախանատվության և բարոյագիտական սպառողականության ուժեղ զգացողություն,

– երաժշտության կամ արվեստի ուսուցիչները կարող են կիրառել մշակութային ժառանգությունը և արվեստների ազդեցությունը՝ ինքնության զգացում խթանելու համար:

➔ հնարավորություն տվեք աշակերտներին վերլուծելու և քննարկելու լրատվամիջոցներից տարբեր թեմաներ, որոնք նպաստում են ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքներին և հմտություններին: Օրինակ՝ հայտարարությունների և դրանց ազդեցության վերլուծություն, տարբեր լրատվամիջոցներում իրարամերժ լրատվության քննություն, մամուլի ազատություն, թե ինչպես կարող է հեռուստատեսությունը կարծիք ձևավորել, և ինչպես կարող են մեդիան և կարծիքի պնդումները ազդել ժողովրդավարական ընտրությունների վրա,

➔ հնարավորություն տվեք աշակերտներին քննել վիճակագրության թե' դրական արժեքը և թե' սահմանափակումները.

– դրական արժեք՝ վիճակագրական փաստեր, որոնք պետք է նույն կերպ քննվեն, ինչպես մյուս բոլոր փաստերը, օգնում են փաստարկի և բանավեճի հիմնավորումներ տրամադրելու համար: Վիճակագրությունը կարող է օգնել հստակ, անկախ և արդար չափումներ ունենալու այն հարցում, թե ինչ է տեղի ունենում հանրային կյանքում. տեղական և ազգային կառավարությունները վիճակագրությունը օգտագործում են քաղաքականություն մշկակելու համար, և հանրային ծառայությունները կանոնավոր կերպով վիճակագրական տվյալներ են ստանում՝ փորձելով պարզել, թե արդյոք տեղի է ունեցել առաջընթաց որոշակի քաղաքականության ոլորտում: Ճնշման խմբերը նույնպես ձեռք են բերում վիճակագրություն՝ իրենց փաստարկները հիմնավորելու համար,

– սահմանափակումները. վիճակագրության արժեքը պայմանավորված է տեղեկությունների հավաքագրման հավաստիությունից և այն եղականակներից, թե ինչպես է այն մատուցվում, ինչպես են հարցերը ձևակերպվում և այն անձի հանդեպ ունեցած վստահությունից, ով կազմում է այդ տեղեկությունների բազան: Վիճակագրություն կարող են հորինել անպարկեշտ քաղաքական ռեժիմները կամ այն կարող է ձևակերպվել «կողմնակալ կերպով» ժողովրդավարական ռեժիմներում: Այն կարող է լինել մասնակի և/կամ ընտրովի. որոշ բաներ դժվար է չափել քանակական եղանակով:

➔ արդյունավետ կիրառեք ՏՀՏ հիմքով աղբյուրները՝ օգնելու աշակերտներին զարգացնել ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և հմտությունները.

– դա հնարավորություն է տալիս կատարել ժամանակակից սոցիալական և քաղաքական հարցերի խորը հետազոտություն և վերլուծություն,

– տեղեկությունները չեն հավաքվում պասիվ կերպով՝ հետազոտությունը կառուցվածք ունի: Աշակերտները աշխատում են այն տեղեկությունների հետ, որի շուրջ մտածում են.

– «փոփոխություն կատարելու» և այլոց համոզելու հնարավորությունները ձևավորվում են համագործակցային խմբի և ծրագրային աշխատանքի շրջանակում,

– աշակերտները քննադատական և ստեղծագործ որոշումներ են կայացնում իրենց գաղափարները մատուցելու հարցում:

6.2.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 10. Կրթական միջավայր, որտեղ խթանվում է բազմազան աղբյուրների կիրառումը	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք չեք մտածել,թե ինչպես տարբեր մեդիա միջոցներ, վիճակագրություն և ՏՀՏ-ներ կարող են լինել դասավանդման աղբյուր, մեթոդ և թեմա: Դուք հազվադեպ եք մտածել, թե այդ ռեսուրսները ինչպես կարող են հարստացնել Ձեր դասավանդումը և օգնել ներառել ԺՔԿ/ՄԻԿ թեմաները և մեթոդները Ձեր դասավանդման պրոցեսում: Դուք պատրաստ չեք զգում մեդիան, վիճակագրությունը և ՏՀՏ միջոցները Ձեր դասավանդման պրոսեցում օգտագործելու համար:*	**Փորձեք անել հետևյալը.** • տվեք աշակերտներին առավել անկախ դեր՝ մեդիան, վիճակագրությունը և ՏՀՏ-ն դասերի ընթացքում կիրառելու պլանավորման հարցում: Փորձեք դասավանդման ժամանակ ներառել հարցեր նրանց հետաքրքրություններից ՝ առավելագույնը հասցնելու համար սովորողների ներգրավումը, • համագործակցեք Ձեր գործընկերների հետ: Խրախուսեք զարգացնելու թիմային աշխատանքն առարկայական տարբեր ոլորտների ուսուցիչների միջև՝ ԺՔԿ/ՄԻԿ նպատակներն և խնդիրները ձեռք բերելու և դպրոցական համակարգի ժողովրդավարական մոտեցմանն աջակցելու համար, • միշտ տեղեկություններ հավաքեք Ձեր դասավանդման արդյունքների առնչությամբ հետադարձ կապի մասին (միգուցե ինքնագնահատման կամ հավասարակիցների գնահատման մեթոդների օգտագործմամբ):
Քայլ 2 (զարգացում) *Դուք իրազեկ եք, թե մեդիան, վիճակագրությունը և ՏՀՏ-ն ինչպես կարող են նպաստել Ձեր դասավանդման պրոցեսին: Դուք առանձնացրել եք համապատասխան նյութեր և պլանավորում եք իրականացնել որոշ աշխատանքներ դասավանդման ժամանակ: Ձեր ջանքերը սահմանափակ են և դուք համոզված չեք, թե Ձեր դասավանդումը աշակերտների վերլուծական և հետազոտական հմտությունները զարգացնելու հարցում որքանով է արդյունավետ եղել :*	**Փորձեք անել հետևյալը.** • Ձեր աշակերտներին մեդիա և ՏՀՏ ռեսուրսներ օգտագործողներից դարձրեք տեղեկություն ստեղծողներ, • խրախուսեք նրանց զարգացնել իրենց մտահոգող հարցի շուրջ քննարկան և համոզման հմտություններ՝ օգտագործելով տեղեկություններ և գործիքներ, որոնք հիմնավորում են իրենց փաստարկները, • կիսեք Ձեր գիտելիքները և հմտությունները Ձեր գործընկերների հետ:
Քայլ 3 (հաստատում) *Դուք համակարգված ձև եք մշակել մեդիան, վիճակագրությունը և ՏՀՏ-ն դասավանդման պրոցեսում կիրառելու և ԺՔԿ/ՄԻԿ-ի հետ կապեր հաստատելու համար: Դրանք հաճախ օգտագործեք, երբեմն անուղղակիորեն՝ աշակերտների հմտությունների զարգացումը առաջին պլան ուղղորդելու առնչությամբ: ԺՔԿ/ՄԻԿ կապերը կարող են դեռ պատահականության հետևանք լինել՝ «խոր ուսուցում» լինելու փոխարեն:*	**Փորձեք անել հետևյալը.** • սկսեք փնտրել Ձեր ուսումնական ծրագրին օժանդակող համապատասխան մեդիա միջոցներ, վիճակագրություն և ՏՀՏ ռեսուրսներ որոնելով (լրագրեր, ամսագրեր, տեղեկագրեր, հաշվետվություններ, հեռարձակումներ, կայքէջեր, և այլն), • համոզվեք, որ վստահ եք դասավանդման պրոցեսում այդ ռեսուրսները օգտագործելու՝ անհրաժեշտության դեպքում փորձելով օգտվել վերապատրաստման հնարավորություններից, • խորհրդակցեք Ձեր գործընկերների հետ և ձեռք բերեք նոր գաղափարներ, • վերլուծեք Ձեր կողմից առանձնացրած ռեսուրսները: Ինչպե՞ս են նրանք հարմարեցված Ձեր ուսումնական ծրագրին: Ինչպե՞ս կարող են դրանք օգնել աշակերտներին ժամանակակից հարցերի շուրջ հետազոտական և վերլուծական հմտությունները զարգացնելու հարցում:
Քայլ 4 (կատարելագործում) *Մեդիայի, վիճակագրության և ՏՀՏ ռեսուրսների օգտագործումը Ձեր դասավանդման ժամանակ և հստակ կապերի կատարումը ԺՔԿ խնդիրներին, մտահագություններին և արժեքներին դարձել է Ձեր պրոֆեսիոնալ գործելակերպի բնական և կայուն բաղադրիչը:*	**Փորձեք անել հետևյալը.** • Ձեր դասերը պլանավորելիս ներառեք մեդիա միջոցներ, վիճակագրություն կամ ՏՀՏ հիմքով աշխատանքներ ուսումնական ծրագրում՝ հստակ սահմանելով Ձեր նպատակները և խնդիրները, • համոզվեք որ բավականաչափ ռեսուրսներ ունեք յուրաքանչյուր աշակերտի կամ խմբի համար, • հստակ հրահանգներ նախապատրաստեք սովորողների համար (աշխատանքային աղյուսակներ, հանձնարարություններ, առաջադրանքների ցանկեր, և այլն), • գնահատեք դասը՝ որպես հիմնական ցուցանիշ օգտագործելով աշակերտների կողմից կատարված աշխատանքը, • խնդրեք աշակերտներին դասարանի հետ կիսվել այն, ինչ սովորել են դասի ժամանակ:

6.3. Կոմպետենցիա թիվ 11

Կոմպետենցիա թիվ 11. Համագործակցային աշխատանք՝ համայնքային համապատասխան գործընկերության շրջանակում

Համապատասխան գործընկերների հետ համագործակցային աշխատանք (ինչպես օրինակ՝ համայնքային, հասարակական կամ կամավորական կազմակերպությունների ներկայացուցիչներ)՝ աշակերտների համար պլանավորելու և իրականացնելու համայնքում ժողովրդավարական քաղաքացիության հարցերով մասնակցության մի շարք հնարավորություններ:

6.3.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան կարող են ցուցաբերել, որ, օրինակ,

- ունակ են գործնական կապեր հաստատել համայնքային խմբերի հետ՝ ընտրելով համապատասխան գործընկերներ, որոնք պատրաստ են աշխատել համակարգված եղանակով,
- ունակ են ստեղծել և խորացնել գործընկերների հետ համագործակցությունը (ծնողներ, ընտանիքներ, հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, եկեղեցիներ, նույն հետաքրքրություններով միավորված մարդկանց խմբեր, համայնքի ներկայացուցիչներ, ընտրված պաշտոնյաներ, մեդիա պրոֆեսիոնալներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, թանգարաններ, գրադարաններ, և այլն)՝ համաձայնելով ընդհանուր տեսլականի շուրջ և սահմանելով նպատակներ: Դպրոց/համայնք գործընկերության առանցքային սկզբունքներ կարող են հանդիսանալ. հավասարությունը և փոխադարձ հարգանքը, աշակերտակենտրոն և ներառական գործունեությունը, հստակ տեսլականը և նպատակները, թափանցիկությունը, կայուն հանձնառությունը, նոր մոտեցումներ փորձելու պատրաստակամությունը և իրատեսականությունը,
- զգոն են լինում աշակերտների հավասարակշիռ ուսուցման առումով. կարևոր է մշտադիտարկել երիտասարդների հետ նրանց փոխհարաբերությունը՝ խուսափելու համար «առանց համակարգման գաղափարախոսական շեղումների սերմանումից այն անձանց կողմից, որոնք կարծում են, որ իրենք ճիշտ են»,[43]
- կարողանում են սահմանել «փոփոխություններին ուղղված հնարավոր գործողություններ», որոնք թե' կընդլայնեն աշակերտների ԺՔԿ գիտելիքները և հմտությունները և թե' շահեկան կլինեն համայնքի համար: Օրինակ՝
  - մտահոգության առարկա որևէ հարցի շուրջ գրելը և/կամ այն մյուսներին ներկայացնելը, հրապարակայնորեն տեսակետները փոխանցելը և դրանք արտահայտելը լրագրի, կայքէջի կամ մեդիայի միջոցով,
  - խորհրդատվություն տալը, քվեարկելը կամ ընտրությունների ժամանակ տեղական/համայնքային քաղաքականությանը նպաստելը,
  - ժողովի, համաժողովի, ֆորումի կամ բանավեճի կազմակերպում, այլոց տեսակետների ներկայացում (օրինակ՝ կազմակերպության շրջանակում, ժողովին կամ միջոցառման ժամանակ),
  - կազմակերպական քաղաքականության մշակում, վերանայում կամ փոփոխում,
  - ցուցահանդեսի, քարոզարշավի, ցուցադրման, համայնքի շրջանակում միջոցառման (օրինակ՝ ներկայացման, տոնակատարության կամ բաց դռների օրերի) կազմակերպում և անցկացում,
  - ակցիայի խմբի կամ ցանցի ստեղծում և զարգացում,[44]
- կարողանում են կառավարել համայնքի գործընկերների ներգրավվումը,
- կարողանում են համատեղ վերանայել և գնահատել ցանկացած համատեղ ծրագրի հաջողություն, զրուցել աշակերտների հետ նրանց տպավորություններից, լուծումներ գտնել, թե ինչպես աշակերտների ԺՔԿ աշխատանքը փոխանցեն ծնողներին և առավել լայն համայնքին՝ լրատվության, պրեզենտացիաների, կայքէջերի և այլնի միջոցով.

42. Գերոն, Լ., *«ՀԿ-ները և կրթություն. որոշ նախնական դատողություններ»*, Կրթության անդրադարձ, էջ 17, 2006 թվականի հոկտեմբերի 2:
43. Ցանկի ոգեշնչողներն են ՈՀՎ-ն, *Խաղա դերի քո մասը* - 16 քաղաքացիություն, ՈՀՎ, Լոնդոն, 2004

6.3.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 11. Համագործակցային աշխատանք՝ համայնքային համապատասխան գործընկերության շրջանակում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Համայնքի գործընկերների հետ քիչ շփումներ կան կամ բոլորովին չկան՝ ուսումնական ծրագրի աշխատանքներին օժանդակելու համար: Այցելուներ լինում են պատահական և անհատական հիմունքով: Ծնողները և համայնքը ընդհանուր առմամբ տեղյակ չեն, որ դպրոցը ընդունել է ԺՔԿ/ՄԻԿ մոտեցում: Դպրոցը չի զբաղվել դպրոցական կայքէջում ԺՔԿ/ՄԻԿ էջ բացելու հարցով , որը հասանելի կլինի համայնքի համար:*	**Փորձեք անել հետևյալը.** • փնտրեք դաշնակիցներ, որոնք հետաքրքրված կլինեն աշխատել աշակերտների հետ (օրինակ, ծնողներ, որոնք ներգրավված են հասարակական կազմակերպություններում կամ ճնշման խմբերում, կրթական աշխատանք կատարող տեղական մարմինների ներկայացուցիչներ և տեղական խորհուրդներ), • ստեղծեք մեկ կամ երկու ուսումնական ծրագրի նախագծեր, որոնք ներառում են «փոփոխություններին ուղղված գործողություններ» և/կամ խրախուսեք աշակերտներին «փոփոխություններ կատարել» իրենց հետաքրքրող հարցի առնչությամբ: Գնահատեք արդյունքները, • փորձեք սահմանել դպրոցի քաղաքականության ուղեցույցեր՝ օգտվելու արտաքին այցելուների հետ արդյունավետ շփումներից:
Քայլ 2 (զարգացում) *Տեղական և ազգային գործակալությունները որոշ չափով հանդիսանում են որպես ռեսուրս՝ աջակցելու համար դասարանային աշխատանքներին: Կապեր են հաստատվում համայնքի որոշ ներկայացուցիչների հետ՝ աջակցելու ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքներին: Դպրոցական լրագրերում հղում է կատարվում ԺՔԿ/ՄԻԿ-ին ծնողների և առավել լայն համայնքի համար: Դպրոցը կայքէջ ունի, որն ունի ԺՔԿ/ՄԻԿ էջ:*	**Փորձեք անել հետևյալը.** • փորձեք համայնքի՝ ԺՔԿ/ՄԻԿ ծրագրեր աջակցող հատուկ խմբերի կամ հասարակական կազմակերպությունների հետ խորացնել գործընկերությունները, օրինակ, համաձայնություն ձեռք բերելով ընդհանուր տեսլականի և տարեկան ընդհանուր նպատակներ սահմանելու միջոցով, • խոսեք աշակերտների ծնողների հետ՝ սահմանելու համար տեղական համայնքի համար մտահոգության ոլորտները, ապա փորձեք գտնել համապատասխան գործընկերներ՝ խնդիրը լուծելու համար, • գործընկերների հետ աշխատելիս փորձեք գծագրել դպրոցի՝ ԺՔԿ/ՄԻԿ հարցերի և հնարավորությունների առնչությամբ համայնքի գործընկերների հետ ներգրավվման չափը և տիրույթը, • բարելավեք համայնքի այցելուների կամ հասարակական կազմակերպությունների այցելությունները, այնպես որ արտաքին գործընկերների ներգրավվումը չընկալվի աշակերտների կողմից որպես մեկանգամյա միջոցառում, այլ դիտվի որպես կրթական պրոցեսի մաս:
Քայլ 3 (հաստատում) *Տեղական համայնքի ռեսուրսների ընտրությունը/վերահսկողությունը օժանդակում է ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքների պլանավորմանը: Համայնքի ծնողները հստակ ուղղորդում են ստանում իրենց գործառույթների մասին: Աշխատանքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը կրում է մշտական բնույթ: Ծրագրի արդյունքները և աշակերտների ձեռքբերումները հրապարակվում են (և անհրաժեշտության դեպքում՝ թարգմանվում) կայքէջում և տրամադրվում են ծնողներին հատուկ միջոցառումների (օրինակ, ծնող-ուսուցիչ հանդիպումների) ժամանակ:*	**Փորձեք անել հետևյալը.** • ԺՔԿ/ՄԻԿ գոյության փաստի մասին տեղեկությունների հրապարակման հաղորդակցության ուղիները դարձրեք բազմազան և ծնողներին և տեղական շահագրգիռ կողմերին բացատրեք, թե ինչումն է այն կայանում, • տեղեկացրեք հիմնական շահագրգիռ կողմերին Ձեր դպրոցում և/կամ դասարանում ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում առաջընթացի մասին տեղական մամուլի, դպրոցական կայքէջի կամ այլ մեդիայի ուղիների միջոցով: • գտեք եղանակներ առավել հարստացնելու աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ փորձառությունը, օրինակ՝ շրջակա միջավայրի կազմակերպությունների, բարեգործական կազմակերպությունների, ճնշման խմբերի կամ գլոբալ կազմակերպությունների առավել ներգրավվմամբ: Գտեք եղանակներ խթանելու և բացահայտելու աշակերտների (երբեմն լատենտ) իդեալիզմը:

Կոմպետենցիա թիվ 11. Համագործակցային աշխատանք՝ համայնքային համապատասխան գործընկերության շրջանակում	
Քայլ 4 (կատարելագործում) *Համայնքի գործընկերները կազմակերպում, աջակցում և նախաձեռնում են ԺՔԿ/ՄԻԿ աշխատանքներ դպրոցում՝ լիակատար և արդյունավետ գործընկերության պայմաններում: Հաղորդակցության մեխանիզմները ուղղորդվում են աշակերտների ծնողներին և համայնքին՝ տեղեկությունների և ռեսուրսների տրամադրմամբ:*	**Փորձեք անել հետևյալը.** • Կազմեք ծրագրեր, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համատեղ աշխատել համայնքի մի շարք գործընկերների հետ՝ երիտասարդների համար կարևոր տարբեր ծառայությունները բարելավելու համար (օրինակ՝ զվարճանքի կենտրոններ, տրանսպորտ և էկոլոգիական հարցեր), • շարունակեք վերանայել և գնահատել համագործակցությունը և նախագծեք հնարավորություններ հետագա ծրագրերի համար, • աջակցեք աշակերտներին իրենց քարոզարշավների և այլ նախաձեռնությունների ժամանակ, • փնտրեք ուղիներ, որոնք հնարավորություն կտան ծրագրերն ավելի աշակերտակենտրոն դարձնել:добивайтесь того, чтобы проекты осуществлялись самими учащимися, уменьшая вклад взрослых/учителей.

6.4. Կոմպետենցիա թիվ 12

Կոմպետենցիա թիվ 12. Խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարություններ

Նախապաշարումների և խտրականության բոլոր ձևերին մարտահրավեր նետելու, ինչպես նաև ռասիզմի դեմ պայքարի խթանման ռազմավարություններ:

6.4.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան կարող են ցուցաբերել, որ իրենք, օրինակ.

- ստեղծում են ներառական ուսուցման միջավայր, որտեղ բոլոր աշակերտների մասնակցությունը գնահատվում է, մարտահրավեր է նետվում նախապաշարմունքային կարծիքներին և աշակերտները սովորում են գնահատել ու դրական վերաբերվել մյուսների տարբերություններին: Նրանք նախաձեռնում են ծրագրեր : Օրինակ՝
  - պաստառների պատրաստում, որոնք խորհել են տալիս համապատասխան հարցերի շուրջ,
  - բոլոր խմբերի ձեռքբերումների դրական պատկերավոր վերարտադրություն,
  - աշակերտների համար ուսուցման ռեսուրսների ընտրություն, որոնք համապատասխանում են նրանց հետաքրքրություններին, փորձառությանը և կարիքներին,
  - նախապաշարմունքային վերաբերմունքի դատապարտում և մարդկանց կողմից դրական վերաբերմունքի խրախուսում,
  - աշակերտների միջև լեզվական բազմազանության դրական վերաբերմունքի խրախուսում,
  - խմբային ռազմավարություններում ճկունության ցուցաբերում, որը աշակերտներին հնարավորություն կտա աշխատել և սովորել համագործակցային պայմաններում՝ տարբեր սոցիալական ծագման և տարբեր կարիքներ ունեցող համադասարանցիների հետ: Այլ կերպ ասած՝ աշակերտները պետք է պատրաստ լինեն ապրել բազմազան և փոխադարձ կախվածություն ունեցող հասարակությունում,
- հասկանում են, որ խտրականությունը և ռասիզմն ունեն տարբեր դրսևորումներ: Դրանք կարող են լինել տարբեր բառեր կամ գործողություններ, որոնք ուղղված են անհատների կամ խմբերի դեմ, այդ թվում՝ սոցիալական ծագման, ազգության, կրոնի, կանանց և տղամարդկանց տարբերությունների, սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ արտաքինի պատճառով ագրեսիա, ստորացում, ծաղր, սեփական արժանապատվության ոչնչացում: Նման իրավիճակներից են՝
  - բանավոր անարգանքը, սպառնալիքները, նսեմացնող անուններով կոչելը, վիրավորանքը, հակաֆեմինիստական, ռասիստական/խտրական կատակները, մշակութային սովորույթների (օրինակ՝ սննդի, երաժշտության, կրոնի, հանդերձանքի) ծաղրը,
  - ֆիզիկական հարձակումը՝ բռնության գործադրումով, հետապնդումը, սադրիչ վարքագիծը,
  - այլ աշակերտների կամ չափահասների հետ համագործակցությունից հրաժարումը՝ նրանց ենթադրվող տարբերությունների պատճառով. ,
- ցուցաբերեք գործնական իրազեկվածություն բազմակի և փոփոխվող ինքնությունների վերաբերյալ և ինչպես պետք է վարվել նման ինքնության տեր անձանց հետ: Բազմակի ինքնությունների զարգացումը առանցքային է բոլոր երիտասարդների համար, որպեսզի վերջիններս կարողանան համատեղել «մասնավոր» արժեքները հանրային համայնքային արժեքների հետ,
- իրազեկ եղեք անընդունելի վարքագիծ պարունակող իրավիճակների առնչությամբ ազգային և տեղական քաղաքականություններից և ընթացակարգերից և այն քայլերից, որոնք դպրոցում պետք է ձեռնարկվեն ռասիստական իրավիճակների առնչությամբ: Նրանք լավ են հասկանում դասարանի հիմնական կանոնները , օրինակ՝ «չի կարելի ստորացնել»

➔ ակտիվ կերպով խթանում են հավասար հնարավորությունները և ըմբռնում են, թե ինչպես կարող են անհավասարությունները դրսևորվել դպրոցում և դրանից դուրս: Նրանք իրազեկ են «իշխանության դինամիկայի» մասին և թե ինչ յուրահատուկ դեր են խաղում ռասիզմը և խտրականության բոլոր ձևերը մեր հասարակություններում՝ ապահովելով տնտեսական և քաղաքական գերակայության մոդելների սերմանում: Նրանք զարգացնում են ֆասիլիտացիայի հմտություններ, աշխատելով աշակերտների կողքին: Նրանց օժտում են տարբեր դրսևորումների դեմ անհավասարություններին ընդդիմանալու հնարավորությամբ և ներգրավվում են հարաբերությունների կարգավորման ծրագրերում, որոնք օգնում են հարթեցնել տարբերությունները և ստեղծել համայնքի պատկանելիության ընդհանուր զգացողություն:

6.4.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 12. խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարություններ (1-ին մաս)	
Քայլ 1 (կենտրոնացում) *Ձեր կարծիքով աշակերտների նախապաշարումների, կարծրատիպային տեսակետների կամ ռասիստական տեսակետների խնդիրը (ենթադրվող կամ բացահայտ) կարևոր խնդիր չէ դպրոցի, ուսուցչի կամ համայնքի համար, կամ դուք պատրաստակամ չեք դրանք լուծելու հարցում: Այն թեմատիկ ոլորտները, որտեղ կարող է բարձրացվել ռասիզմի խնդիրը, ամենայն հավանականությամբ խուսափում է: Դուք վստահ չեք տարբեր մշակույթների և կրոնների մասին Ձեր գիտելիքների հարցում և ավելի հարմար եք գտնում ոչինչ չասել, քան անտեղյակությունից վիրավորել: Նման թեմաների առկայությունը ուսումնական ծրագրում սահմանափակ է: Միգուցե գոյություն ունեն ազգային կամ հանրակրթական քաղաքականություններ խտրականության դեմ մարտահրավերներ նետելու և ռասայական հավասարությունը խթանելու առնչությամբ, բայց այդ փաստաթղթերը փոշի են հավաքում դարակների վրա: Այդ հարցի շուրջ ուսուցիչների վերապատրաստումները քիչ են եղել, կամ բոլորովին չեն եղել:*	**Փորձեք անել հետևյալը.** • ներկայումս նախապաշարմունքներին, խտրականությանը և ռասիզմին վերաբերող Ձեր կողմից կատարված աշխատանքը ռեակտիվ է՝ պրոակտիվի փոխարեն: Փնտրեք դրական քայլեր, որոնք դուք կարող եք ձեռնարկել խթանելու աշակերտների համար այս հարցերի շուրջ ուսուցման հնարավորությունները, • հնարավորության դեպքում խրախուսեք աշակերտներին, որոնք փոխհարաբերությունների և համատեղ ուսուցման առումով իրենց և մյուսներին տարբեր են տեսնում, • օգտվեք վիճահարույց հարցերի դասավանդման վերաբերող ռազմավարությունների վերապատրաստման հնարավորություններից, • օգտվեք միջմշակութային դիրքորոշման իրազեկվածության բարձրացման մեթոդաբանությունների վերաբերյալ վերապատրաստման հնարավորություններից: Այստեղ միջմշակութային ասելով պետք է հասկանալ անհատականությունների հավասարության ընկալումը և մշակույթի դինամիկ բնույթի և քաղաքացիների ինքնությունների բազմազանության իրազեկվածությունը, • ապահովեք, որ ուսումնական ծրագրում հավասարապես ներառված լինեն թեմաներ աշակերտների միջանձնային վարքագծից, այդ թվում՝ անարգանքը և ահաբեկումը, և որ դա կապվի ԺՔԿ ուսուցման առավել ընդգրկուն խնդիրների հետ:
Քայլ 2 (զարգացում) *Դպրոցն ունի արդիականացված քաղաքականություն հավասարության վերաբերյալ, որում ներառված են համապատասխան ոլորտներից և գործառույթներից շատերը: Ռասիստական գրականությունը օրենքից դուրս է հայտարարված և վիրավորական կոչերը արգելված են ու դադարեցվում են: Մարդկանց խմբերի մասին բացասական դիտողությունները և ընդհանրացումները մշտապես վիճարկվում են: Դպրոցի աշխատակազմը արդարացի և կանոնավոր կերպով արձագանքում է ռասիստական մոտիվացիա ունեցող իրավիճակներին՝ որոշակի վերապատրաստում անցնելուց հետո: Դասավանդման նյութերը հիմնականում արտացոլում են տեղական, ազգային և գլոբալ բազմազանությունը, բայց կիրառվող ուսուցման մոտեցումները բավականին ապահով են և նպատակ ունեն խուսափել հակասություններից: Դուք մտահոգված եք, որ բաց քննարկումների և բանավեճի սովորական հիմնական կանոնները չեն կարող կիրառվել, երբ քննարկման են դրվում ռասային վերաբերվող հարցեր: Դուք մտահոգված եք, որ բաց քննարկումները կարող են խթանել և նույնիսկ լեգիտիմացնել աշակերտների ռասիստական տեսակետները՝ վնաս պատճառելով դասարանի մյուս անդամներին և հնարավոր է՝ դպրոցում տարածելով անընդունելի տեսակետներ:*	**Փորձեք անել հետևյալը.** • տեղեկություններ ստացեք և օգտվեք վերապատրաստման հնարավորություններից, • • մի կարծեք, թե նախապաշարումը, խտրականությունը և ռասիզմի խնդիր չէ, եթե դպրոցի կազմը համեմատաբար միատարր է և այդտեղ փոքրամասնությունների շատ խմբեր չկան, • ապահովեք, որ ԺՔԿ/ՄԻԿ Ձեր աշխատանքային ծրագրերը և դասերի պլանները հնարավորություն տան աշակերտներին զբաղվելու կարծրատիպերի հարցով, հասկանալու նախապաշարմունքների և խտրականության խնդիրը , ներառելու մշակութային բազմազան տեսակետներ, • մշակեք աշխատանքներ, որոնք կխթանեն էմպատիան, մշակույթի և ինքնությունների դինամիկ բնույթի մասին իրազեկվածությունը:

Կոմպետենցիա թիվ 12. Խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարություններ (2-րդ մաս)	
Քայլ 3 (հաստատում) *Դպրոցի ռասայական հավասարության քաղաքականությունը հեշտ ընկալելի է և համապատասխանում է տարբեր լսարանների պահանջներին և իրավիճակներին: Դպրոցը կատարում է առանցքային և կանոնավոր հաղորդում այն մասին, որ բազմազանությունը խրախուսելի է, և որ ռասիզմը օրենքից դուրս է հայտարարված: Չնայած այլոց նկատմամբ վերաբերմունքը փոփոխելու վերաբերյալ համապատասխան մեթոդաբանությունների մասին վերապատրաստում դպրոցի համակարգում չի անցկացվել, այնուամենայնիվ, առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստումների ժամանակ կանոնավոր կերպով բարձրացվել են որակին առնչվող հարցեր: Աշխատանքների և ռեսուրսների միջոցով շեշտադրվում են գլոբալ հարցեր, փորձառություններ և մտահոգություններ:*	**Փորձեք անել հետևյալը.** • կազմեք վարքագծի կանոնագիրք՝ խթանելու բարիդրացիական հարաբերությունները և փոխադարձ հարգանքը. դա ակնհայտորեն դրսևորեք ընդհանուր կիրառության տարածքներում, • մտածեք, թե Ձեր դասերի պլաններում, ռեսուրսներում և դասավանդման ընթացքում ինչպես են արտացոլվում բոլոր աշակերտների ուսուցման կարիքները, • խրախուսեք գործընկերներին քննարկել հավասարության/հավասար հնարավորությունների քաղաքականության և հարակից հարցեր, համատեղ աշխատանք՝ լուծումներ գտնելու համար. • խրախուսեք աշակերտներին հարցականի տակ առնել մեդիայի, ուսումնական նյութերի և հանրամատչելի մշակույթի կարծրատիպերը, • խթանեք դրական պատկերացումները ազդագրերում, ցուցահանդեսներում և ցուցադրումներում, • գտեք ռեսուրսներ և որոշակի դեպքի ուսումնասիրություններ, որտեղ փոքրամասնությունները նկարագրված են ոչ կարծրատիպային դերերում, • հրավիրեք հռետորների, ծնողների կամ համայնքի ներկայացուցիչների հավասարության թեմայի շուրջ կազմակերպված քննարկմանը մասնակցելու համար, • կազմակերպեք շահախումբ միջմշակութային իրազեկվածության վերաբերյալ դպրոցական համակարգի շրջանակում ծրագիր անցկացնելու նպատակով
Քայլ 4 (կատարելագործում) *Դպրոցը մշակել է ներառական ծրագիր: Հավասարության մասին քաղաքականությունն ակտիվ կերպով ազդեցություն է գործում դպրոցի առօրյա կյանքի և աշխատանքի, այդ թվում՝ ուսումնական ծրագրի ոգու և զբաղվածության քաղաքականությունների վրա և ամրակցված է գործողությունների ծրագրին: Դպրոցի աշխատակազմը հասկանում է խտրականության բոլոր ձևերը վիճարկելու և ներառական հարաբերություններ խթանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև անցել է դասընթացներ, աջակցություն է ստացել և արտոնվել է այդ անելու:* *Ազդագրերի, ցուցահանդեսների և ցուցադրումների միջոցով շեշտադրվում են բազմազանությունը, ներառումը և գլոբալ քաղաքացիությունը և դրանք ցուցադրված են ընդհանուր կիրառության վայրերում: Անհավասարությունների և սոցիալական անարդարության խնդիրները վիճարկվում և բանավիճվում են:*	**Փորձեք անել հետևյալը.** • առավել համակարգված տեղեկացեք և մշտադիտարկեք ռասիզմի, սեքսիզմի և խտրական վերաբերմունքի դեպքերը և կիրառեք ստացված արդյունքները իրազեկելու քաղաքականությունը, ուսումնական ծրագիրը, վարքագծի կառավարումը և տեղական/շրջանային ռազմավարական արձագանքները, • համայնքում գործընկերներ գտեք, որոնք կարող են օգնել Ձեզ իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է ամրապնդել դպրոցի ներառական միջավայրը, • խրախուսեք վերանայել և մշտադիտարկել բոլոր աշակերտների գնահատման արդյունքները. միգուցե առաջ գան համապատասխանություններ, որոնց համաձայն կարելի է ձեռնարկել գործողություններ և միջամտություններ, • նշեք Ձեր հաջողությունները և դպրոցի դրական, ներառական ոգին:

7. Դ խումբ. մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում

7.1. Համառոտ ակնարկ և տեսական հիմունքներ

Կոմպետենցիաների այս խումբը խրախուսում է ուսուցիչներին մտածել իրագործված ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների բնույթի և արդյունավետության շուրջ և գնահատել դրանք՝ թե դպրոցական համակարգի մշակույթի և ոգու, և թե առանձին դասարաններում դասավանդման պրակտիկայի առումով: Այն վերաբերում է «ինչպե՞ս կարող ենք ավելի լավ անել» հարցին:

- Ինչքանո՞վ ենք մենք արդյունավետ նպաստել աշակերտներին որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու հարցում:
- Որչափո՞վ ենք մենք ստեղծել անուղղակի ուսուցման հնարավորություններ՝ մոդելավորելով ԺՔԿ/ՄԻԿ այն դասավանդելու փոխարեն:
- Հաշվի առնելով աշակերտների ուսուցման գնահատումը[44]՝ որչափո՞վ է դասավանդման մեր մոտեցումն արդյունավետ եղել:
- Դեռևս ի՞նչ պետք է սովորենք, որպեսզի կարողանանք բարելավել մեր արդյունքները:

Կոմպետենցի թիվ 13. Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ներգրավման արժեվորում

Իրենց համար նշանակություն ունեցող իրավիճակների մասին ասելիք ունենալու փաստի արժեվորում և որոշումներ կայացնելու հարցում աշակերտներին մասնակցելու հնարավորության տրամադրում:

Կոմպետենցիա թիվ 14. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման մոդելավորում

Երիտասարդներից ակնկալվող ԺՔԿ/ՄԻԿ դրական արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման ցուցաբերում, օրինակ, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման, աշակերտների հետ արդար, թափանցիկ և հարգալից վերաբերմունքի, դասավանդման ժողովրդավարական ոճ ցուցաբերելու և աշակերտներին կրթական աշխատանքների պլանավորման մեջ ներգրավելու և դրանց նկատմամբ սեփականության զգացողության ստեղծման մոդելավորում:

Կոմպետենցիա թիվ 15. Դասավանդման մեթոդների և աշակերտների ուսուցման վերանայում, մշտադիտարկում և արժեվորում

Դասավանդման մեթոդները և աշակերտների ուսուցումը վերանայելու, մշտադիտարկելու, գնահատելու և այդ գնահատումը հետագա ծրագրերի կազմմանն ու ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելու մասնագիտական զարգացմանը ուղղելու հնարավորություն և կամք:

Աղյուսակ 7. Դ խումբ. Մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում

Սովորողների խոսքը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում կարևոր է: Աշակերտները իրավունք ունեն ներգրավվել իրենց համար նշանակություն ունեցող որոշումների կայացմանը. դա բարելավում է հարաբերությունները, խթանում է երկխոսությունը դպրոցում. և որ ամենակարևորն է՝ դա ԺՔԿ/ՄԻԿ սովորելու հնարավորություն է:

ԺՔԿ/ՄԻԿ -ի ուսուցիչներից շատերը գտնում են, որ դասարանում աշակերտների ներգավվածությունը որոշումների կայացման գործընթացում բարելավելն առաջին քայլն է հասարակության մեջ ակտիվ և պատասխանատու մասնակցությանը: Այնուամենայնիվ, հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ, իրականում, աշակերտները քիչ են որոշումներ ընդունում իրենց ուսուցման վերաբերյալ, և հազվադեպ են ներգրավվում ծրագրերում, որոնց շրջանակում իրենք և իրենց դասընկերները սահմանում են իրենց

44. ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների կիրառմամբ գնահատում, ինչպես օրինակ՝ աշակերտներին ձևավորող գնահատման պրոցեսում ներգրավում, գնահատում հանուն ուսուցման, գործընթաց ընդդեմ բովանդակության, և գնահատում բոլոր մակարդակներում:

համար կարևոր նպատակներ: Այստեղից չի հետևում, որ ուսուցիչները պետք է կարծեն, թե հեշտ գործ է աշակերտների կրթության հարցում որոշումների ընդունման անկախությունն ապահովելը: Դասարանի կահավորումը, ոչ կրթական աշխատանքների համար սահմանափակ ժամանակը խանգարող հանգամանքներ են, որոնց դեպքում դժվար է ուսուցիչների համար համագործակցային պայմաններում աշխատել այլ ուսուցիչների և աշխատակազմի հետ:[45]

Փոփոխություններ սկսելու համար՝ ուսուցիչները պետք է ուշադրությունը կենտրոնացնեն այն ոլորտների վրա, որտեղ աշակերտներն ունեն ուղղակի մասնակցություն.

- դպրոցի կանոններ և քաղաքականություններ, պատիժների և խրախուսանքի քաղաքականություններ (օրինակ՝ սեքսիզմի, ռասիզմի, ահաբեկման դեմ հավասար հնարավորությունների քաղաքականություններ, հագուստի կանոններ ու համազգեստներ և այլն),
- ուսումնական ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը, ուսուցման և դասավանդման մեթոդիկան,
- սոցիալական հարցեր. սոցիալական վայրեր/արտադասարանական աշխատանքներ, նոր աշակերտների մուտք, ծնողական ժողովների կազմակերպում և բարեկեցություն:

Գոյություն ունեն գիտելիքի և ընկալման երեք փոխկապակցված տարրեր, որոնք անհրաժեշտ են ուսուցիչներին այս կոմպետենցիան բավարարելու համար.

- դասավանդման ռազմավարությունների և աշխատանքների մասին գիտելիքներ, որոնք խթանում են որոշումների կայացումը և մտածելու պրոցեսները,
- աշակերտների առկա ուսուցման հնարավորությունների մասին քննադատական[46] մտածողություն և վերլուծություն,
- քաղաքացիության կրթության նպատակների գիտելիք և ըմբռնում, հատկապես՝ թե ինչ բնույթ պետք է ունենա «աշակերտի խոսքը» իրենց վերաբերող հարցերի շուրջ:

Ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների արժեքների, սկզբունքների, վերաբերմունքի մոդելավորումը և դրսևորումը դասավանդման ամենաարդյունավետ «անուղղակի» եղանակն է: Մեսիջը և դրա հաղորդման միջոցը պետք է լինեն հետևողական, միջոցները և արդյունքները պետք է համապատասխանեն իրար: Համակարգված այս առանձնահատուկ մոտեցման համար առանցքային են որոշ հիմնական սկզբունքներ.[47]

- ակտիվ քաղաքացիություն հնարավոր է լավագույնս սովորել ինչ-որ բան անելով, ոչ թե քարոզելով. մարդկանց պետք է հնարավորություն տրվի քննել ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների հետ կապված հարցերն ինքնուրույն: Պետք չէ ասել, թե ինչպես պետք է նրանք մտածեն կամ դրսևորեն իրենց:
- ակտիվ քաղաքացիության կրթությունը պարզապես փաստագրական գիտելիքների ընկալում չէ, այլ գործնական ըմբռնում, հմտություններ և ընդունակություններ, արժեքներ ու դիրքորոշում է:
- Կրթական միջավայրը մեսիջ է. աշակերտները կարող են ժողովրդավարական կրթության մասին սովորել այն օրինակով, որով ծառայում են նրանց ուսուցիչները և որով դպրոցում դրսևորվում է կյանքը :

Վերապատրաստման ժամանակ մոդելավորումը ուսուցիչներին դնում է սովորողների կարգավիճակում: Դա հնարավորություն է տալիս նրանց տեսնել և գործնականում կիրառել այն, ինչ ԺՔԿ/ՄԻԿ-ը ընդգրկում է սովորողի տեսանկյունից: ԺՔԿ/ՄԻԿ կրթությունը և ուսուցման աշխատանքները վերապատրաստողը պետք է մոդելավորի, օրինակ՝ քննարկումների կառավարում, ծրագրային աշխատանքների կազմում, դասերի պլանավորում և նախագծերի մշակում: Վերապատրաստողները պետք է մոդելավորեն նաև ժողովրդավարական արժեքները և դիրքորոշումը, որն իրենք ակնկալում են ուսուցիչներից աշակերտների հետ հարաբերություններում, ինչպես օրինակ՝ հարգանք , փաստարկների և բանավեճի միջոցով կոնֆլիկտները լուծելու պատրաստակամություն:

45. Գուդլադ, Ջ., *Վայր, որը դպրոց են անվանում,* ՄքԳրոու-Հիլ, Նյու Յորք, 1984 թ.: Հասանելի է Google books կայքէջում՝ http://books.google.com:

46. Ուսուցիչների քննադատական մտածողությունը օգտակար է այնպիսի իրավիճակներում, երբ ուսուցիչներից պահանջվում է ընդունել որոշումներ ողջամիտ և գնահատող եղանակով. օրինակ՝ ինչ անել, ինչպես և որտեղ ներգրավել աշակերտներին որոշումներին կայացման գործընթացներում: Ուսուցիչների քննադատական վերլուծությունը որոշում կայացնելու ձև է, որը մասնավորապես կենտրոնացած է աշակերտների արձագանքի կամ նրանցից ստացված ակնարկների վրա, որի դեպքում հաշվի են առնվում փաստերը և տեղեկությունների տարբեր աղբյուրների վստահելիություն, ինչպես օրինակ՝ աշակերտի մտածելակերպը, վարքագիծը, մտահագությունները և էմոցիաները: Ուսուցիչները այսպես հասկանում են ուսուցման աշխատանքների համատեքստը և ունակ են ներգրավվել ուսումնական զարգացման, և աշակերտների հետաքրքրությունների և մտահոգությունների միջ-արժեվորման գործընթացում:

47. Հաղլեստոն, Թ., 2005 թ., նշված աշխատանքում

Արդյունավետ լինելու համար, այնուամենայնիվ, մոդելավորմանը պետք է հաջորդի անդրադարձման ժամանակահատված: Ուսուցիչները պետք է ժամանակ հատկացնեն անդրադարձ անելու համար, թե ինչպես են իրենք կիրառելու ապագա իրավիճակներում այն ինչ սովորել են վերապատրաստման ժամանակ: Կարևոր է, որ վերապատրաստողները նախապատրաստեն աշխատանքները՝ խրախուսելու մասնակիցներին անդրադարձ կատարելու դասավանդման, ուսուցման, գաղափարների և արժեքների շուրջ, և այդ ամենը կիսեն իրենց գործընկերների հետ: Գոյություն ունեն անդրադարձի տարբեր կատեգորիաներ՝ կախված անդրադարձի նպատակից կամ առարկայից:[48] Քննադատական անդրադարձ կատարելու ամենամեծ առանձնահատկությունը ենթադրություններ փնտրելու շեշտադրումն է:[49] Ուստի, օգտակար է թե սկսնակ և թե փորձառու ուսուցիչների համար բարձրաձայնել անուղղակի ենթադրությունները:

Գոյություն ունեն ենթադրությունները բացահայտելու մի քանի եղանակներ. Օրինակ՝

- մենք կարող ենք ավելի իրազեկ լինել որպես սովորողներ կամ ուսուցիչներ՝ անձնական ուսուցողական օրագրեր պահելու միջոցով: Մենք օգտագործում ենք ինքնակենսագրական անդրադարձը, որովհետև այն լավ ելակետ է մեզ համար: Այս ներբմբռնումը առանցքային և երկարատև ազեցություն ունի,
- մեզ՝ մեր աշակերտների աչքերով տեսնելը կարող է զարմանալի և երբեմն ապակողմնորոշող լինել, քանի որ մենք կարող ենք հայտնաբերել, որ մեր աշակերտները մեր գործողությունները չեն հասկանում այնպես, ինչպես մենք ենք նկատի ունեցել: Հաճախ մեզ չափազանց զարմացնում է իմաստների այն բազմազանությունը, որը աշակերտները վերագրում են մեր գործողություններին և բառերին,
- մեզ մեր գործընկերների աչքերով նայելը մեկ այլ ձև է՝ քննադատական անդրադարձ կատարելու: Օրինակ՝ եթե մենք հարցնենք մեր գործընկերներին, թե իրենց կարծիքով աշակերտների սովորելու դիմադրության տիպային պատճառները ինչումն են կայանում և ինչպես են վարվել նրանք նման պատճառների հետ, ապա մենք կարող ենք լսել պատասխաններ, որոնք խնդրին կստիպեն նայել նոր տեսանկյունից,
- տեսական գրականությանը մեր տեսակետների հակադրությունը և ենթադրությունները բացահայտելու մեկ այլ տարբերակ է:

Մոդելավորումը պետք է լրջորեն պլանավորվի և իրագործվի: Քանի որ մոդելավորումը դասավանդման «անուղղակի» մեթոդ է, ուստի այն պետք է պաշտպանել հրահանգավորումից: Այդ պատճառով կարևոր է խթանել աշակերտների արտահայտվելու ազատությունը, հավատամքների և ակնկալիքների անդրադարձը, քննադատական մտածողությունը, որոշման կայացումը և քաղաքացիության հարցերի շուրջ ազատ ակտիվ մասնակցությունը : Այն ենթադրում է սոցիալական ճանաչողական տեսության և աշակերտների՝ քաղաքացիության կոմպետենցիաների ուսուցումը մոդելներով դասավանդելու գործելակերպերի կրթական ազդեցության մասին գիտելիք և ըմբռնում:

Դասավանդման մեթոդիկաների և աշակերտների ուսուցման վերանայումը, մշտադիտարկումը և արժեվորումը ուսուցիչներին հնարավորություն է տալիս շարունակաբար բարելավել դասավանդման/կրթական գործընթացները: Ուսուցիչները պետք է ուղիներ մշակեն կիրառելու աշակերտներից և այլ աղբյուրներից ստացվող (օրինակ՝ գործընկերներից, խորհրդատուներից և դասախոսներից) հետադարձ կապի հնարավոր բոլոր ձևերը: Կարելի է մտածել չորս տիպային և պարզ հարցերի շուրջ.[50]

- Ի՞նչ եմ փորձում անել:
- Ինչպե՞ս եմ անում:
- Ինչի՞ց գիտեմ, որ դա լավ եմ անում:
- Ի՞նչ կարող եմ անել կատարելագործվելու համար: (Տե›ս հավելվածի ինքնաարժեվորման գործիքները և ԺՔԿ/ՄԻԿ գնահատման ցանկը):

48. Համեմատեք՝ Զայխներ, Ք., «Անդրադարձ կատարող մասնագետը», Ռիզն, Փ. և Բրադբրի, Հ. (խմբ.) *Գործողությունների մշակման հետազոտության ձեռնարկ. մասնակցային հարցում և պրակտիկա,* 2001 թ. Քննադատական անդրադարձ նշանում է, որ ուսուցիչները և վերապատրաստողները խթան ունեն անդրադարձ կատարելու իրենց պրակտիկայի էթիկական, սոցիալական և քաղաքական կողմերին: Մետաճանաչողական աշխատանքը հետաքրքրաշարժ է սովորողների համար՝ անդրադարձ կատարելու իրենց համոզմունքներին և իրենց արժեքներին:

49. Համեմատեք՝ Բրուքֆիլդ, Ս.Դ., *Քննադատական անդրադարձ կատարող ուսուցիչ դառնալը,* Ջոսի-Բաս հրատարակչություն, Սան Ֆրանցիսկո, 1995 թ.: Ենթադրությունները որպես ճշմարտություն ընդունված համոզմունքներ են աշխարհի և այդ աշխարհում մեր ունեցած դերի մասին: Դրանք ակնհայտ են թվում և սովորաբար անուղղակի են: Մասնագետները հաճախ ձեռնարկում են գործողություններ այնպիսի ենթադրությունների հիմքով, որոնք ուսումնասիրված չեն:

50. ԵՀԱ (Եվրոպական համալսարանների ասոցիացիա) ինքնաարժեվորման ուղեցույցեր, տե՛ս՝ www.eua.be:

7.2. Կոմպետենցիա թիվ 13

Կոմպետենցի թիվ 13. Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ներգրավման արժեվորում

Իրենց համար կարևոր ասելիք ունենալու փաստի արժեվորում և որոշումներ կայացնելու հարցում աշակերտներին մասնակցելու հնարավորության տրամադրում:

7.2.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, ովքեր բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան

- աշակերտներին իրենց ուսուցման համար և դպրոցի առօրյա կյանքում կենտրոնական հարցերի շուրջ ազդեցություն գործելու հնարավորություն են տալիս և չափում են այն, օրինակ՝ դասավանդման մեթոդիկաներում, դպրոցի քաղաքականություններում կամ ուսուցմնական ծրագրի պլանավորման մեջ: Նրանք համոզված են, որ իրենց աշակերտները ունակ են պատասխանատվություն վերցնել ուսուցման գործընթացի կազմակերպման աշխատանքներում:
- խրախուսում են աշակերտներին ներգրավվելու դասավանդման պրոցեսում: Ուսուցիչները և աշակերտները համատեղ են պլանավորում քաղաքացիության աշխատանքները: Դասավանդման ընթացակարգը պարբերաբար արժեվորվում է աշակերտների կողմից: Աշակերտները նաև արժեվորում են իրենց սեփական աշխատանքը,
- օգնում են աշակերտներին վերլուծել իրենց ուսուցումը՝ կազմակերպելով արժեվորման գործընթացներն այնպես, որ ուսուցման և գնահատման մեթոդիկաները թափանցիկ լինեն աշակերտների գնահատման ժամանակ: Իր հերթին այս գնահատումը կօգնի ուսուցիչներին կատարելագործել իրենց պրակտիկան,
- հիմնականում մտահոգված են աշակերտներին ակտիվ քաղաքացիություն կիրառելու հմտություններ ընձեռնելու հարցով՝ տալով նրանց քննելու հնարավորություններ, և նպատակ ունեն կիրառել հստակ շրջանակ, որի սահմաններում երիտասարդները կարող են ազատ մտածել,
- գիտեն, թե ինչպես օգնել աշակերտներին սահմանելու իրավիճակները և խնդիրները, հենվելով քաղաքացիության ոլորտում աշակերտների այն փորձառության վրա, որի հիմքում ընկած է կասկածը, անորոշությունը կամ դժվարությունները՝ այն դեպքերում, երբ իրենք որոշում պետք է ընդունեն, թե ինչ անել կամ ինչին հավատալ: Նրանք հանդիպում են աշակերտների այլ անձանց տեսակետների հետ ունեցած ճշտի և սխալի անձնական զգացողության և արժեքների անձնական համակարգի հակասությանը: Այս գործընթացի միջոցով նրանք կարող են գնահատել, թե որքանով են հնարավորություն տվել աշակերտներին մտածել քննադատաբար,
- աշակերտներին ներառում են դպրոցի համայնքին վերաբերող իրական կյանքի խնդիրներում և օգնում են նրանց սահմանել և ընտրել խնդիրների լուծման ռազմավարություններ, խնդիրները լուծելիս համագործակցել այլոց հետ և բաց լինել տարբեր լուծումների ժամանակ, որոնք կարող է հակասեն նախընտրելի տեսակետներին: Ուսուցիչները կարող են նաև արժեվորել իրենց մասնակցությունը՝ աշակերտների հետ իրականացնելով խնդրահարույց իրավիճակի անդրադարձ,
- օգնում են աշակերտներին խորհել այն իրավիճակների շուրջ, որոնք ներառում են որոշ անորոշություն և բարդություն: Օրինակ՝ դպրոցական կոնֆլիկտի կամ դժվարին կացության ժամանակ ուսուցիչները կարող են օգնել աշակերտներին քննադատական և էթիկական որոշումներ ընդունել՝ ընդհանուրի գալով հետևյալ հարցերի օգնությամբ. Ի՞նչ կանեիք, եթե լինեիք.. Ի՞նչ եք մտածում.. Ի՞նչ տեսակետներ ունեն մյուսները: Ի՞նչ զգացողություններ և արժեքներ ունեք: Նրանք կատարում են աշակերտների պատասխանների գրանցումներ (տեքստերի, տեսանյութերի միջոցով)՝ դիտարկելու ԺՔԿ/ՄԻԿ հմտությունների փոփոխությունները:

7.2.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցի թիվ 13. Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ներգրավման արժեքորում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք վախենում, և միգուցե հակադրվում եք աշակերտներին ներգրավել որոշումների կայացման գործընթացում:*	**Փորձեք անել հետևյալը.** • ավելին իմացեք տվյալ հարցի մասին: Տեղեկություններ քաղեք որոշումների ընդունման տեսության և հետազոտության մասին, կարդացեք օրինակներ, թե ինչ քայլեր են անհրաժեշտ խթանելու համար որոշումների ընդունման առավել ներառական գործընթաց, օրինակ՝ ինչպե՞ս են աշակերտական խորհուրդներն աշխատում այլ վայրերում, • անդրադարձ կատարեք Ձեր նախկին փորձին, որը վերաբերում է որոշումների կայացման բարդ այլընտրանքային իրավիճակներին: Մտածեք և կենտրոնացեք այնպիսի արժեքների շուրջ, որոնք նշանակություն ունեն Ձեզ համար:
Քայլ 2 (զարգացում) *Դուք դեմ չեք աշակերտների մասնակցությանը, բայց վախենում եք կորցնել իրավիճակի հսկողությունը: Ձեր կարծիքով Ձեզ ավելի շատ տեղեկություններ են պետք ուսուցիչների կողմից որոշումների ընդունման գործընթացները խթանելու կոնկրետ օրինակների մասին:*	**Փորձեք անել հետևյալը.** • գտեք դպրոց կամ դասարան, որտեղ դա անում են և դիտեք ու լսեք կոնկրետ օրինակներ. գտեք և դիտեք դասարանական դասավանդման աշխատանքների մասին տեսահոլովակներ, • դիտեք և գրանցեք, թե ինչ հարցեր են տալիս ուսուցիչները՝ աշակերտների կողմից որոշումների կայացման գործընթացները խթանելու համար: Սոկրատյան հարցերը լավ օրինակ են աշակերտների քննադատական մտածողությունը և որոշման կայացումը խթանելու համար: • կազմակերպեք շահերի պաշտպանություն համագործակցային ուսուցման և խմբակային աշխատանքի թեմաներով վերապատրաստման հնարավորությունների տրամադրման համար:.
Քայլ 3 (հաստատում) *Դուք հասկանում եք աշակերտներին որոշումների կայացման գործընթացում ներգրավելու կարևորությունը: Դուք սկսել եք կիրառել աշակերտների կողմից տարվող աշխատանքներ որոշումների կայացման գործընթացը խթանելու համար: Դուք տարբեր մեթոդներ եք կիրառում երեխաների հետ խորհրդակցելու համար: Բայց սա ժամանակ է պահանջում, և երբեմն դուք վերադառնում եք ավանդական "վերևից ներքև" մեթոդներին:*	**Փորձեք անել հետևյալը.** • խնդրեք աշակերտներին կամ գործընկերներին տեսաձայնագրել դասավանդման Ձեր գործընթացը, • խնդրեք նրանց դիտել և դիտողություններ կատարել: Դուք կարող եք դիտողությունների համար աղյուսակ պատրաստել, եթե ցանկանում եք, • դիտեք տեսաձայնագրությունը և կատարեք Ձեր սեփական դիտողությունները, • համեմատեք Ձեր աշակերտների և գործընկերների դիտողությունների արդյունքները. անդրադարձ կատարեք Ձեր և աշակերտների դիտողությունների միջև եղած տարբերություններին և նմանություններին, • մշակեք ռազմավարություններ բարելավելու Ձեր մեթոդները՝ ավելի քիչ ժամանակ հատկացնելը, առաջադրանքները ավելի հստակ և կարճ դարձնելը, հետագա հղման համար որոշումները գրանցելը, ընթացակարգեր սահմանելը և այլն, • ընդլայնեք Ձեր և դպրոցի՝ աշակերտների հետ խորհրդակցելու ռազմավարությունների հմտությունների շարքը: Օրինակ՝ դասարանային և դպրոցական խորհուրդներ, խմբային քննարկումներ, աշակերտների աշխանքային խմբեր, պլանավորման խմբեր, հարցաշարեր/հարցումներ և առաջարկությունների տուփեր:
Քայլ 4 (կատարելագործում) *Դուք գիտակցում եք բաց և պատասխանատու որոշումների կայացման գործընթացում աշակերտներին արտոնելու ուսուցչի պատասխանատվություն և Ձեր աշակերտներին ձայնի հնարավորություն եք տալիս: Դուք կարծում եք, որ գոյություն ունի կատարված ընտրությունների էթիկական արձագանքման և ճանաչողական արձագանքման հնարարվորությունների ընդլայնման անհրաժեշտություն:*	**Փորձեք անել հետևյալը.** • որպես ուսուցիչ կանոնավոր կերպով հետևեք Ձեր պարտականությունների և գործողությունների միջև համապատասխանությանը՝ արտոնելու աշակերտներին ազատություն և ձայնի իրավունք, • կարո՞ղ եք ընդլայնել աշակերտների ներգրավման շրջանակը: • գործողությունների ծրագիր մշակեք ապահովելու, որ աշակերտների հետ խորհրդակցությունը մաս կազմի դպրոցի բարելավման և զարգացման ծրագրում, • կանոնավոր ժամանակ հատկացրեք դասավանդման ժամանակ արձագանքման համար և ռազմավարություններ մշակեք ինքնուրույն ինքնաարտացոլման զարգացման համար:

7.3. Կոմպետենցիա թիվ 14

Կոմպետենցիա թիվ 14. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման մոդելավորում

Երիտասարդներից ակնկալվող ԺՔԿ/ՄԻԿ դրական արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման ցուցաբերում, օրինակ, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման, աշակերտների հետ արդար, թափանցիկ և հարգալից վերաբերմունքի, դասավանդման ժողովրդավարական ոճ ցուցաբերելու և աշակերտներին կրթական աշխատանքների պլանավորման մեջ ներգրավելու և դրանց նկատմամբ սեփականության զգացողության ստեղծման մոդելավորում:

7.3.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, ովքեր բավարարում են ԺՔԿ-ի այս կոմպետենցիան.

- խորհում են, թե ինչու են դասավանդում, և ինչու են դասավանդում որոշակի եղանակով: Նրանք փորձում են իրենց պրակտիկան հիմնել հիմնական ժողովրդավարական արժեքների վրա, ինչպես օրինակ՝ արդարությունը, ազնվությունը և կարեկցանքը: Այս արժեքներից նրանք ձևավորում են ուղեցույցներ աշակերտների հետ փոխհարաբերությունների և դասերի կազմակերպման շուրջ: Նրանք փորձ են անում պայմաններ ստեղծել, որոնց դեպքում բոլորը կունենան խոսելու և լսվելու իրավունք (այդ թվում՝ ուսուցիչը), և որոնց դեպքում կրթական գործընթացները բաց են իրական բանակցությունների համար:
- իրազեկ են, թե ինչ բառապաշար օգտագործեն դասարանում, բաց և թափանցիկ են աշակերտների հետ ուսուցման պրոցեսների մասին խոսելիս և պատրաստ են աշակերտների համար իրենց մտավոր գործընթացի մոդելներ ստեղծել: Այս գործընթացներում կարող են ներառվել քննադատական անդրադարձը, գնահատումը և մյուսների հետ փորձի ու գիտելիքի փոխանակումը,
- խրախուսում են աշակերտներին անդրադարձ կատարել իրենց սեփական փորձառությանը ուսուցման պրոցեսներին. սրա մեջ մտնում է իրենց հետաքրքրող թեմաների ընտրությունը,
- մոդելավորեք ժողովրդավարական հաղորդակցությունը: Ուսուցիչները հնարավորություններ են տալիս աշակերտներին ազատ արտահայտել իրենց տեսակետները քաղաքական, սոցիալական և վիճահարույց հարցերի շուրջ: Նրանք դրդում են աշակերտներին խոսել նման հարցերի շուրջ դասարանում: Նրանք բաց են աշակերտների այն կարծիքների համար, որոնք հակասում են իրենց տեսակետին: Նրանք խրախուսում են աշակերտներին կարծիքներ արտահայտել, տարբեր տեսակետներ կամ հեռանկարներ են ներկայացնում որևէ հարցի շուրջ: Նրանք խրախուսում են աշակերտներին քննարկել քաղաքական կամ սոցիալական այն հարցերը, որոնց շուրջ մարդիկ տարբեր տեսակետներ ունեն: Ուսուցիչները մոդելավորում են, թե ինչպես պետք է լուծվեն անհամաձայնությունները հարգալից ձևով և կառուցողական քննադատության պայմաններում: Նրանք կանոններ են սահմանում ժողովրդավարական բանավեճի համար, որտեղ քննվում և վիճարկվում են ենթադրություններ:
- նրանք իրազեկ և զգոն են իշխանության գոյության, դրա չարաշահման և հենց իրենց վրա ունեցած այդ ազդեցությունների մասին: Նրանք իրազեկ են և գիտեն, որ իրենց գործողությունները կարող են լռեցնել կամ ակտիվացնել աշակերտների ձայները: Նրանք լրջորեն և ուշադիր են լսում այն, ինչ աշակերտները ասում են: Նրանք մտածված անդրադարձ ենթադրող պահեր են ստեղծում, երբ աշխատանքների կենտրոնում աշակերտների մտահոգություններն են և ոչ թե ուսուցչի կողմից սահմանած հարցերը: Նրանք մշտական ջանքեր են գործադրում իմանալու, թե ինչպես են աշակերտները զգում իրենց ընդհանուր մտահոգություն ներկայացնող հարցերի շուրջ և հրապարակում են այդ տեղեկությունները: Նրանք խրախուսում են աշակերտներին անդրադարձ կատարել իրենց սեփական գործողություններին և վարքագծին և փորձում են հարմարեցնել իրենց գործողությունները՝ ի պատասխան աշակերտների մտահոգությունների: Նրանք վստահում են աշակերտներին և ներառում են համահավասարների ուսուցումը իրենց դասավանդման շրջանակում:

➔ գիտեն, թե ինչպես ընկալել աշակերտների ուսուցման տարբեր ոճերը և մտածելակերպերը: Նրանք ձևավորում են դասասենյակներ, որտեղ ողջունելի է միտքը և ճկուն ռազմավարություններ են կիրառում՝ աշակերտներին արտոնելու ձևավորել սեփական մտածելակերպ, ինչպես օրինակ՝ հարցադրումները, փորձարկումները, իմաստի որոնումը, ստեղծագործ մոտեցումը, ճանաչողական անդրադարձը և նախնական գաղափարների վիճարկումը:

7.3.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 14. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման մոդելավորում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք ավելի վստահ եք զգում, «վերահսկում եք իրավիճակը»: Դուք իրազեկ չեք, թե ինչ իշխանություն և ազդեցություն ունեք մյուսների վրա, երբ խոսում կամ ներկայացնում եք որևէ թեմա:*	**Փորձեք անել հետևյալը.** • հետազոտեք և կարդացեք ավելին այս մեթոդի մասին, • խորհեք հաղորդակցության Ձեր հմտությունների նախկին փորձառության մասին, որոնք, Ձեր կարծիքով, ազդել են մյուսների ուսուցման կամ վարքագծի վրա: Մտածեք, թե ինչպես և ինչու է Ձեզ տրված մյուսների վրա ազդելու իշխանություն: Կան արդյո՞ք մարդիկ, որոնց վրա Ձեր հաղորդակցության հմտությունները չեն ազդել: Ինչո՞ւ ոչ: • կազմեք դասի կամ աշխատանքի պլան՝ կիրառելով մոդելավորման մեթոդը:
Քայլ 2 (զարգացում) *Ձեր կարծիքով Ձեզ ավելի շատ տեղեկություններ են պետք ուսուցիչների կողմից մոդելավորման պրակտիկայի կոնկրետ օրինակների մասին, և դուք կարիք ունեք պարզաբանել, թե ինչ է դասավանդվում մոդելավորման միջոցով: Դուք մտահոգ եք և մեծ ցանկություն ունեք Ձեր սեփական իշխանության և մյուսների ուսուցման վրա ազդեցություն թողնելու մասին ավելին իմանալ:*	**Փորձեք անել հետևյալը.** • դիտարկեք մյուսների մոդելավորման գործելակերպերը, • տեսաձայնագրություններ գտեք քաղաքացիության թեմաներով դասարանային բավաճերի վերաբերյալ, • խորհեք և համեմատեք Ձեր դիտարկած իրավիճակը այն եղանակների սեփական արժևորման հետ, որով դուք հաղորդակցվում եք և մյուսների վրա ազդեցության հետ:
Քայլ 3 (հաստատում) *Դուք սկսել են կիրառել ԺՔԿ/ՄԻԿ թեմաներ: Օրինակ, ժողովրդավարության թեման դպրոցում և «աշակերտների ձայնի»-ին տրվող կշիռը: Դուք մտահոգ եք, որովհետև մտածելու շատ եղանակներ և հարցեր, ինչպես նաև ներգրավելու շատ գործիքներ կան: Դուք վախենում եք, որ հենց նոր բացել եք Պանդորայի տուփը և ի վիճակի չեք լինի հետևանքները կառավարել:*	**Փորձեք անել հետևյալը.** • Ձեր գործընկերների հետ մոդել ձևավորեք առաջին թեմայի համար և այդ դասի արժևորումը օգտագործեք՝ բարելավելու և առավել լավ պատրաստելու Ձեր մոդելավորումը դասասենյակում, • խնդրեք աշակերտներին տեսաձայնագրել դասավանդման Ձեր աշխատանքները, • դիտեք տեսաձայնագրությունը և կատարեք Ձեր սեփական դիտողությունները, խնդրեք գործընկերներին և աշակերտներին նույնն անել, • համեմատեք դիտողությունները և անդրադարձ կատարեք Ձեր դիտողությունների և Ձեր աշակերտների դիտողությունների միջև տարբերություններին և նմանություններին:
Քայլ 4 (կատարելագործում) *Դուք գիտակցում եք որպես ուսուցիչ Ձեր աշակերտներին -ժողովրդավարական միջավայրում քաղաքացիության կոմպետենցիաներով արտոնելու Ձեր պատասխանատվությունը՝ հարգելով նրանց ազատ կամքը: Դուք համոզված եք, որ Ձեր վերաբերմունքը դասարանում տոգորված է ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքներով: Դուք գտնում եք, որ անհրաժեշտ է կատարել էթիկական անդրադարձ:*	**Փորձեք անել հետևյալը.** • կանոնավոր կերպով հետևեք որպես ուսուցիչ Ձեր պարտականությունների և Ձեր գործողությունների միջև համապատասխանությանը՝ արտոնելու աշակերտներին ազատություն և ձայնի իրավունք, • դասից հետո կազմակերպեք աշակերտների հետադարձ կապը այն մասին, թե ինչ փորձառություն նրանք ձեռք բերեցին: Օգտագործեք այս հետադարձ կապը մոդելավորման մեթոդի կիրառման ժամանակ զգոն մնալու համար, • հրավիրեք գործընկերներին դասալսում կատարել և առաջարկեք աջակցություն, եթե նրանք ցանկանան իրենց համար զարգացնել այն հմտությունները, որոնք դուք ցուցադրել եք:

7.4. Կոմպետենցիա թիվ 15

Կոմպետենցիա թիվ 15. Դասավանդման մեթոդների և աշակերտների ուսուցման վերանայում, մշտադիտարկում և արժևորում

Դասավանդման մեթոդները և աշակերտների ուսուցումը վերանայելու, մշտադիտարկելու, գնահատելու և այդ գնահատումը հետագա ծրագրերի կազմմանն ու ԺՔԿ/ՄԻԿ դասավանդելու մասնագիտական զարգացմանը ուղղելու հնարավորություն և կամք:

7.4.1. Նկարագրություն և օրինակներ. «այս կոմպետենցիան բավարարող ուսուցիչները կցուցաբերեն...»

Այն ուսուցիչները, որոնք բավարարում են ԺՔԿ/ՄԻԿ-ի այս կոմպետենցիան.

- տեղյակ են, որ ակտիվ քաղաքացիության միջոցով աշակերտների ուսուցման գնահատումը ենթադրում է, որ պետք է իրազեկ լինել արդյունավետ ակտիվ քաղաքացիության ծրագրերի պրոցեսներից, փորձառությունից և գործելակերպերից և քննադատաբար վերլուծել ԺՔԿ/ՄԻԿ համատեքստը/աշխատանքները , աշակերտների ուսուցման գործընթացները և արդյունքները,
- նրանք իրենց ընկալում են որպես քաղաքացիներ և քաղաքացիություն դասավանդող ուսուցիչներ աշակերտների աչքերով, ովքեր գնահատում են նրանց ելնելով վերաբերմունքից, ռազմավարություններից և կիրառվող աշխատանքներից,
- նրանք ինքնուրույն վերանայում են ԺՔԿ/ՄԻԿ դասավանդման տարբեր հայեցակետեր և կիրառում են տարբեր գործիքներ,
- նրանք խորհում են մանկավարժության և ուսուցման ու դասավանդման տեխնիկական գործընթացի վերաբերյալ, որը կիրառում են իրենց պրակտիկայի ընթացքում: Օրինակ՝ նրանք խորհում են հարցադրման տարբեր ձևերի շուրջ, որը կարող է խանգարել աշակերտների ազատ արտահայտման հնարավորությանը, կամ նման հնարավորություն տրամադրել նրանց,
- նրանք ունակ են խորհել էթիկական, սոցիալական և քաղաքական արժեքային համակարգերի շուրջ, որի վրա հենված է ԺՔԿ-ի նկատմամբ իրենց վերաբերմունքը,
- նրանք տեղյակ են ինքնաարտացոլում և ինքնագնահատում զարգացնելու տարբեր եղանակների մասին: Նրանք կիրառում են դասավանդման անձնական օրագրեր, ավելի հստակ տեսնելու իրենց որպես ուսուցիչներ և սովորողներ:
- նրանք համեմատում են իրենց դասավանդման փորձառությունը գործընկերների դասավանդման փորձառությունների հետ՝ հետ անդրադարձ կատարելու պատկերացումները իրենց գործողությունների և վերաբերմունքի մասին: Օրինակ՝ իրենք կարող են գործընկերոջից խնդրել ասել, թե նրանց կարծիքով աշակերտների՝ վերաբերմունքը փոխելու դիմադրության տիպային պատճառները որոնք են, և կարող են մշակել աշխատանքներ և ռազմավարություններ, որոնք խթանում են ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը:
- նրանք համեմատում և հակադրում են իրենց գործողությունները/գործելակերպերը և վերաբերմունքը ԺՔԿ դասավանդելու և սովորելու տեսական գրականության հետ: Օրինակ՝ նրանք կարող են մեկնաբանել, որ աշակերտների կողմից ահաբեկումը/կարգապահության խախտումը իրենց սեփական անհատականության հետևանք է: Փոքրամասնություն կազմող աշակերտների մասին գրականությունը կարող է բացատրել կարգապահության խախտումը որպես հակադրություն կրթության և քաղաքականության միջև՝ հենվելով այն գաղափարի վրա, որ կրթության միջոցով հնարավոր է հաղթահարել ճնշումները և իրականությունը:

7.4.2. Առաջընթացի աղյուսակ

Կոմպետենցիա թիվ 15. Դասավանդման մեթոդների և աշակերտների ուսուցման վերանայում, մշտադիտարկում և արժևորում	
Քայլ 1 (կենտրոնացում) *Դուք գտնում եք, որ ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին գիտելիքների փոխանցումը բավարար է ցույց տալու համար, որ դուք հանձնառու եք առարկային և որ կարիք չկա մեթոդաբանություն փոխել, քանի դուք լավագույնն եք անում: Դուք իրականում չեք գնահատում ինքներդ Ձեզ ԺՔ�կ/ՄԻԿ տեսանկյունից և կարող է չունենաք մոտիվացիա կամ ռեսուրսներ՝ ինքնաարժևորելու Ձեր գործելակերպը:*	**Փորձեք անել հետևյալը.** • կիրառեք Ձեր կողմից աշակերտների գնահատման արդյունքները՝ նրանց հետ քննարկելու ամենատարածված սխալ ըմբռնումները, որ այս գնահատումը մատնանշում է: Փորձեք գտնել այս սխալ մեկնաբանությունների պատճառը Ձեր գործելակերպում, • վերանայեք Ձեր ուսուցման արդյունքները, • հասկացեք ԺՔԿ/ՄԻԿ-ը ընկալելու Ձեր մեթոդաբանության ազդեցությունը՝ խոսելով նրանց հետ այնպիսի հարցերի շուրջ, որոնք, Ձեր կարծիքով, նրանք պետք է յուրացրած լինեին: • խոսեք Ձեր գործընկերների հետ իմանալու նրանց գործելակերպը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նպատակներին և մեթոդներին:
Քայլ 2 (զարգացում) *Դպրոցը քաղաքականություն չունի գնահատելու դասավանդման ԺՔԿ/ՄԻԿ հայեցակետերը: Ժամանակ առ ժամանակ դուք Ձեր աշակերտերին հարցաշարեր եք տալիս դասավանդման արդյունավետության մասին՝ պարզապես իմանալու, թե ինչքանով եք լավ աշխատում: Դուք Ձեր գործընկերների հետ քննարկում եք այս հարցաշարերի արդյունքները: Այնուամենայնիվ, դուք հազվադեպ եք հետադարձ կապը հաշվի առնում՝ մեթոդաբանությունները փոխելու համար:*	**Փորձեք անել հետևյալը.** • Ձեր աշակերտներին հարցաշարեր տվեք: Հարցաշարերը կառուցեք այնպես, որ կարողանաք հասկանալ աշակերտների վարքագծի վրա Ձեր մեթոդաբանությունների ազդեցությունները, • քննարկեք հարցաշարարերի արդյունքները Ձեր աշակերտների հետ, • ներգրավեք դպրոցը ինքնաարժևորման պրոցեսում և հետաքրքրություն առաջացրեք Ձեր գործընկերների մոտ մշտադիտարկման, գնահատման և աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ փորձառության բարելավման հարցում: • հաշվի առեք աշակերտների և Ձեր գործընկերների դիտողությունները: Փորձեք փոխել մեթոդաբանությունները՝ հետադարձ կապին համապատասխան: Փորձեք կիրառել դրանք կատարելագործվելու համար:
Քայլ 3 (հաստատում) *Դպրոցը ծրագիր ունի՝ բարելավելու ԺՔԿ/ՄԻԿ-ի առնչությամբ կրթության որակը, չնայած դեռ հստակություն չկա այդ հարցում: Ընդհանուր ընկալում կա, որ դպրոցը փորձում է բարելավել ԺՔԿ/ՄԻԿ դասավանդման/ուսուցման գործընթացները: Դուք ցանկանում եք համագործակցել: Այնուամենայնիվ, դուք չգիտեք, թե ինչ աջակցություն ցուցաբերեք այդ քաղաքականություններին:*	**Փորձեք անել հետևյալը.** • աշակերտներին հարցաշարեր բաժանեք և քննարկում անցկացրեք՝ ուշադրությունը կենտրոնացնելով մեթոդաբանությունների և աշակերտների վարքագծի վրա դրանց ազդեցություններին, • Ձեր դասավանդման և ուսուցման աշխատանքներում ներառեք աշակերտների կողմից բարձրացված հարցեր, • ներգրավեք դպրոցը աշակերտների կողմից ԺՔԿ/ՄԻԿ իրազեկվածության խթանման գործընթացում:
Քայլ 4 (կատարելագործում) *Դպրոցը հստակ ծրագիր ունի՝ բարելավելու ԺՔԿ/ՄԻԿ-ի առնչությամբ կրթության որակը: Աշակերտների և շահագրգիռ կողմերի ձայնը լսելի է և ներառված է գործընթացում: Աշակերտների հարցաշարերի արդյունքները հաշվի են առնվում՝ բարելավելու դասավանդման/ուսուցման գործընթացը: Մեթոդաբանությունները և ուսուցման արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են: Աշակերտները ակտիվ կերպով մասնակցություն են ցուցաբերում ծրագրում և օգնում են սահմանել այն հարցերը, որոնք կատարելագործման կարիք ունեն:*	**Փորձեք անել հետևյալը.** • օգտագործեք հետադարձ կապի բոլոր հնարավոր ձևերը, շարունակաբար մշտադիտարկելու Ձեր կատարողականը՝ ինչով հնարավորություն կստեղծեք շարունակական կատարելագործման համար, • բարձրացրեք աշակերտների իրազեկվածությունը Ձեր նպատակների մասին, օգտվեք նրանց հանձնառությունը Ձեր նպատակներին հասնելու համար, • գնահատեք, թե ինչ չափով են աշակերտները իրենց առօրյա կյանքում կիրառում այն, ինչ սովորել են Ձեզ հետ: Քննարկեք Ձեր եզրակացությունները նրանց հետ և փորձեք կազմել համատեղ դասեր ապագայի համար, • փորձեք գտնել դրական փորձ այլուր, այնպես որ կարողանաք համեմատել Ձեր աշխատանքը նմանատիպ դեպքերի հետ: • հրավիրեք այլ ուսուցիչների Ձեր դասերին՝ «տարածելու» Ձեր դրական փորձը:

8. Այլ շահագրգիռ կողմերի համար ռեսուրսներ

Չնայած սույն հրատարակության մեջ նկարագրված կոմպետենցիաները հիմնականում նախատեսված են ուսուցիչների և ուսուցանող ուսուցիչների համար, այնուամենայնիվ ԺՔԿ/ՄԻԿ-ի կարևորությունը, ընդգրկումը և բազմակողմանիությունը ակնհայտորեն ընդգրկում են մի շարք այլ կարևոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների, դպրոցի տնօրենների և բարձրագույն ուսումնական հաստատությունների:

8.1. Քաղաքականություն մշակողներ

Հաջողության հասնելու համար ԺՔԿ/ՄԻԿ-ը պետք է ճանաչվի և աջակցություն ստանա տարբեր քաղաքականություն մշակողներից՝ խորհրդարանների անդամներից, կառավարության պաշտոնյաներից, տեղական կառավարումից, խորհրդատուներից և այլն, ովքեր ձևավորում են սկզբունքները և նախագծում են ԺՔԿ/ՄԻԿ պայմանները: Այն առավել օգտակար է, երբ՝

- ԺՔԿ/ՄԻԿ-ի կարևորությունը արտահայտված է օրենսդրական փաստաթղթում,
- գործնական ուղեցույցերը ներառված են այլ նորմատիվ ակտերում,
- ոլորտն աջակցություն է ստանում և ապահովված է անհրաժեշտ բյուջետային հատկացումներով՝ ուսումնական ծրագրերի գծով և առավել լայն փոփոխություններ իրականացնելու համար:

Եվրոպայի խորհրդի ԺՔԿ/ՄԻԿ գծով հրատարակությունների շարքը, այդ թվում՝ այդ ձեռնարկը, նպատակ ունի քաղաքականություն մշակողներին հստակ բացատրել ԺՔԿ/ՄԻԿ էությունը և դրա անհրաժեշտությունը՝ սոցիալական ներառում խթանելու նպատակի առնչությամբ: Այն նպատակ ունի ընդգծել.

- ԺՔԿ/ՄԻԿ-ի անհրաժեշտությունը երիտասարդների կրթության համար,
- ԺՔԿ/ՄԻԿ-ի նպատակները մշակելու դասավանդման և ուսուցման գծով նոր և հետաքրքիր մոտեցումներ:

8.2. Դպրոցի տնօրեններ և ղեկավար ուսուցիչներ

ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումներն ամենամեծ հաջողությամբ մշակվել են այն դեպքերում, երբ դրանք ստացել են դպրոցի ավագ առաջնորդների աջակցությունը՝ ակտիվ հանձնառության և ներգրավվածության ձևով: Բոլոր փաստերը և հետազոտությունները ցույց են տալիս, որ այս աջակցությունն առանցքային է:

Դպրոցում աշխատող բոլոր ուսուցիչները այս կամ այն ձևով մասնակցում են դպրոցի մշակույթի ձևավորմանը: Ինչքան շատ է մշակույթը համապատասխանում ժողովրդավարության նպատակներին, այնքան ավելի լավ: Դպրոցի տնօրենները և ղեկավար ուսուցիչները կարող են մտածել սույն հրատարակության մեջ նկարագրված կոմպետենցիաների թեմաներով վերապատրաստման կողմնակի օգտակար ազդեցությունների և դպրոցի կատարելագործման գործողությունների տարեկան ծրագրում ԺՔԿ/ՄԻԿ զարգացման թիրախային նպատակները ներառելու օգուտների մասին: Գործողությունների ծրագիրն իրագործելու լավ ելակետ կարող է լինել դպրոցի համակարգում ԺՔԿ/ՄԻԿ-ի իրավիճակի հետ կապված «աուդիտը» և հետագա քայլերի սահմանումը:

Խորհուրդ է տրվում, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը դառնա առանց աշխատանքի ընդհատման ուսուցիչների վերապատրաստման և շարունակական մասնագիտական զարգացման առանցքային տարրը: Հուսով ենք, որ կոմպետենցիաներն ու ուղեկից բացատրությունները գործնական գաղափարներ կտան բոլոր ուսուցանող ուսուցիչներին:[51] Նրանց սեմինարները կամ վերապատրաստման միջոցառումները նպատակ պետք է հետապնդեն մասնակից ուսուցիչներին տրամադրել գիտելիք, հմտություններ, վերաբերմունք, արժեքներ և դիրքորոշում՝ իրենց պրակտիկայի ընթացքում ԺՔԿ/ՄԻԿ արդյունավետ մոտեցումներ մշակելու համար: Գոյություն ունեն ուսուցման որոշ առանձնահատուկ ձևեր, որոնցում բոլոր ուսուցիչները պետք է հմուտ լինեն և ինքնավստահ, այդ թվում՝ քննարկում, դերային խաղ, նմանակումներ և համագործակցային ծրագրային աշխատանք, որոնք կարող են արդյունավետ կիրառվել բոլոր առարկաների, այդ թվում՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի դասավանդման ժամանակ: Ուսուցիչները

51. Հասարակական կազմակերպությունների և համահավասարների վերապատրաստումների ներառմամբ

պետք է նաև զարգացնեն ուսուցման աշխատանքները համայնքում կամ առավել լայն շրջանակներում իրական իրավիճակների շուրջ նախագծելու հմտություն՝ մշակելով նրբանկատ և վիճահարույց հարցեր լուծելու ռազմավարություններ:

Հետևյալ «առաջընթացի աղյուսակում» բերված են առաջարկներ, թե ինչպես կարող են դպրոցի տնօրենները և ղեկավար ուսուցիչները սահմանել, թե որ փուլում «են իրենք»՝ ԺՔԿ/ՄԻԿ-ին առնչվող հարցերի ընկալման և դրանցում ներգրավման առնչությամբ, որից հետո կարող են սկսել իրագործել գործող մոտեցումների որոշակի փոփոխություններ:

Քայլ 1 (կենտրոնացում) *Դպրոցը (և առանձին ուսուցիչների մեծ մասը) ԺՔԿ/ՄԻԿ-ի զարգացման նախնական փուլում են: Հավանաբար նրանք հստակ չեն պատկերացնում ԺՔԿ/ՄԻԿ-ի էությունը և նպատակները: Ուսումնական ծրագրում որևէ հետևողական կամ հատուկ եղանակով ԺՔԿ/ՄԻԿ չի ծրագրված: Դպրոցները կամ ուսուցիչները միգուցե հավատացած են, որ բավարար է ԺՔԿ/ՄԻԿ ընդհանուր իմաստով խթանելու ոգի ունենալը:*	**Փորձեք անել հետևյալը.** • այստեղ առանցքային են վերապատրաստումը և դրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկվածությունը, որը ԺՔԿ/ՄԻԿ-ը կարող է բերել դպրոցներ (դասավանդման մեթոդիկայի ու ուսուցման ընդլայնում, ներառական դպրոցի ստեղծում, վաղվա ակտիվ ժողովրդավար քաղաքացու կրթում և այլն):
Քայլ 2 (զարգացում) *Դպրոցները և/կամ անհատ ուսուցիչները պետք է շարժվեն ԺՔԿ/ՄԻԿ-ի ուղղությամբ: Ուսուցիչները սկսում են հասկանալ երիտասարդներին ներգրավելու և նրանց գիտելիքն ու հմտությունները ընդլայնելու ԺՔԿ/ՄԻԿ-ի ներուժը: Աշխատակազմը սկսել է սահմանել հիմնական ծրագիրը:* *Վերապատրաստման և աջակցման միջոցով սկսել է զարգանալ աշխատակազմի առավել լայն շրջանակների փորձագիտությունը:* *Հնարավոր են հետևյալ խնդիրները.* • *տպագրված ռեսուրսներից չափից շատ կախվածություն,* • *ԺՔԿ/ՄԻԿ առարկայական գիտելիքի պակաս,* • *ԺՔԿ/ՄԻԿ-ը ակտիվ և բաց եղանակներով դասավանդելու հմտությունների մեջ վստահության պակաս:*	**Փորձեք անել հետևյալը.** • այս փուլում տեմպը պահպանելը հրամայական է, խրախուսեք աշխատակազմին շարունակել ջանքեր գործադրել և բոլոր աշխատակիցներին դարձրեք ԺՔԿ/ՄԻԿ վերապատրաստման մասնակից, • օգնեք ուսուցիչներին գտնել և աշխատել տեղական գործընկերների հետ՝ դնելու աշակերտների մասնակցությամբ ակտիվ քաղաքացիության ծրագրերին տանող համագործակցության հիմքերը:
Քայլ 3 (հաստատում) *Այս փուլում դպրոցները պետք է ունենան ԺՔԿ/ՄԻԿ արդյունավետ առաջնորդության կառույցներ (համեմատեք՝ Ժողովրդավարական կառավարումը դպրոցներում (Բաքման և Թրաֆորդ, 2007 թ.)): Մշակվում է հետևողական ԺՔԿ/ՄԻԿ ծրագիր անհատ ուսուցիչների դասարաններում և դրանցից դուրս: Ուսուցիչները պետք է սկսեն զարգացնել արդյունավետ համայնքային կապեր: Առարկայական գիտելիքները պետք է հարաբերականորեն ամուր լինեն, իսկ վերապատրաստման կարիքները պետք է սահմանված լինեն՝ ներառելով ակտիվ դասավանդման և ուսուցման լայն մոտեցումների շրջանակ:* *Այս փուլի մտահոգությունները վերաբերում են փոփոխության կառավարմանը և նորարարության անկանխամտածված հետևանքների հետ կապված վախերին:*	**Փորձեք անել հետևյալը.** Անհատ ուսուցիչների համար առանցքային թիրախային նպատակներ կարող են լինել. • ծնողների, տեղական գործակալությունների և համայնքի այլ անդամների հետ կապերի հաստատումը, • ՏՀՏ-ի կիրառումը՝ կրթությունը և ուսուցումը կատարելագործելու նպատակով, • աշակերտների ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքների, հմտությունների և մասնակցության խորության և որակի զարգացումը, • հաջողությունը ողջունելը:

Քայլ 4 (կատարելագործում) *Այս փուլում դպրոցը պետք է ունենա ԺՔԿ/ՄԻԿ-ի բավականին արդյունավետ մատուցում և անհատ ուսուցիչները պետք է մշակած լինեն խորը և արդյունավետ կրթության և ուսուցման մոտեցումներ: Ուսուցիչների թիմերը պետք է փոխանակած լինեն տեսլական և ըմբռնում, բայց պետք է ճկուն լինեն դրանք փոփոխելու համար՝ աշակերտների կարիքները բավարարելու նպատակով: Դպրոցները պետք է մշակած լինեն արդյունավետ համայնքային կապեր:* *Աշակերտների ձեռքբերումները նկատվում և ճանաչվում են: Ուսուցիչները բարձր ակնկալիքներ ունեն, թե ինչ կարելի է սպասել աշակերտներից՝ հենվելով նրանց նախկին ձեռքբերումների վրա: Նոր տեխնոլոգիաները պետք է առանցքային գործոն լինեն ուսուցիչների դասարանային արդյունավետության ապահովման գործում: Ուսուցիչները պետք է բավականին վստահ լինեն, որպեսզի թույլ տան աշակերտներին իրենց խոսքն ասել օրակարգի սահմանման և նոր գաղափարներ փորձարկելու հարցում: Այս փուլում նպատակները վերաբերում են նորարարությանը և պահը պահպանելու ու իրենց մասնագիտական հմտությունները զարգացնելու հանձնառություններին հավատարիմ մնալու նոր ռազմավարություններին: Խնդիրները վերաբերում են համագործակցությանը և վերակենտրոնացմանը:*	**Փորձեք անել հետևյալը.** Թիրախային նպատակներ կարող են լինել. • դրական փորձով կիսվելը այլ գործընկերների և դպրոցների հետ, • իրական ակտիվ քաղաքացիության ներգրավվում և ինքնուրույն ուսուցում խրախուսելու նպատակով նորարարական մոտեցումների առավել զարգացում, • մասնակցային գնահատման և արժևորման պրոցեսների պահպանում և առավել զարգացում՝ պրոցեսում ներառելով աշակերտների և դպրոցի գործընկերների, • հաջողությունը ողջունելը:

Աղյուսակ 8. Դպրոցի տնօրենների և ղեկավար ուսուցիչների համար առաջընթացի աղյուսակ

8.3. Բարձրագույն կրթության ոլորտում

Ընդհանուր առմամբ, արդարացի է ասել, որ որպես մասնագիտական նախապատրաստության հիմնական պահանջ Եվրոպայում ԺՔԿ/ՄԻԿ թեմաներով ուսուցչի ուսուցման ոլորտում գոյություն ունի իրազեկվածություն պակաս: Ներկայումս կրթության նպակաների և ԺՔԿ/ՄԻԿ-ի դասընթացների իրագործման վրա ազդող ուսուցիչ մասնագիտական դերի մասին կան տարբեր գաղափարներ և ըմբռնումներ: Ընդհանուր առմամբ՝ կրթական բանավեճը ծավալվում է ուսուցչի դերի մասին երկու իրարամերժ գաղափարների շուրջ.

- գաղափարներից մեկին բնորոշ է գիտելիքի որոշակի ոլորտներում երեխաների ճանաչողական զարգացման աջակցության գերակայությամբ: Այս գաղափարի շրջանակում ուսուցիչը համարվում է մասնագետ, որը տեղեկություն և կոնկրետ առարկայի մասին գիտելիք է հաղորդում և իրեն հազիվ թե պատասխանատու է զգում սոցիալական և ժողովրդավարական կրթության համար,
- երկրորդ տեսական գաղափարը վերաբերում է կրթական գործընթացի առավել լայն ըմբռնմանը և սոցիալիզացիայի պրոցեսի կարևորությանը, որը տեղի է ունենում դպրոցական միջավայրում: Սա ավելի շատ տարածում ունի կրթության առաջնային փուլում: Այն ուսուցիչները, որոնք իրենց նույնացնում են երկրորդ գաղափարի հետ, հակված են իրենց ուսուցչական դերը հիմնել և իրենց դիտարկել որպես սոցիալական մանկավարժներ: Նրանց ուշադրությունը կենտրոնացած է ուսանողների անձնական և սոցիալական զարգացմանն աջակցելու խնդրի շուրջ:

ԺՔԿ/ՄԻԿ-ի աշխատանքը հնարավորություն է ընձեռում հավասարակշռել այս իրարամերժ տեսական գաղափարները և ինտեգրել այն ուսուցչի՝ որպես հրահանգիչ և բազմակողմանի մանկավարժ մասնագիտական դերի համապարփակ ըմբռնման շրջանակում:

Մենք չենք կարող պահանջել, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները (բուհեր), որոնք իրավամբ անկախ և ինքնավար հաստատություններ են, պարտադիր ԺՔԿ/ՄԻԿ ներմուծեն ուսուցիչների ուսուցման հիմնական ուսումնական ծրագրում կամ իրենց դասերի ուսումնական պլաններում: Այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ կարևոր է համոզել դեկաններին (կամ նրանց համարժեք պաշտոն զբաղեցնող անձանց) վերոնշյալ բացթողումը լրացնելու դրական մասնագիտական առավելության մասին և խրախուսել նրանց ինտեգրել ԺՔԿ/ՄԻԿ-ը իրենց հաստատության հիմնական նպատակների շարքում: Սա ուսուցողական գործընթաց է, որը պահանջում է ժամանակ և շարունակական ջանքեր: Այնուամենայնիվ, որոշ փորձեր կարող են արվել բարելավելու ԺՔԿ/ՄԻԿ-ի կենտրոնական նշանակության ճանաչումը՝ որպես սկսնակ ուսուցիչների հիմնական փորձագիտության մաս և համապատասխանաբար փոփոխելու ու ծավալելու նոր մոտեցումներ:

ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործմանը աջակցող առանցքային մարմիններ են համարվում ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտները: Ուսուցիչների վերապատրաստման քոլեջների բոլոր վարչությունների դեկանները և համալսարանները, ինչպես նաև դասընթաց մշակողները և առաջնորդները կարող են ունակություն և կայունություն զարգացնել ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում՝ սկսնակ և փորձառու ուսուցիչների ուսումնական ծրագրերում հատուկ մոդուլներ ներառելու և այդ մոդուլների կարևորություն շեշտելու միջոցով: Ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտների դեպքում հիմնական մարտահրավերը կարող է լինել ԺՔԿ/ՄԻԿ-ը որպես հիմնական մոտեցում ճանաչելը, որը պետք է ներառվի բոլոր ապագա ուսուցիչների վերապատրաստման շրջանակում՝ անկախ առարկայից և մասնագիտությունից: Կարևոր է եղանակներ գտնել իրազեկելու և համոզելու առարկայական լայն շրջանակում ուսուցանող ուսուցիչ գործընկերներին ԺՔԿ/ՄԻԿ առավելությունների և առարկայական տարբեր համատեքստերում դրա կիրառելիության և դինամիզմի մասին:

Հետևյալ «առաջընթացի աղյուսակում» բերված են առաջարկներ, թե ինչպես կարող են բուհերը սահմանել, թե որ փուլում «են իրենք»՝ ԺՔԿ/ՄԻԿ-ին առնչվող հարցերի ընկալման և դրանցում ներգրավման առնչությամբ, և թե ինչպես կարող են նրանք իրագործել գործող մոտեցումների որոշակի փոփոխություններ:

Քայլ 1 (կենտրոնացում) *Հաստատության ներսում ԺՔԿ/ՄԻԿ-ի նկատմամբ գոյություն ունի սահմանափակ մոտեցում՝ ուշադրությունը կենտրոնացնելով հիմնականում պատմության և հասարակագիտական առարկաների ուսուցիչների վրա. գոյություն չունի ընդհանուր ԺՔԿ/ՄԻԿ հեռանկար: Բուհերը ԺՔԿ/ՄԻԿ զարգացման նախնական փուլում են և հավատացած են, որ բավական է գիտակցել ԺՔԿ/ՄԻԿ խթանող կրթության կարևորություն լայն իմաստով (օրինակ՝ ապահովելով ուսուցման հավասար հնարավորություններ և որոշակի առարկաների գծով ինտերակտիվ և համագործակցային մեթոդաբանության մասին դասավանդման միջոցով):*	**Փորձեք անել հետևյալը.** • ավելի շատ գիտելիք ձեռք բերեք ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և արժեքների և այն ներուժի վերաբերյալ, որ այն առաջարկում է վաղվա ակտիվ քաղաքացու առավել ընդլայնված դասավանդման և ուսուցման համար, • բոլոր հնարավորությունները կիրառեք բարձրացնելու առարկայական բովանդակության առնչությամբ ԺՔԿ/ՄԻԿ թեմաների մասին իրազեկվածությունը: Օրինակ՝ փորձեք բարձրացնել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սոցիալական արդարությունը, բոլորի համար կրթության իրավունքը, սոցիալական ներառումը և բազմազանությունը և փորձեք մշակել ռազմավարություններ այդ իրականությունների խնդիրները լուծելու համար:
Քայլ 2 (զարգացում) *Բուհերը կամ անհատ ուսուցիչները պետք է շարժվեն ԺՔԿ/ՄԻԿ-ի ուղղությամբ: Առավել խորը ընդհանուր ըմբռնում կա ուսանողներին ներգրավելու և նրանց գիտելիքը և հմտությունները ընդլայնելու հարցում ԺՔԿ/ՄԻԿ-ի ներուժի մասին: Հաստատությունները սկսել են սահմանել հիմնական ծրագիր՝ որպես բոլոր ուսանողների համար կրթության մաս: Աճող հետաքրքրություն կա ուսուցանող ուսուցիչների և ԺՔԿ/ՄԻԿ առարկայական ուսուցիչների նկատմամբ:*	**Փորձեք անել հետևյալը.** • այս փուլում հրամայական է տեմպը պահպանելը և մշտական աջակցություն ցուցաբերելը հանձնառությանը, որը այլապես կարող է կոտրվել, • փորձագիտություն զարգացրեք արտաքին գործընկերների աջակցությամբ, • Բուհի ղեկավարների աջակցությունը մեծապես ցանկալի է, որը հնարավորություն կտա ինտեգրել ԺՔԿ/ՄԻԿ-ը հաստատության կենսագրության շրջանակում և ներգրավել հնարավորինս շատ ուսուցիչներ և ուսանողներ:
Քայլ 3 (հաստատում) *Բուհերը պետք է ունենան ԺՔԿ/ՄԻԿ արդյունավետ կառույցներ: Մշակման փուլում է ուսուցիչների ուսուցման մաս կազմող հետևողական ծրագիրը: Անհատ ուսուցիչները ներառում են ԺՔԿ/ՄԻԿ-ի տարբեր կողմեր իրենց բնագավառներում: Հաստատություններն առաջարկում են ակտիվ դասավանդման դասընթացների լայն շրջանակ և ուսուցման հնարավորություններ՝ զարգացնելու համար ուսանողների ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և հմտությունները որակական առումով:*	**Փորձեք անել հետևյալը.** Մշտապես քննվում է ակտիվ մասնակցություն/ ժողովրդավարական ներգրավվածության գաղափարը: Առանցքային հարցերը կարող են լինել հետևյալը. • ուսանողների ակտիվ մասնակցության զարգացումը այն աշխատանքներում, որոնք վերաբերում են ԺՔԿ/ՄԻԿ-ին • ուսանողական միությունների ներգարվումը հաստատության աշխատանքների կազմակերպման ոլորտ, • տեղական գործակալությունների և համայնքի այլ անդամների և հասարակական կազմակերպությունների հետ կապերի հաստատումը, • ուսանողներին համայնքին վերաբերող աշխատանքների պլանավորմանը ծանոթացումը (ծրագրային/ծառայություններին առնչվող ուսուցում), ուսանողական պրակտիկան այստեղ շատ օգտակար է, • նմանատիպ հաստատությունների և ոչ ֆորմալ կրթության ոլորտի հետ կապերի ստեղծում:
Քայլ 4 (կատարելագործում) *Այս փուլում բուհը պետք է ունենա ԺՔԿ/ՄԻԿ-ի բավականին արդյունավետ մատուցում և անհատ ուսուցիչները թեմայի առնչությամբ պետք է մշակած լինեն խորը և արդյունավետ կրթության և ուսուցման մոտեցումներ: Աճող կապ կա նախնական վերապատրաստման և առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստման միջև: Այս փուլում նպատակները վերաբերում են նորարարությանը և պահը պահպանելու ու հաստատության բոլոր մակարդակներում հանձնառություններին հավատարիմ մնալու նոր ռազմավարություններին:*	**Փորձեք անել հետևյալը.** Թիրախային նպատակներ կարող են լինել. • գործընկերների միջև թիմի ձևավորումը • ԺՔԿ/ՄԻԿ միջառարկայական դասավանդումը, • ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում մագիստրոսի կոչում շնորհող հետագա դասընթացների մշակում, • ԺՔԿ/ՄԻԿ վերապատրաստման հնարավորությունների ընդլայնում՝ ներառելով ուսուցիչների առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստումը, • գնահատման և արժևորման արդյունքների ընդլայնում՝ դասավանդման պրակտիկաներին աջակցելու նպատակով:

Աղյուսակ 9. Բուհերի համար առաջընթացի աղյուսակ

8.4. ԺՔԿ/ՄԻԿ կոմպետենցիաների նշանակության արժևորում տարբեր շահագրգիռ կողմերի մոտ

Շահագրգիռ կողմեր	ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և ըմբռնումը	Պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում	ԺՔԿ/ՄԻԿ-ը՝ գործողության մեջ. Գործընկերություն և համայնքային ներգրավվածություն	Մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում
Քաղաքականություն մշակողներ	➔ ապահովում են, որ ԺՔԿ/ՄԻԿ ուսուցման արդյունքները հստակ արտահայտվեն ուսումնական ծրագրի շրջանակներում և ապահովեն ուղղորդում, ➔ ապահովում են, որ դպրոցի ղեկավարները մանրակրկիտ վերապատրաստում ստացած և հրահանգավորված լինեն, ➔ -ռեսուրսներ են հատկացնում՝ վերապատրաստման և ոլորտում բարեփոխումներին աջակցելու նպատակով:	➔ ապահովում են որ կրթական ոլորտի ազգային ղեկավարները ընդգծեն ԺՔԿ/ՄԻԿ-ի կարգավիճակը և դրա կարևորությունը, ➔ ԺՔԿ/ՄԻԿ-ը դրվի ուսումնական ծրագրի կենտրոնում, ➔ բոլոր ուսուցիչներին աջակցություն և օրինակներ են տրամադրում լավ ԺՔԿ/ՄԻԿ դասարանային պրակտիկայի վերաբերյալ՝ տպագրված նյութերի, կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններ տեսաձայնագրություններ-ի և վերապատրաստումների միջոցով:	➔ աջակցում են հասարակական կազմակերպություններին ռեսուրսներով և դյուրացնում են դպրոցի նախաձեռնությունները. ստեղծում են համայնքային աջակցության խմբերի ազգային և մարզային տեղեկագրեր, ➔ կարգավիճակ շնորհում և օրինական դաշտ են բերում խտրականության և ռասիզմի դեմ քարոզարշավները,	բաց եղեք սովորողների ներգրավման հանդեպ և հետևեք սովորողների խոսքին, խթանեք դպրոցական խորհուրդները և այլ կերպ դպրոցները դարձրեք բաց և ժողովրդավարական, ուղեցույցներ առաջարկեք ներառական դպրոցական խորհուրդների համար, ռեսուրսներ և բյուջե տրամադրեք ԺՔԿ/ՄԻԿ ոլորտում առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստման համար:
Ղեկավար ուսուցիչներ	➔ իմացեք, թե ինչու է այս ոլորտը կարևոր և ծանոթացեք կոնկրետ դեպքերի ուսումնասիրությունների այն տարբերություններին, որ արդյունավետ ԺՔԿ/ՄԻԿ ծրագրերը կարող են թողնել դպրոցների վրա, ➔ հանձնառու եղեք անցկացնել վերապատրաստումներ և աջակցություն ցուցաբերել Ձեր դպրոցի ուսուցիչներին, երբ վերջիններս նոր մոտեցումներ են մշակում:	➔ նշանակեք ԺՔԿ/ՄԻԿ գծով համակարգող և աջակցեք նրան, երբ վերջինս գործնական աշխատանքներ է մշակում դպրոցի մակարդակով, ➔ մշակեք ռազմավարություններ, որոնք խթանում են ԺՔԿ/ՄԻԿ-ը քաղաքացիության երեք ոլորտներում՝ դպրոցի համակարգի մշակույթ, ուսումնական ծրագիր և համայնքային ներգրավվածություն:	➔ ակտիվ կերպով խրախուսեք համայնքային մասնակցության նոր և նորարարական մոտեցումներ, ➔ պարզ դարձրեք, որ դուք աջակցում եք ակտիվ քաղաքացիության ծրագրերին, որոնք զարգացնում են սովորողների ԺՔԿ/ՄԻԿ հմտությունները, վերաբերմունքը և դիրքորոշումը:	➔ ողջունեք ուսուցիչներից և սովորողներից ստացվող առաջարկները այն մասին, թե ինչպես կարելի է դպրոցը դարձնել ավելի լավ վայր, անձնապես հանձնառու եղեք ներառել ԺՔԿ/ՄԻԿ-ը և ակտիվ քաղաքացիությունը դպրոցի տարեկան զարգացման պլանում, ➔ Ձեր աջակցությունը ցուցաբերեք Ձեր աշխատակազմի նախաձեռնությանը՝ պաշտպանելով նրանց աշխատանքը առավել բարձր վարչական ատյաններում:
Վերապատրաստողներ/ ուսուցանող ուսուցիչներ	➔ ներառեք հղումներ ԺՔԿ/ՄԻԿ «գիտելիքի» սույն կոմպետենցիաների բովանդակությանը և ձևակերպմանը նախնական վերապատրաստման և աշխատանքի ընդունվելուց հետո վերապատրաստման համապատասխան մոդուլներում:	➔ աշխատեք մասնավորապես ԺՔԿ/ՄԻԿ ուսուցման պլանավորման շուրջ, ➔ Ուղղորդեք ուսուցիչներին վիճահարույց հարցեր դասավանդելու հարցում:	➔ օգնեք ուսուցիչներին մանրամասն մտածել ԺՔԿ/ՄԻԿ-ը գործողության մեջ գործնական մարտահրավերների մասին: Օրինակներ բերեք կոնկրետ դեպքի ուսումնասիրություններից և լուծումներից:	➔ վերապատրաստման մոդուլների շրջանակում տեղ հատկացրեք անդրադարձման համար, ➔ փորձեք համապատասխանեցնել վերապատրաստման հնարավորությունները ուսուցիչների վերապատրաստման ժամանակ առաջացող կարիքների հետ:

Շահագրգիռ կողմեր	ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և ըմբռնումը	Պլանավորում, դասարանի կառավարում, ուսուցում և գնահատում	ԺՔԿ/ՄԻԿ-ը՝ գործողության մեջ. Գործընկերություն և համայնքային ներգրավվածություն	Մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում
Ուսուցիչներ	➔ ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքների մասին խորհուրդները կիրառեք դասարանում:	➔ փորձարկեք առաջարկվող աշխատանքներից մի քանիսը,; ➔ դասերի ընթացքում ներմուծեք վիճահարույց և թեմատիկ հարցեր:	➔ դասերի շարք պլանավորեք, որտեղ մասնակցում է համայնքից որևէ գործընկեր, որի ժամանակ սովորողները հանդես կգան փոփոխության պաշտպանի դերում:	➔ մնացեք լայնախոհ և ինքնաարտացոլող:

Աղյուսակ 10. ԺՔԿ/ՄԻԿ կոմպետենցիաների նշանակության արժևորում տարբեր շահագրգիռ կողմերի համար

9. Եզրակացություն

Նոր սոցիալական միտումների և տեղական համայնքի ու գլոբալ փոփոխությունների առաջ գալու հետ մեկտեղ սովորողների կարիքները բավարարելու համար փոփոխվում է կրթության գործառույթը: ԺՔԿ/ՄԻԿ-ը վաղվա Եվրոպայի և աշխարհի խաղաղության և երկխոսության թուղթ ու գրիչն է: Դպրոցական միջավայրում կենտրոնական հարցեր են կոնֆլիկտների կառավարումը, բազմազանության նկատմամբ հարգանքը, միջմշակութային արձագանքումը և քաղաքացիների իրավունքների և պարտականությունների ըմբռնումը:

Այժմ ուսուցիչներին անհրաժեշտ են ընդհանուր կոմպետենցիաներ (ուղղված համագործակցային աշխատանքին և կոլեկտիվ ինտելեկտին) և զարգացող կոմպետենցիաներ (ուղղված շարունակական հարմարեցմանն ու մասնագիտական զարգացմանը): Այս գիրքը փորձ է ճանաչել ուսուցիչների ընդլայնվող պատասխանատվությունը և գործիք է օգնելու նրանց ձեռք բերել համապատասխան կարողություններ՝ գիտելիք, հմտություն և դիրքորոշում, երիտասարդներին սովորեցնելու հասկանալ այս աշխարհը և դառնալ ակտիվ քաղաքացիներ:

Հիմնական չորս կոմպետենցիաների մշակման միջոցով (ԺՔԿ/ՄԻԿ մասին գիտելիք, դասարանային պրակտիկա՝ միջառարկայական մոտեցումների ներգրավմամբ, գործընկերության զարգացում և գնահատում) մենք հույս ունենք, որ ուսուցիչները կկարողանան կոմպետենցիաների այս մոդելը կիրառել՝ իրագործելու ԺՔԿ/ՄԻԿ-ը իրենց դպրոցում և համայնքում, և որ բոլոր ուսուցանող ուսուցիչները մոտիվացիա կունենան ԺՔԿ/ՄԻԿ-ը ներառելու իրենց ուսումնական ծրագրերում: Չնայած այսօր շեշտը դրված է ակադեմիական նվաճումների վրա, այնուամենայնիվ սույն հրատարակության մեջ հավասար կարևորություն է տրված արժեքներին, սոցիալական հմտություններին և մասնակցությանը, որը պետք է երիտասարդների համար ապահովի կրթություն գլոբալ հասարակությունում:

Մենք հուսով ենք, որ ստեղծագործ մոտեցման այն հնարավորությունը, որը ԺՔԿ/ՄԻԿ-ը առաջարկում է, ինչպես ցույց է տրված այստեղ, ուսուցիչներին և սովորողներին կտանի մի հաճելի ուղիով, որտեղ գաղափարներն ու իդեալներն արտահայտման տեղ ունեն: ԺՔԿ/ՄԻԿ-ը այս առումով կարևոր միջոց է այն ուսուցիչների համար, ովքեր ցանկանում են սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել իրենց ուսուցման նկատմամբ:

Մենք ցանկանում ենք ավարտել հղում կատարելով սոցիալական ներառմանը: ԺՔԿ/ՄԻԿ ծրագիր նախագծելիս՝ ընթերցողը կհասկանա, որ բոլոր աշխատանքների համար կենտրոնական նպատակը ներառականությունն է. ԺՔԿ/ՄԻԿ լավ գործելակերպի արդյունքում ձևավորվում են ներառական դասասենյակներ, ներառական դպրոցներ և երիտասարդներ, ովքեր պատրաստ են գործել հանուն առավել ներառական համայնքի և հասարակության:

> Երեխաներն իրավունք ունեն իրենց տեսակետներն արտահայտել իրենց վերաբերող բոլոր հարցերի մասին և լուրջ վերաբերմունք ակնկալել իրենց տեսակետների վերաբերյալ՝ իրենց տարիքին և հասունությանը համապատասխան:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 12-րդ հոդված

10. Հավելված

10.1. Ինքնաարժեվորման քայլեր

Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ինքնաարժևորման քայլեր կատարելիս ուսուցիչներն ունենում են մտահոգություններ իրենց մասնագիտական կյանքի տարբեր փուլերում:

Մտահոգությունը սահմանվում է որպես զգացմունքների, մտահոգվածության, մտքի և որևէ հարցի կամ առաջադրանքի մասին մտածելու բարդ համադրություն: Ռեյման և Թիս-Սփրինթալը սահմանել են ուսուցիչների մտահոգությունների վեց կատեգորիաներ, որոնք նրանք դասակարգել են չորս քայլերով:52 Այս քայլերի համաձայն, առաջարկվում են վերապատրաստման և ինքնազարգացման հնարավոր միջոցառումներ:

1-ին և 2-րդ քայլերի դեպքում ուսուցիչներին հիմնականում մտահոգում է սեփական անձը. 3-րդ քայլ դեպքում ուսուցիչներին մտահոգում է կատարվելքի առաջադրանքը. և 4-րդ քայլի դեպքում ուսուցիչներին մտահոգում է, թե ինչ ազդեցություն ունի իրենց դասավանդումը սովորողների վրա:

Տարբեր փուլերի ընթացքում առաջ են գալիս տարբեր զգացմունքներ:

Քայլեր/փուլեր	Հարակից հարցերը	Հարակից հարցերը
Քայլ 1 Էգոյի մակարդակ Մտահոգություն • իրազեկվածության պակաս	Ես բոլորվին հետաքրքրված չեմ նոր ծրագրով: Ես անտարբեր եմ:	• տեղեկություններ տրամադրել:
Քայլ 2 Էգոյի մակարդակ Մտահոգություններ. • տեղեկատվություն, • անձնական:	Ես ավելի շատ տեղեկությունների կարիք ունեմ.... Ինձ հետաքրքիր է: Ինչպե՞ս կանդրադառնա այս ծրագիրը ինձ վրա: Ծնողներին/աշակերտներին դուր կգա՞ այն և նրանք ինձ կհարգե՞ն նախաձեռնելու և նոր բան փորձելու համար: Ես մտահոգ եմ:	• պարզաբանեք ակնկալիքները և նորարարության տրամաբանությունը, • բացատրեք, թե նորարարության միջոցով անձը ինչ ներգործության կենթարկվի, • ակտիվ կերպով լսեք, • կազմակերպեք մտահոգության շուրջ աջակցության խումբ:
Քայլ 3 Առաջադրանքի մակարդակ Մտահոգություն • կառավարում:	Ես երբեք բավականին ժամանակ չեմ ունեցել անելու անհրաժեշտ ամեն ինչ: Ինչպե՞ս կարող եմ համահունչ քայլել այս բոլոր նոր նախաձեռնությունների և թղթավարական աշխատանքի հետ: Ես դյուրագրգիռ եմ: Ես կկորցնե՞մ դասարանում վերահսկողությունը, եթե ես կիրառեմ բանավեճ կամ վիճահարույց հարց: Ուսուցման և կառավարման շուրջ մտահոգություններ:	• տրամադրեք կոնկրետ կառավարման հուշումներ, • թող մի ուսուցիչ դիտարկի մեկ այլ հաջողակ ուսուցչի աշխատանքը,
Քայլ 4 Ազդեցության մակարդակ Մտահոգություններ. • հետևանքներ, • համագործակցություն, • վերակենտրոնացում:	Բոլոր աշակերտնե՞րն են կապված դասին: Ինձ համար զարմանալի է և ես հաջողակ եմ ինձ զգում: Ես պատրաստ եմ կիսել փորձը իմ գործընկերների հետ: Ես ոգևորված եմ: Ես կցանկանայի փոփոխել և վերաձևակերպել իմ դասավանդումը և ուսումնական ծրագիրը՝ աշակերտների կարիքները ավելի լավ բավարարելու համար: Ես վստահ եմ:	• արտաքին համագործակցություն և կապերի հաստատում:

Աղյուսակ A1. Մտահոգությունների հարցաշարի փուլեր

52. Ռեյման, Ա.Ջ. և Թիս-Սփրինթալ, Լ., *Մենթորությունը և ղեկավարումը ուսուցիչների մասնագիտական զարգացման գործում:* Նյու Յորք. Ադիսոն-Վեսլի Լոնգման, 1998թ.:

10.2. Ինքնաարժեվորման ռուբրիկա

Խումբ	Կոմպետենցիա	Сосредоточение вКենտրոնացումներառում	Զարգացում	Հաստատում	կատարելագործում փուլ
ԺՔԿ/ՄԻԿ գիտելիքները և ըմբռնումը	կոմպետենցիա թիվ 1. ԺՔԿ/ՄԻԿ նպատակները և խնդիրները				
	Կոմպետենցիա թիվ 2. ԺՔԿ/ՄԻԿ-ի միջազգային շրջանակները				
	կոմպետենցիա թիվ 3. ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական ծրագրերի բովանդակությունը				
	կոմպետենցիա թիվ 4. ԺՔԿ/ՄԻԿ-ի իրագործման իրավիճակներ				
ԺՔԿ/ՄԻԿ-ն զարգացնող մանկավարժական և կրթական գործունեություն դասարանում և դպրոցում	Կոմպետենցիա թիվ 5. մոտեցումների, մեթոդների և ուսուցման հնարավորությունների պլանավորում				
	կոմպետենցիա թիվ 6 ԺՔԿ/ՄԻԿ սկզբունքների և գործելակերպերի ներառում սեփական դասավանդման պրակտիկայում				
	Կոմպետենցիա թիվ 7. դպրոցի դրական ոգու նպատակով հիմնական կանոնների սահմանում				
	կոմպետենցիա թիվ 8. աշակերտների բանավիճային հմտություններին օժանդակելու նպատակով ռազմավարությունների մշակում				
	Կոմպետենցիա թիվ 9. գնահատման մոտեցումների կիրառում				
Մանկավարժական և կրթական գործունեություն, որը զարգացնում է ԺՔԿ/ՄԻԿ-ը գործընկերության և համայնքային ներգրավվածության միջոցով.	Կոմպեատենցիա թիվ 10. կրթական միջավայր, որտեղ խթանվում է բազմազան աղբյուրների կիրառումը				
	Կոմպետենցիա թիվ 11. համագործակցային աշխատանք՝ համայնքային համապատասխան գործընկերության շրջանակում				
	Կոմպետենցիա թիվ 12. խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի ռազմավարություններ				
Մասնակցային ԺՔԿ/ՄԻԿ մոտեցումների իրագործում և գնահատում	Կոմպետենցի թիվ 13. որոշումների կայացման գործընթացում աշակերտների ներգրավվման արժեվորում				
	Կոմպետենցիա թիվ 14. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշման մոդելավորում				
	Կոմպետենցիա թիվ 15. դասավանդման մեթոդների և աշակերտների ուսուցման վերանայում, մշտադիտարկում և արժեվորում				
Ընդհանուր եզրակացություն	Բոլոր կոմպետենցիաները				

Աղյուսակ Ա2. Ինքնաարժեվորման ռուբրիկա

10.3. Մասնագիտական զարգացման գործողությունների ծրագիր (ԺՔԿ/ ՄԻԿ ինքնաարժեվորման գործողությունների ծրագիր ուսուցիչների և վերապատրաստող ուսուցիչների համար)

Զարգացման ոլորտ	Գործողություններ	Ո՞վ	Ե՞րբ	Հաջողության չափանիշներ, որոնք ցույց են տալիս որ նպատակները իրականացվել են

Աղյուսակ Ա3. Ուսուցիչների մասնագիտական զարգացման գործողությունների ծրագրի ձև

11. Հղումներ և ռեսուրսներ

11.1. Ձեռնարկում մեջ բերված ռեսուրսները

Նախաբանում մեջ բերված ռեսուրսները

Backman, E. and Trafford, B., *Democratic governance of schools,* Council of Europe Publishing, Strasbourg, 2007.

Birzea, C. et al., *All European study on education for democratic citizenship policies,* Council of Europe Publishing, Strasbourg, 2004.

Birzea, C. et al., *Tool for quality assurance of education for democratic citizenship in schools,* Council of Europe Publishing, Council of Europe, 2005.

Council of Europe, *Education for Democratic Citizenship and Human Rights,* Programme of Activities (2006-2009), "Learning and living democracy for all", DGIV/EDU/CAHCIT (2006) 5, 14 March 2006.

Eurydice, *Citizenship education at school in Europe,* 2005.

Huddleston, T., *From student voice to shared responsibility: effective practice in democratic school governance in European schools,* Network of European Foundations and Council of Europe, 22 May 2007.

Huddleston, T. (ed.), *Tool on teacher training for education for democratic citizenship and human rights education,* Council of Europe, Strasbourg, 2005.

Naval, Print and Iriate, "Civic education in Spain: a critical review of policy", (Online) *Journal of Social Science Education*; and Osler and Starkey, chapter 10, 2005 (see below, Cluster A).

Ներածությունում մեջ բերված ռեսուրսները

Birzea, C. et al., *Tool for quality assurance of education for democratic citizenship in schools,* Council of Europe Publishing, Council of Europe, 2005.

Bolivar, *Non scholae sed vitae discimus: limites y problemas de la transversalidad* [Limits and problems of the cross-curricular approach] Revista de Education, 309, pp. 23-65, Enero-Abril 1995.

European Commission, Directorate General of Education and Culture, *Common European principles for teacher competences and qualifications,* presented at the European Testing Conference on Common European Principles for teacher competences and qualifications, Brussels, 20-21 June 2005.

Kerr, D., "Citizenship: local, national and international", in Gearon, L. (ed.), *Learning to teach citizenship in the secondary school,* London, 2003.

OECD, "The definition and selection of key competencies", DeSeCo publications, 2005, www.oecd.org/dataoecd/47/61/35070367.pdf.

ORE (Observatoire des Reformes en Education), *Revisiting the concept of competence as an organizing principle for programs of study: from competence to competent action,* ORE, Montreal, 2006.

Weinert, Franz E., *Concepts of competence,* Max Planck Institute for Psychological Research, Munich, 1999.

Ընդհանուր նկարագրում մեջ բերված ռեսուրսները

Crick, B., *Education for citizenship and the teaching of democracy in schools,* the Crick report, London: QCA, 1998.

Davies, I., "What subject knowledge is needed to teach citizenship education and how can it be promoted? A discussion document for consideration by initial teacher education tutors", 2003, Citized website: www.citized.info.

Habermas J., *The theory of communicative action,* Volume 1, Cambridge, UK: Polity Press, 1984.

Habermas, J., *The theory of communicative action,* Volume 2, Cambridge, UK: Polity Press, 1987.

Luke, A., Muspratt, S., & Freebody, P. (eds), *Constructing critical literacies: teaching and learning textual practice,* Cresskill NJ: Hampton Press, 1997.

McNamara, D., "Subject knowledge and its application: problems and possibilities for teacher educators", *Journal of Education for Teaching,* 17 (2), pp. 113-128, 1991.

Reece, P. and Blackall, D., "Making news: literacy for citizenship", http://makingnewstoday.uow.edu.au (March 2008).

Schulman, L., "Those who understand: knowledge growth in teaching", *Educational Researcher,* 15, pp. 4-14, 1986.

Ա խմբի հղումներ

Audigier, F., *Basic concepts and core competencies for education for democratic citizenship,* Council of Europe, 2000.

Banks, J.A., *Handbook of research on multicultural education,* Simon & Schuster/Macmillan, New York, 1995.

Davies, I., "What subject knowledge is needed to teach citizenship education and how can it be promoted? A discussion document for consideration by initial teacher education tutors", Citized website: www.citized.info, 2003.

McNamara, D., "Subject knowledge and its application: problems and possibilities for teacher educators", *Journal of Education for Teaching,* 17(2), 1991.

Naval, C., Print, M. and Veldhuis, R., "Education for democratic citizenship in the new Europe", *European Journal of Education,* 37(2), 2002.

Osler, A. and Starkey, H., "Education for democratic citizenship: a review of research, policy and practice 1995-2005", *Academic Review,* BERA, 2005.

QCA, *Education for citizenship and the teaching of democracy in schools* (the Crick report), QCA, London, 1998.

Shulman, L., "Those who understand: knowledge growth in teaching", *Educational Researcher,* 15, pp. 4-14, 1986.

Sliwka, E., Diedrick, M. and Hofer, M. (eds), Citizenship education - *Theory, research, practice,* Waxmann, Munster, 2006.

Torney-Purta, J. et al., *Citizenship and education in twenty-eight countries: civic knowledge and engagement at age fourteen,* International Association for the Evaluation of Educational Achievement (IEA), Amsterdam, 2001.

Wieviorka, M., The arena of racism, Sage, London, 1995.

Բ խմբի հղումներ

Backman, E. and Trafford, B., *Democratic governance of schools,* Council of Europe Publishing, Strasbourg, 2007.

Black, P. et al., *Assessment for learning: putting it into practice,* Open University Press, New York, 2003.

Cunningham. J., "Rights, responsibilities and school ethos", in Baglin Jones, E. and Jones, N. (eds), *Education for citizenship: ideas and perspectives for cross-curricular study,* Kogan Page, London,1992.

Devries, R. and Zan, B., *Moral classrooms, moral children: creating a constructivist atmosphere in early education,* Columbia University Press, New York, 1994.

Duerr, K., Spajic-Vrkas, V. and Ferreira Martins, I., *Strategies for learning democratic citizenship,* Council of Europe, 2000.

Goleman, D., *Emotional intelligence,* Bantam Books, New York, 1995.

QCA, *Education for citizenship and the teaching of democracy in schools* (the Crick report), QCA, London, 1998.

Rogers, B., *The language of discipline: a practical approach to effective classroom management,* Northcote House Publishers, Plymouth, 1994.

Գ խմբի հղումներ

Ajegbo, K., "Curriculum review: diversity and citizenship", DfES, London, 2007.

Billig, S. and Shelley, H., *Research on K-12 school-based service-learning. The evidence builds.* PhiDelta Kappan, Science Education, Bloomington, in a study sponsored by the Carnegie Corporation of New York and CIRCLE (Center for Information and Research on Civic Learning and Engagement), 2000.

Citizenship Foundation, *Education for citizenship, diversity and race equality: a practical guide,* Citizenship Foundation, London, 2003.

Council of Europe, "Learning and living democracy. Concept paper", Ad hoc Committee of Experts for the European Year of Citizenship through Education, CAHCIT, Council of Europe, Strasbourg, 2005.

Dewey, J., *Democracy and education,* NY Free Press, New York (1916) 1966. Also available at Google books: http://books.google.com.

Donnelly, C., "What price harmony? Teachers' methods of delivering an ethos of tolerance and respect for diversity in an integrated school in Northern Ireland", *Educational Research,* Vol. 46 (1), 2004.

Giroux, H., *Ideology culture and the process of schooling,* Temple University Press, Philadelphia/ Falmer Press, London, 1981.

Gearon, L., "NGOs and education: some tentative considerations", *Reflecting Education,* 2 October 2006.

Gowran, S., Opening doors: *school and community partnership in poverty awareness and social education initiatives,* draft guidelines for partnership development, Curriculum Development Unit, CDVEC and Combat Poverty Agency, Dublin, 2004.

Hart, R., *Children's participation: the theory and practice of involving young citizens in community development and environmental care,* Earthscan, London, 1997.

Held, D., "Democracy and the new international order", in Achibugi, D. and Held, D. (eds), *Cosmopolitan democracy,* Polity Press, Cambridge, 1995.

Osler, A., "The Crick report: difference, equality and racial justice", *Curriculum Journal,* 11(1), 2000.

Osler, A. and Starkey, H., "Learning for cosmopolitan citizenship: theoretical debates and young people's experiences", *Educational Review,* 55 (3),2003.

QCA, *Play your part: post-16 citizenship,* QCA, London, 2004.

Zacharakis-Jutz, J. and Flora, J., "Issues and experiences using participatory research to strengthen social capital in community development", in Armstrong, P., Millerm, N. and Zukas, M. (eds), *Crossing borders, breaking boundaries,* University of London, 1997.

Դ խմբի հղումներ

Backman, E. and Trafford, B., *Democratic governance of schools,* Council of Europe Publishing, Strasbourg, 2007.

Bandura, A., *Social foundations of thought and action: a social cognitive theory,* Prentice-Hall, Englewood Cliffs, NJ, 1986.

Barell, J., *Teaching for thoughtfulness. Classroom strategies to enhance intellectual development,* Longman, London, 1991.

Brookfield, S.D., *Becoming a critically reflective teacher,* Jossey-Bass, San Francisco, 1995.

Goodlad, J., *A place called school,* McGraw-Hill, New York, 1984. Available at Google books: http://books.google.com.

Huddleston, T. (ed.), *Tool on teacher training for education for democratic citizenship and human rights education,* Council of Europe, Strasbourg, 2005.

Huddleston, T. and Kerr, D. (eds), *Making sense of citizenship: a continuing professional development handbook,* Hodder Education, London, 2006.

Rowe, D., *The business of school councils,* Citizenship Foundation, London, 2003.

Zeichner, K., “The reflective practitioner”, in Reason, P. and Bradbury, H. (eds), *Handbook of action research: participative inquiry and practice,* Sage, London, 2001.

Հավելվածում մեջ բերված ռեսուրսները

Reiman, A.J., & Thies-Sprinthall, L., *Mentoring and supervision for teacher development,* Addison- Wesley LongmanReiman, New York, 1998.

11.2. Other resources

Resources for assessment and evaluation

Black, P. et al., “The nature and value of assessment for learning”, 2003, www.umds.ac.uk/content/1/c4/73/57/formative.pdf.

Jerome, L., “Assessment in citizenship education”, 2003, www.citized.info/pdf/commarticles/Lee_Jerome_Assessment_workshop.pdf.

Klenowski, V., *Developing portfolios for learning and assessment:* processes and principles, RoutledgeFalmer, London, 2002.

QCA, Assessing citizenship, HMSO, London, 2006.

Վիճահարույց հարցերի շուրջ ռեսուրսները

Citized, “Conference report on the teaching of controversial issues”, 2006, www.citized.info/pdf/conferences/31_03_06report.pdf.

Citizenship Foundation, *Teaching about Iraq and other controversial issues,* 2003, www.citizenshipfoundation.org.uk/main/resource.php?s124

Claire, H. and Holden, C. (eds), *The challenge of teaching controversial issues,* Trentham Books, Oakhill, 2007.

Gollob, R. and Krapf, P., *Living in democracy - lesson plans for lower secondary level* (EDC/HRE Volume III), Council of Europe, Strasbourg, 2008.

OSCE, “Toledo Guiding Principles - Teaching about religions and beliefs”, 2008. www.osce.org/publications/odihr/2007/11/28314_993_en.pdf.

Սույն հրատարակության մեջ ներկայացված են այն հիմնական կոմպետենցիաները, որոնք անհրաժեշտ են ուսուցիչներին գործնականում կիրառելու ժողովրդավարական քաղաքացիությունը և մարդու իրավունքները դասարանում, դպրոցում և առավել լայն համայնքում: Այն նախատեսված է բոլոր ուսուցիչների համար՝ ոչ միայն մասնագետների, այլև բոլոր առարկաների գծով ուսուցիչների. այն նաև նախատեսված է բարձրագույն կրթության հաստատություններում, ինչպես նաև այլուր աշխատող ուսուցիչների համար, այդ թվում՝ նախնական վերապատրաստման և առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստման համար:

Ոտ 15 կոմպետենցիաներ են ներկայացված և խմբավորված են չորս խմբերում: Կոմպետենցիաների յուրաքանչյուր խումբ համապատասխանում է աշխատության մեկ բաժնի, որտեղ տվյալ կոմպետենցիաները մանրամասն նկարագրված են և բերված են օրինակներ: Ընթերցողը կարող է գտնել աստիճանական գծապատկերներ և առաջարկվող զարգացման աշխատանքներ յուրաքանչյուր կոմպետենցիայի համար. այս գծապատկերները, որոնք ցույց են տալիս կենտրոնացումը, զարգացումը, հաստատումը և կատարելագործումը, նպատակ ունեն օգնել ուսուցիչներին և ուսուցանող ուսուցիչներին որոշելու, թե որ մակարդակին է համապատասխանում իրենց մասնագիտական գործելակերպը, և դրանով սահմանելու, թե առաջխաղացման որ կողմերին իրենք պետք է ուշադրություն դարձնեն:

Partnership for Good Governance

Education for Democratic Citizenship and Human Rights

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Եվրոպական միությունը տնտեսական և քաղաքական եզակի գործընկերություն է եվրոպական 28 ժողովրդավարական երկրների միջև: Միության նպատակն է ապահովել խաղաղություն, բարգավաճում և ազատություն իր տարածքում բնակվող 500 միլիոն բնակչության համար, ովքեր ցանկանում են ապրել ավելի արդար և ապահով աշխարհում: Այս նպատակների իրագործման նպատակով ԵՄ երկրները ստեղծել են մարմիններ, որոնք կառավարում են ԵՄ-ն և հաստատում վերջինիս օրենսդրությունը: Եվրոպական միության հիմնական կառույցներն են՝ Եվրոպական խորհրդարանը (որն ապահովում է Եվրոպայի ժողովուրդների ներկայացուցչությունը), Եվրոպական միության խորհուրդը (որն ապահովում է անդամ երկրների կառավարությունների ներկայացուցչությունը) և Եվրոպական հանձնաժողովը (որն իրականացնում է ԵՄ ընդհանուր շահերի պաշտպանությունը):

http://europa.eu

Prems 145817 – HYE